

Լ. ԿԱՐԱԳՅՈՋՅԱՆ
Գ. ՏԵՐ-ԳՐԻԳՈՐՅԱՆ



ԱՅՍ ԱՍՏՂԵՐԸ
ՄԵՐՆ ԵՆ

ՀԱՅԴԵՏՀՐԱՏ

891.99

14927

4-29 Կարագոյան, Լ.

Տեր - Գրիգորյան, Գ.

Այս արդիւնք Տերն Էն. 3ռ.

891.99

4-29


Լ. ԿԱՐԱԳՅՈՋՅԱՆ, Գ. ՏԵՐ-ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՍՏՈՒԳՎԱԾ Է 1961 թ.

ԱՅՍ ԱՍՏՂԵՐԸ ՄԵՐՆ ԵՆ

14.927

II
A 28234



ՊԵՏՂՐԱՏ

ՆՐԵՎԱՆ

1949

Л. Карагёзян, Г. Төр-Григорян

ЭТИ ЗВЁЗДЫ—НАШИ

(На армянском языке)

Армгиз, Ереван, 1949

ԱՅՍ ԱՍՏՂԵՐԸ ՄԵՐՆ ԵՆ

ՊԻԵՍ 4 ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՄԲ (6 պատկեր)

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

ՆԱՐԻՆՅԱՆ ՀԱՅԿԱԶ—պրոֆեսոր, ամբիոնի վարիչ, 50 տարեկան:

ՄԻՐԱՆ ՄԻԽԱՅԼՈՎՆԱ—նրա կինը, 45 տարեկան:

ՄԱՐՈ—նրանց աղջիկը, ուսանողուհի, 23 տարեկան:

ԱԶԱՏՅԱՆ ԱՐԱՄ—Մարքսիզմ-լենինիզմի հիմունքների ամբիոնի վարիչ և ինստիտուտի պարտըյուրոյի քարտուղար:

ԱԹԱՆԵՍՅԱՆ ԱՐՍԵՆ—ինստիտուտի պրոֆեսոր, 45 տարեկան:

ԾԱՌՈՒԿՅԱՆ ԱՐԳԱՐ—պրոֆեսոր, 60 տարեկան:

ԱԼԻՄՅԱՆ ԱՐՏԱՎԱԶԴ—Շամլուղի պղնձահանքերի անվանի հոգատող, 45 տարեկան:

ԱԼԻՄՅԱՆ ՌՈՒԲԵՆ—նրա որդին, ուսանող:

ՄԱՅԱԿ ԱՄԻ—Արտավազի Ալիմյանի հայրը:

ԻՍԱՀԱԿՅԱՆ ՀՐԱՅՐ

ՍԱՐՈՅԱՆ ՇԱՀԵՆ

ՆՎԱՐԴ

} ինստիտուտի ուսանողներ:

ՄԱՐԱՆՋՅԱՆ ՄԱՐՏԻՐՈՍ—հայրենադարձ ինժեներ, 50 տարեկան:

ԱՐՄԱՆՈՒՇ—նրա աղջիկը, 18 տարեկան:

ՌՈՒՄՅԱՆՅԵՎ—պրոֆեսոր:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՆԱԽԱԳԱՀ

ՔԱՐՏՈՒՂԱՐ

ՌԻՍԱՆՈՂՆԵՐ

Գործողությունը կատարվում է 1948 թվին:

ԱՌԱՋԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Առաջին պատկեր

Աջից՝ ուսանողական հանճարակալության երկնաշխարհի շենք, որի առջև գրե-
նվում է մի փոքրիկ պուրակ, ուր կան սեղան և նստարաններ: Շահենը նստած է
առաջին հարկի պատշգամբի հաղաճարժի վրա և կիրառը ձեռքին՝ նվագում է ու
երգում: Պուրակում, սեղանի մոտ, նստած է Հրայրը և պարապում է:

ՇԱՀԵՆ.— Էհ, էհ, էհ:

ՀՐԱՅՐ.— Դե՛ լավ, մի հուռահատվիր, Շահե՛ն:

ՇԱՀԵՆ.— Էհ, միայն դու ես ինձ հասկանում, իմ աղնիկ
ընկեր: (Շարունակում է երգել. երկրորդ հարկի պատշգամբի վրա
հայտնվում է Ռուբենը. նշաններ է անում Հրայրին, որը անցնում
է բեմի խորքը և լուռ պայմանավորվում է Ռուբենի հետ):

ՀՐԱՅՐ.— Նա է:

(Վերեից Ռուբենը նետում է կանացի մի բաշկինակ: Շահենն
անմիջապես բռնում է այն):

ՇԱՀԵՆ.— Նա է, հա այստեղ է:

ՀՐԱՅՐ.— Աստված լսեց ձայնդ, Շահե՛ն:

ՇԱՀԵՆ.— (Շշուկով): Դե՛ դուրսըլացիր: (Հրայրը մտնում է ներս:
Անմիջապես պատշգամբում երևում են Հրայրը և Ռուբենը՝ ձեռքնե-
րին կանացի զգեստ: Նկատելով այդ և կարծելով, թե պատշգամ-
բում կանգնածը նվարդն է, Շահենը դիմում է նրան):

ՇԱՀԵՆ.— Դու այստե՞ղ ես, հրեշտա՛կ իմ, ինձ այսքան մոտ,
ընդամենը երեք դժայի՛ն մետր... Ո՛չ, ո՛չ, ի՛նչ եմ ասում, դա երեք
մետր չէ, այլ երեք անդու՛նդ, մի անծայրածիր օվկիանոս, որ
անհնար է ինձ անցնել: Ինչ որ ուզում էիր՝ ես լուրջն արի...
Նախ երեք, հետո չորս... հուլյնիսկ քեզ համար մի հատիկ ռո-
բազանց էլ ստացա... Յավում եմ, որ ավելի բարձր թվանշան
չկա, թե չէ այն էլ կփռելի քո անդու՛թ ոտքերի տակ (պառուզա):
Հիմա արդեն կարո՞ղ եմ հուսալ... Այո՞... Ինչո՞ւ ես լռել, աղավ-
նյա՛կս, դո՛նե մի ձայն հանիր:

(Հեռանում է պատշգամբից: Յանկապատի մոտ երևում է նր-
վարդը: Հրաշքը և մուրեքներ նրան նշան են անում՝ ակնարկելով
Շահենին: Ընդհանուր ծիծաղը սրափեցնում է Շահենին):

ՇԱՀԵՆ.—(Նվարդին): Դու այստե՞ղ ես... դեռնի վրա՞:

ՆՎԱՐԴ.—Իսկ ուրիշ ո՞րտեղ կարող էի լինել:

ՇԱՀԵՆ.—Հապա թաշկինա՞կը:

ՆՎԱՐԴ.—Իմ թաշկինա՞կը, ո՞վ տվեց քեզ:

ՇԱՀԵՆ.—(Ռուբենին և Հրաշքին) Ա՛ա, Յազոնե՛ր, հասկացա,
դուք ուզում էիք, որ ես խեղդեի իմ Դեզդեմոնային:

ՀՐԱՅՐ.—(Պատշգամբի վրա) Դե լավ, հիմա է՛լ չենք խանդա-
րի (ցույց են տալիս, քե մտնում են ներս):

ՇԱՀԵՆ.—(Մեկուսի) Հիմա ես ի՞նչ պետք է ասեմ. (բարձր)
Նվա՛րդ...

ՆՎԱՐԴ.—Ի՞նչ:

ՇԱՀԵՆ.—Նվա՛րդ...

ՆՎԱՐԴ.—Քանի՞ անգամ պետք է ասես, լսում եմ:

ՇԱՀԵՆ.—Ես... ես ուզում էի ասել...

ՆՎԱՐԴ.—Ի՞նչ:

ՇԱՀԵՆ.—Ո՛չ, ո՛չ, ես հիմա երգում էի. այնպես լավ էք, և
դիտես ինչի՞ մասին... թե ինչպես անդուժ աղջիկը մերժում է
տղայի սերը:

ՆՎԱՐԴ.—(Կեղծ խստությամբ) Շահե՛ն, ես քեզ արգելում եմ
սիրո մասին խոսել:

ՇԱՀԵՆ.—Իսկ երդե՞լ:

ՆՎԱՐԴ.—Ո՛չ էլ երդել:

ՇԱՀԵՆ.—Հապա ի՞նչ անեմ:

ՆՎԱՐԴ.—Ոչինչ, մի փոքր նրբազգաց կղիր:

ՇԱՀԵՆ.—Ես նրբակերտ եմ, ինչպես փյունիկյան արմավե-
նին:

ՆՎԱՐԴ.—Ինչ որ չեմ տեսնում: (Հանրակացարանին է մոտե-
նում Մարոն: Նրա ձեռքին խաղաղնդակ կա):

ՄԱՐՈ.—Հրացանակիրները տա՞նն են:

ՇԱՀԵՆ.—Մեկն այստեղ է (Մարոն դառնում է):

ՄԱՐՈ.—Դուք այստե՞ք եք: (Մոտենում է Շահենին և նր-
վարդին: Ռուբենը դուրս է գալիս պատշգամբ):

ՇԱՀԵՆ.—Աստված քո ձայնն էլ լսեց, Ռուբե՛ն.

ՌՌԻԲԵՆ.—Բա՛րե, Մա՛րո, նե՛րս եկ:

ՄԱՐՈ.—Ավելի լավ է դու դաս: (Ռուբենը մտնում է ներս) Դե,
ե՞րբ ես սկսում, Շահե՛ն:

ՇԱՀԵՆ.—Ի՞նչը:

ՄԱՐՈ.—Մոռացե՞լ ես, զեկուցումը:

ՇԱՀԵՆ.—Հա, բայց ախր չեմ կարող:

ՄԱՐՈ.—Կարող ես:

ՇԱՀԵՆ.—Դժվար թե ինձնից լավ զեկուցող դուրս դա, այն
էլ այնպիսի լուրջ թեմայի մասին, ինչպիսին է բանվորական
ռեուլուցիոն շարժումն Անդրկովկասում:

ՆՎԱՐԴ.—Շատ էլ լավ կլինի:

ՄԱՐՈ.—(Շահենին) Վերջապես դա կոմերիտական հանձնա-
բարություն է:

ՇԱՀԵՆ.—Դե որ տուժեմ ես, կիտրձեմ, կաշխատեմ:

ՄԱՐՈ.—Այ՛, դա հասկանում եմ... (Թիկնում է նստարանին):
Լավ երեկո է:

ՆՎԱՐԴ.—Եվ ինչքա՛ն այսպիսի երեկոներ ենք անցկացրել
այստեղ:

ՄԱՐՈ.—Ինչքա՛ն ենք ուրախացել:

ՆՎԱՐԴ.—Եվ ինչքա՛ն ենք երգել մեր սիրած երգը (երգում
են):

(Հանրակացարանից դուրս են գալիս Հրայրը, Ռուբենը և քս-
կրսում գնդակախաղը):

ՇԱՀԵՆ.—Եվ այսպես, վերջացրինք ինստիտուտը:

ՆՎԱՐԴ.—Ոչ, դեռ չենք վերջացրել, հապա Շամլո՞ւղը:

ՇԱՀԵՆ.—Այո, նախադիպլոմային սրակտիկան... Լավ, մի եր-
կու ամիս էլ այնտեղ հաշվենք:

ՌՌԻԲԵՆ.—Պրակտիկան չէ հարցը, այլ դիպլոմի պաշտպա-
նությունը:

ՇԱՀԵՆ.—Պա՛հ, դու էլ բա՛ն ասացիր, հինգ տարի սովորողը
մի դիպլոմ էլ չկարողանա պաշտպանել. ինստիտուտի արխի-
վում ինչքա՛ն տես հին դիպլոմային թեմաներ կան:

ՀՐԱՅՐ.—Սխալվում ես, Շահե՛ն, դիպլոմը լուրջ քննություն է:

ՄԱՐՈ.—Այն էլ ինքնուրույն թեմայով: (Գալիս է Ազատյա-
նը, ուսանողները նրան չեն տեսնում):

ՀՐԱՅՐ.—Այդ էլ քիչ է: Մենք պետք է տանք հետաքրքիր, համարձակ նախադիծ... Նորը պետք է խոսի նրա մեջ:

ՌՈՒԲԵՆ.—Սկսվե՛ց... Որքան սիրում ես դու, Հրա՛յր, ձեռքդ մեկնել անհատ աստղերին:

ԱԶԱՏՅԱՆ.—(Բռնելով իրեն նետված գնդակը) Ինձ թվում է, թե որոշ առաժներ մեզ համար արդեն հնացել են:

ՄԱՐՈ.—Ա՛ա, Արա՛մ Ներսիսովիչ:

ԱԶԱՏՅԱՆ.—Բարե ձեզ, ընկերներ:

ՀՐԱՅՐ.—Դուք միշտ ժամանակին եք հասնում, Արա՛մ Ներսիսովիչ:

ԱԶԱՏՅԱՆ.—(Տալով գնդակը) Իսկապես, Ռուբե՛ն, դուցե արդեն եկել է ժամանակը, երբ պետք է երկնքից աստղեր վայր բերել:

ՌՈՒԲԵՆ.—Բայց ի՞նչպես:

ՀՐԱՅՐ.—Անհրաժեշտ է փորձել... Իսկ դրա համար հարկավոր է խիղախել, ունենալ համարձակություն և...

ՆՎԱՐԴ.—Եվ մեծ երեակայություն:

ՌՈՒԲԵՆ.—(Հեգնանքով) Երեակայություն... Մո պատրաստվում եմ դառնալու ինժեներ և ոչ թե նկարիչ կամ պոետ, իսկ դուք ստույգ հաշվումների փոխարեն հրամցնում եք ինչ-որ պատրանքներ:

ՀՐԱՅՐ.—Իսկ ո՞ւմն են պետք անկիրք ինժեներները:

ՄԱՐՈ.—Մեր մասնագիտության մեջ էլ պետք է ուսմանսիրտ որոնել:

ՆՎԱՐԴ.—Նույնիսկ դիպլոմային նախադիծում, ա՛յ թե ինչի մասին պետք է երազել:

ՌՈՒԲԵՆ.—Հիմա էլ երազանքներ:

ՇԱՀԵՆ.—Ա՛յ, օրինակ, ես. միշտ երազում եմ հինդ, բայց երեքից ավելի չեմ ստանում:

ԱԶԱՏՅԱՆ.—Իսկ երազել պետք է, Ռուբե՛ն:

ՌՈՒԲԵՆ.—Ճշմարիտն ասած, Արա՛մ Ներսիսովիչ, մեր գործում ես դրա կարիքը չեմ գտնում:

ԱԶԱՏՅԱՆ.—Իդուր (Կատակով) դրա համար էլ ոմանք դժգոհում են քեզնից: (Մարոն քիչ շփոթվում է): Մի՞թե դու կարծում ես, որ երազանքը հատուկ է միայն քանաստեղծներին ու նկարիչներին: Ապա մտաբերիր մեր առաջնորդների կյանքի ուղին... Տեսնո՞ւմ ես, նրանց մոտ դիտությունը ինչպիսի՞ հստակու-

թյամբ է զուգակցվում ուսուցիչին սոմանտիկայի հետ: Մի՞թե Մեծ Հոկտեմբերը Լենինի երազանքը չէր դեռևս 1905 թվի արշալույսին. մի՞թե Ստալինի երազանքները չէին մեր այսօրվա հոյակապ հաղթանակները: Նրանք լավ դիտեն իրականացնել իրենց նվիրական իդեալը:

ՌՌԻԲԵՆ.— Դե նրանք մեծ մարդիկ են:

ԱԶԱՏՅԱՆ.— Հենց դրա համար էլ ամեն ինչ պետք է նրանցից սովորել:

ՆՎԱՐԴ.— (Շանենին) Լսո՞ւմ ես:

ԱԶԱՏՅԱՆ.— Բայց ինչի՞ց սկսվեց ձեր վեճը:

ՇԱՀԵՆ.— Ի՞նչ վեճ կարող է լինել մեր մեջ... մտածում էինք, թե ինչ նախադեմք:

ԱԶԱՏՅԱՆ.— Եվ ի՞նչ որոշեցիք:

ՆՎԱՐԴ.— Ես և Մարոն արդեն ընտրել ենք դիպլոմային թեմա: Ամբիոնն այսօր հաստատեց:

ԱԶԱՏՅԱՆ.— Հետաքրքիր է:

ՄԱՐՈ.— Թեք հանքախորշերի շահագործումը...

ԱԶԱՏՅԱՆ.— Ողջունում եմ ձեր որոշումը, լավ եք մտածել: Դե, իսկ դուք ի՞նչ եք ուղղում անել, տղաներ:

ՇԱՀԵՆ.— Ես մի բան կշնարեմ. այ, մեր այս երկու դերադանցիկներին դործն է դժվար:

ՌՌԻԲԵՆ.— Լավ թեմա գտնելն այնքան էլ հեշտ չէ, ես դեռ որոնում եմ:

ԱԶԱՏՅԱՆ.— Իսկ դու, Հրայր:

ՀՐԱՅՐ.— Ես այնուամենայնիվ ուղղում եմ նախադեմ պղծն՝ ձի արտահանման սարքավորումը... դեռ տեխնոլոգիայի մեթոդով:

ՄԱՐՈ.— Դարձյալ քոնն ես պնդում, համա՛ռ տղա:

ՆՎԱՐԴ.— Իսկ դու համոզված ես, որ կստացվի:

ԱԶԱՏՅԱՆ.— (Հրայրին) Դե, եթե այդպես համոզված ես, նախադեմ, կարեորդ համոզմունքն է... Բայց հետաքրքիր է, ի՞նչն է ամենից ավելի քեզ հրապուրում այդ մտահղացման մեջ:

ՀՐԱՅՐ.— Կաշխատեմ:

ՇԱՀԵՆ.— Աշխատիր, աշխատիր, Հրայր. դու միշտ առաջիններից ես եղել: Ճիշտ է ասված, թե մեծ նավը մեծ ծով է պահանջում և ընդհանրապես:

ՌՌԻԲԵՆ.— Բայց նավը կարող է և խորտակվել: Չէ՞ որ պրո-

ֆետոր Աթանեսյանը դեմ է դրան:

ՀՐԱՅՐ.— Դա ինձ քիչ է անհանդստացնում... Միայն թե
ստացվի:

ՌՈՒԲԵՆ.— Ի՞նչը:

ՀՐԱՅՐ.— Մարդու աշխատանքը դյուրացնելու, ես կասեի, մեծ
հնարավորությունները... (Ոգեվորվելով): Ա՛յ, ես մտածում եմ,
ինչո՞ւ պետք է հանքավորի աշխատանքը ավելի ծանր լինի, քան
խմբ, ձերը... Մի՞թե չի կարելի այնպես անել, որ նա աշխա-
տանքի պահին չկտրվի բնությունից, արևի այս ճառագայթ-
ներից, որ դուրդուրում են մեզ հիմա: (Այդ պահին, կարծես
նառագայթների միջից, դուրս է գալիս Արմանուշը: Նա մի պահ
շփոթվում է):

ԱՐՄԱՆՈՒՇ.— (Քաշվելով) Բարև ձեզ:

ՄԱՐՈ.— Ա՛, Արմանու՛շ: Մենա՞նի ես:

ԱՐՄԱՆՈՒՇ.— Ոչ, հայրս ալ այստեղ է:

ՄԱՐՈ.— (Խմբին) Ծանոթացե՛ք մեր նոր, հայրենադարձ ըն-
կերուհու հետ:

ՆՎԱՐԴ.— (Արմանուշին) Ծանոթացե՛ք մեր դասախոսի հետ:

ԱՐՄԱՆՈՒՇ.— Շատ ուրախ եմ (Սեղմելով ձեռքը): Մարան-
ջյան: Թերևս ես ձեզի խանդարեցի, դուք հետաքրքիր բանի մը
շուրջը կդրուցեիք:

ՄԱՐԱՆՋՅԱՆԻ Չայեր բեմի ետևից— Ոչ, ոչ... միտք նա-
րինյան...

ԱՐՄԱՆՈՒՇ.— Ահա և հայրս:

ՄԱՐԱՆՋՅԱՆ.— Դուք չգիտե՞ք, բնավ չգիտե՞ք ինչ ըսել է
Ամերիկա: (Գալիս են Մարանջյանը և Նարինյանը: Դիմելով իր
աղջկան) զու՛ն արդեն ծանոթներ ես վաստակած, աղջիկա:

ՆԱՐԻՆՅԱՆ.— (Մարանջյանին) Հիմա ես ձեզ կծանոթացնեմ
բոլորի հետ (Դիմելով խմբին): Մեր արժանավոր հայրենակից,
նշանավոր գիտնական Մարտիրոս Մարանջյան, իր աղջկա հետ
Ամերիկայից վերադարձել է հայրենիք: Խնդրեմ, դուցենա Աղա-
սյան, մարքսիզմ-լենինիզմի հիմունքների ամբիոնի վարիչ և
ինստիտուտի կոմունիստական կազմակերպության քարտուղարը:

ՄԱՐԱՆՋՅԱՆ.— Օ՛, այդ անչափ հետաքրքիր է, մեծապես
ուրախ եմ, միտք Աղասյան (ծանոթանում են):

ԱՐՄԱՆՈՒՇ.— Հայրիկ, ոչ թե միտք, այլ ընկեր:

ՆԱՐԻՆՅԱՆ.— (Յույց տալով ուսանողուհիներին) Խնդրեմ, Այո
իմ աղջիկը՝ Մարոն:

ՄԱՐԱՆՋՅԱՆ.— Օ՛, ի՞նչ աղվորիկ աղջիկ է: (Մարոյին) Հու-
սամ, պիտի բարեկամանաք Արմանուշիս հետ:

ՄԱՐՈ.— Արդեն բարեկամացել ենք:

ՌՌԻԲԵՆ.— Դուք այն հայտնի Մարանջյանն եք, որ դեկա-
մարում էր «Վեստ Կոպյե» պղնձի կոմպանիայի փորձնական
լաբորատորիան:

ՄԱՐԱՆՋՅԱՆ.— Այո, այո, երիցս նդովյալ ըլլա այդ կոմպա-
նիան, չեմ ուզեր անոր մասին որեւէ բան հիշել, մանավանդ հոս:

ՇԱՀԵՆ.— (Հանդիսավոր կերպով՝ Մարանջյանին) Թույլ տվե՛ք
ներկայանալու՝ Շահեն Խաչատուրովիչ Սարոյան:

ՀՐԱՅՐ.— Հայտնի երգիչ, դերասան, ֆուտբոլիստ...

ՌՌԻԲԵՆ.— Ինստիտուտի ամենահետաքրքիր ուսանողը:

ՄԱՐԱՆՋՅԱՆ.— Ի՞նչ սքանչելի տղաներ են:

ԱՐՄԱՆՈՒՇ.— (Նայելով հանրակացարանի կողմը) Աս ալ ձեր
ինստիտուտն է:

ՆՎԱՐԴ.— Ոչ, այստեղ մենք միայն բնակվում ենք:

ԱՐՄԱՆՈՒՇ.— Դասընկերներով մեկտեղ կբնակվիք... Ի՞նչ
չավ է:

ՄԱՐՈ.— (Արմանուշին) Ուղի՞ս՝ եք զնաք ներս, տեսե՛ք թե
ի՞նչպե՞ս ենք ապրում:

ԱՐՄԱՆՈՒՇ.— Շատ կուզեմ:

ՆՎԱՐԴ.— Դե, Շահեն, առաջնորդի՛ր մեզ:

(Շահենը վերցնում է անբաժան կիթառը և աղջիկների ու-
ղեկցությամբ, երգելով մտնում հանրակացարան):

ՄԱՐԱՆՋՅԱՆ.— (Նրանց ետևից) Ի՞նչ կենսուբախ երիտա-
սարդներ են: (Ազատյանին) Ըսե՛ք խնդրեմ, մի՛սոր, ընկե՛ր Ազա-
տյան, կհաճե՞ք ինձի պատիկ ինտերվյու մը տալ:

ԱԶԱՏՅԱՆ.— Խնդրեմ:

ՄԱՐԱՆՋՅԱՆ.— Կուզեմ իմանալ ի՞նչ կուսույցանե՞ք դուք
ձեր ուսանողներուն:

ԱԶԱՏՅԱՆ.— Ի՞նչ կուսույցանեմ... Ինչպե՞ս հարստանալ:

ՄԱՐԱՆՋՅԱՆ.— Օ՛, ծ, բիզնես... ինչ կլսեմ, մի՞թե ես Ամե-
րիկայում եմ:

ՆԱՐԻՆՅԱՆ.— Ամերիկայում չկա այդ հարստությունը:

ՄԱՐԱՆՁՅԱՆ.— Ինչպե՞ս:

ԱԶԱՏՅԱՆ.— Խոսքս դուարի մասին չէ, հարգելի պրոֆեսոր, այլ խակական հարստության... Մեր անսպառ զանձարանը՝ մարքսիզմ-լենինիզմի դադափարներն են... Ես ուսանողներին սովորեցնում եմ այդ հարստությունը, բրախդի նրանք անձնավիրաբար ծառային հայրենիքին:

ՄԱՐԱՆՁՅԱՆ.— Ա՜ն, կարծեմ հասկցա... Ուրեմն կոմունիզմին համար, այնպես չէ:

ԱԶԱՏՅԱՆ.— Անկասկած:

ՄԱՐԱՆՁՅԱՆ.— Օլ բնյթ, բայց ասոր համար պետք է առաջ մղել, ճ, շատ առաջ մղել դիտությունը:

ԱԶԱՏՅԱՆ.— Մենք այդպես էլ վարվում ենք:

ՄԱՐԱՆՁՅԱՆ.— Կուղեք լսել՝ հասարակական դիտությունները:

ԱԶԱՏՅԱՆ.— Ինչո՞ւ, նաև տեխնիկականը:

ՄԱՐԱՆՁՅԱՆ.— Օ՛, ոչ, դա արդեն անհնար է:

ԱԶԱՏՅԱՆ.— Իսկ Հրայր Իսահակյանը ձեզ կապացուցի հակառակը. (Հրայրին) ապա, Հրայր, շարունակիր պատմությունդ:

ՀՐԱՅՐ.— (Քիչ շփոթված) Արամ Ներսիսովիչ...

ՆԱՐԻՆՅԱՆ.— Ապա, ապա, Հրայր, հետաքրքիր է:

ՀՐԱՅՐ.— Վերջերս ես կարդում էի մոտ երեսուն հինգ տարի առաջ գրված այն հռչակավոր հոդվածը, ուր հեղինակը մարդաբանաբար դուշակում էր, որ ածխի ստորերկրյա դադիֆիկացիայի այնքան հայտնադորձած եղանակը պետք է տեխնիկական հեղաշրջում առաջացնի աշխարհում:

ՄԱՐԱՆՁՅԱՆ.— Այո, այո, այդպես ալ եղավ:

ՀՐԱՅՐ.— Ես համիշտակվեցի այդ մտքով: Ի վերջո, երկար մտորումներից հետո համոզվեցի, որ ածխի ստորերկրյա դադիֆիկացման այդ միտքը կարելի է տարածել և... պղնձի վրա:

ՄԱՐԱՆՁՅԱՆ.— Պղնձի՞... Ինչպե՞ս:

ՀՐԱՅՐ.— Հիմա կասեմ: Այնտեղ, ուր պղնձահանք կա, երկրի մակերեսից փորվում են ուղղաձիգ հորատանցքեր և հատուկ թթվուտի ու էլեկտրոդի միջոցով ստացվում է մաքուր պղինձ:

ՄԱՐԱՆՁՅԱՆ.— Ավելի մանրամասն, աղան:

ԱԶԱՏՅԱՆ.— Մանրամասնությունները մշակվում են:

ՄԱՐԱՆՁՅԱՆ.— Կեցի՛ր, կեցի՛ր, մանչո, ատ չափազանց հե-

տաքքքիր է... Ուրեմն մաքուր պղինձ երկրի մակերեսից հա-
տուկ թթվուտի միջոցով... հեռաքքքիր է, շմտ հեռաքքքիր է:

ՆԱՐԻՆՅԱՆ. — (Գոհունակությամբ) Դուք դեռ շատ հեռաքքք-
քիր նորություններ կլսեք այստեղ:

ՄԱՐԱՆՋՅԱՆ. — Հարկավ, հարկավ. (Հրայրին): Բայց ըսե տե-
սեմ մանչս, ո՞վ էր հեղինակն այն դրքի, որ քեզի աշխատեց թե-
վավորեց:

ՀՐԱՅՐ. — Լենինը:

ՄԱՐԱՆՋՅԱՆ. — Լենինը:

ԱԶԱՏՅԱՆ. — Այո, այո:

ՄԱՐԱՆՋՅԱՆ. — Օ՛, հոյակապ բան է, ընկերներ, սաչափ գե-
ղեցիկ օգտվիլ մեծ Լենինի դադափարներեն:

ՌՈՒԲԵՆ. — Բայց չէ՞ որ Լենինի այդ հոգվածը վերարևելում
է միայն ածխին և ոչ պղինձին...

ՆԱՐԻՆՅԱՆ. — Ինձ թվում է սկզբունքը նույնն է:

ՄԱՐԱՆՋՅԱՆ. — Այո, այո, ես կտեսնեմ, ընկեր Աղասյան, որ
դուք մեծ հարստություն կմատուցեք ձեր ուսանողներուն: (Գա-
լիս են Արանեսյանն ու Մառուկյանը):

ԾԱՌՈՒԿՅԱՆ. — (Մարանջյանին) Դուք դեռ այստեղ եք, կողմե-
ղա, ուրախ եմ, անտարակույս ուրախ եմ:

ՄԱՐԱՆՋՅԱՆ. — Օ՛, ընկեր Մառուկյան, դուք չդիտեք, թե
ինչպիսի ուսանողներ ունեք: Իսկ ի՞նչ պետք է ընե ասկե ետ-
քը ձեր ուսանողը... իր գյուտին համար պատենա ախալի սատ-
նա:

ՆԱՐԻՆՅԱՆ. — Պատենա... Ինչեք եք ասում... դիտվումային
նախադիծ պետք է կազմի:

ՄԱՐԱՆՋՅԱՆ. — (Արջանալով) Օ՛, այդ արդեն դժվար է:

ԱԶԱՏՅԱՆ. — Բայց և հեռաքքքիր:

ԱԹԱՆԵՍՅԱՆ. — Արդյոք հապճեպ չէ՞ այդ սրտշումը:

ԾԱՌՈՒԿՅԱՆ. — Անտարակույս, անտարակույս հապճեպ է:

ՆԱՐԻՆՅԱՆ. — Ոչ, ժամանակին է:

ԱԹԱՆԵՍՅԱՆ. — Հույսով եմ որ այդ հարցը մենք կլուծենք,
այսպես ասած, ախաղեմիական միջոցորտում:

ՆԱՐԻՆՅԱՆ. — Ամենայն հաճությամբ, պրոֆեսոր:

(Հանրակացարանից դուրս են գալիս Շահենը, Մարոն, Նվարդը և
Արմանուշը):

ԱՐՄԱՆՈՒՇ.— Ի՞նչ լավ է այստեղ, հայրիկ... Երանի Պար-
զին ալ ինձի հետ ըլլար:

ՄԱՐԱՆՋՅԱՆ.— Հողմի ըներ, աղջիկս, եղբայրդ ալ շուտով
կուգա:

ՆՎԱՐԴ.— Իսկ ի՞նչու ձեզ հետ չեկաի:

ԱՐՄԱՆՈՒՇ.— Եղբայրս մինչև տարու վերջը պայմանագրը
ված է այնտեղ «Վեստ Կոպլե» պղնձարդյունաբերող ընկերու-
թյան հետ:

ՇԱՀԵՆ.— Է՛, թող նա էլ պատուի պայմանագիրը ու գա:

ՄԱՐԱՆՋՅԱՆ.— Անմեղ մանչուկ... դուք չեք գիտեր, ի՞նչ
ըսել է Ամերիկա: Եթե նա փորձի չկատարել պայմանագիրը, ա-
պա այն ատեն կհալածեն, բանտ կնետեն իրեն:

ԾԱՌՈՒԿՅԱՆ.— Բա՞նա... Բարբարոսություն է, անտարա-
կնյա բարբարոսություն:

ՄԱՐԱՆՋՅԱՆ.— Այո կոչեղա, «Վեստ Կոպլե» ընկերության
հետ կատարել չեն ըներ: (Ուսանողներին) Իսկ Արմանուշս կհանձ-
նեմ ձեզի, ան ալ աշխանը պիտի սովորի ձեր քուէջում:

ՆՎԱՐԴ.— Իսկ մինչ այդ մենք նրան մեզ հետ կտանենք
պրակտիկայի՝ Շամլուղ, մի ամիս հետո բոլորս այնտեղ պետք
է լինենք:

ՄԱՐԱՆՋՅԱՆ.— Օկե՛յ, նա իր եղբոր հետ հանքեր շատ
եղած է:

ՌՈՒԲԵՆ.— (Մարանջյանին) Իսկ դուք երևի կդասախոսեք
մեր ինստիտուտում, այնպես չէ՞:

ՄԱՐԱՆՋՅԱՆ.— Օ՛, ես այդ շատ կփափաղիմ: Բայց մինչ
այդ կուղեմ քանի մը ամիս շրջագայել Հայաստանի և Սովետ
Միության խոշորագույն պղնձահանքերը, մանավանդ Ուրալ,
որու մասին շատ եմ լսած ու կարդացած:

ԱԶԱՏՅԱՆ.— Այդ շատ ուսանելի կլինի:

ՄԱՐԱՆՋՅԱՆ.— Հարկավ, հարկավ... Դե երթանք, աղջիկս:
(Դասախոսները պատրաստվում են ուղեկցել նրան) Ո՛չ, ո՛չ, մի՛
անհանգստանաք, ճամփան արդեն սորված եմ:

ՀՐԱՅՐ.— Մենք՝ ուսանողներս ձեզ կուղեկցենք:

ՄԱՐԱՆՋՅԱՆ.— Օ՛, այդ արդեն հիանալի է. (Փարվելով Հը-
րայրին) Հոգուս չափ կսիրեմ երիտասարդները... Եթե գիտնաք

որչափ ձանձրացած եմ ֆիրմաներեն, կոմպանիաներեն, ողջ
ամերիկայեն... Միայն կփափաղեմ այսպես շարունակ ձեզի հետ
լլալ, մայր հողին. վրա, հարազատ արևուն տակ... ամառս որ
տղաս ալ այստեղ չէ... է՛ ցանկություն, գուարայ:

ԱԹԱՆԵՍՅԱՆ.— (Մարանշյանին) Ներեցեք, պրոֆեսոր, դուք
երևի մոռացել եք. (Առանձնանում են):

ՄԱՐԱՆՋՅԱՆ.— (Մտաբերելով) Ա՛, ամսագիրը, ուր գրված է
եթերային յուղերով պղնձահանքը հարստացնելու մասին... խընդ-
րեմ, խնդրեմ (Տալիս է ամսագիրը):

ԱԹԱՆԵՍՅԱՆ.— Մեծապես շնորհակալ եմ:

ՄԱՐԱՆՋՅԱՆ.— Չարժե, կոլլեգա: Բայց ինչ կուզեք ընել այդ:

ԱԹԱՆԵՍՅԱՆ.— Ոչինչ, հենց այնպես հետաքրքրվում եմ
ամերիկյան տեխնիկայի նորություններով (Նայելով մուտքի մուտ
կանգնած դասախոսներին և ուսանողներին. շտապ): Եվ ոչ միայն
ամերիկյան, այլև բնականորապես միջազգային տեխնիկայի նո-
րություններով... Տեսականորեն:

ՄԱՐԱՆՋՅԱՆ.— Գիտնականին համար թերևս հետաքրքիր
լլա՛նք այդ նոր եղանակը, թեև համոզված եմ, որ դա ձեզի բնավ
պետք չի դա:

ԱԹԱՆԵՍՅԱՆ.— Կոկ հետաքրքրություն, պրոֆեսոր, լոկ հե-
տաքրքրություն...

ՆԱՐԻՆՅԱՆ.— (Դիմելով Արանեսյանին) Արսեն Գեորգեիչ,
ինչո՞ւ դուք Հրայր Խաչատրյանի մտահղացմանը դեմ եք:

ԱԹԱՆԵՍՅԱՆ.— Բայց, պրոֆեսոր, չէ՞ որ մենք արդեն պայ-
մանավորվեցինք:

ՄԱՐԱՆՋՅԱՆ.— Ներեցեք, ուսանողներն ինձի կոպտան։ Օ-
կեյ, ցանկություն: (Գնում է: Ուսանողներն ուղեկցում են նրան):

ՆԱՐԻՆՅԱՆ.— Ոչ, դա ինձ հետաքրքրում է:

ԱԹԱՆԵՍՅԱՆ.— Ես չեմ կարող պաշտպանել վերացական
մտքեր... տեխնիկական հաստատության ուսանողը, վաղվա ին-
ժեները, պետք է լինի խիստ չափված ու հավասարակշռված և ոչ
թե ցնորամուլ մի մարդ:

ԾԱՌՈՒԿՅԱՆ.— Անտարակույս, այո:

ՆԱՐԻՆՅԱՆ.— Ես հավանում եմ նրա խիղախումն ու ան-
դուստ կռանդը, ինչո՞ւ մեռցնել այն:

ԱԹԱՆԵՍՅԱՆ.— Ինձ թվում է, թե չպետք է սնել ամեն մի

և ուսանող, որն աննպատակ է: Հաշվի առեք, պրոֆեսոր, որ եթե
այդպես կոչված (հեգնանքով) գետեխնդրողիական եղանակը նույն-
նիսկ իրական էլ լինի, ապա դրանով պետք է զրադվեն մի-
լիոններ փորձված ինժեներներ և ոչ թե մի նորահաս պատանի:

ՆԱՐԻՆՅԱՆ.— Իսկ ի՞նչի համար ենք մենք և դուք այս-
տեղ:

ԾԱՌՈՒԿՅԱՆ.— Իսկապես, ինչի՞ համար ենք:

ԱԹԱՆԵՍՅԱՆ.— Դուք շփոթում եք, ուսանողը պետք է աշ-
խատի մատչելի նյութի վրա և միանգամայն ինքնուրույն, իսկ
մենք պետք է միայն ղեկավարենք և ոչ թե դայակի դեր կա-
տարենք:

ԱԶԱՏՅԱՆ.— Ինձ թվում է, թե դուք սխալվում եք, Արսեն
Գեորգևիչ: Մեզ պետք են հանդուգն, համարձակ մասնագետներ,
նորարար ինժեներներ, այդ է պահանջում սովետական հասարա-
կարդի էությունը:

ԱԹԱՆԵՍՅԱՆ.— (Թերևհեգնանքով) Թեև ես հասարակական
գիտությունների դասախոս չեմ, այնուամենայնիվ ինձ թվում
է, որ մեր հասարակարդի էությունը պահանջում է դասախոսա-
կել ոչ միայն հանդուգն, այլև խելահաս ու համեստ մասնա-
գետներ:

ԱԶԱՏՅԱՆ.— Դրանք միմյանց հակասող հասկացողությու-
ններ չեն:

ԱԹԱՆԵՍՅԱՆ.— Ներեցեք, երբեմն հակասում են... Ես ձեզ
ուզում էի հիշեցնել ոուս հանձարեղ գիտնական, ակադեմիկոս
Պավլովի խոսքերն՝ ուղղված երիտասարդությանը. «Երբեք մի
փորձեք ձեր գիտելիքների պակասը քողարկել թեկուզ ամենա-
հանդուգն հիպոթեզներով... Որքան էլ իր երանգներով հրապուրի
ձեզ այդ սապոնե պղպջակը, միևնույն է, նա կպայթի և դուք
բացի շփոթմունքից՝ ոչինչ չեք ստանա»... վախենում եմ, որ
նույնը լինի և ձեր Բահակյանի հետ:

ՆԱՐԻՆՅԱՆ.— Ես չեմ վախենում համարձակ մտքերից:

ԱԹԱՆԵՍՅԱՆ.— Կրկնում եմ, միայն համարձակությունը չէ,
որ որոշում է գիտության բախտը: Դուք այդ անվան տակ կա-
րող եք պատրաստել ինքնահավան մասնագետներ, այնինչ երի-
տասարդ գիտնականը, ինչպես ասում է ակադեմիկոս Պավլովը,
պետք է այնքան համեստ լինի, որ միշտ ասի՝ «Ես թերուս եմ»:

ԾԱՌՈՒԿՅԱՆ.— Այո, այո, անտարակույս թերուտ:

ԱԶԱՏՅԱՆ.— (Արանեսյանին) Յա՛վում եմ, որ դուք ճիշտ չեք հասկացել տկազեմիկոս Պալլոլին: Դուք հավանաբար չեք մոռացել նաև նրա նշանավոր խոսքը, թե դիտության մեջ կարեւորը կիրքն է... Կրքոտ դիտնականի համար երկու կյանքն էլ քիչ է իր հանդուգն մտահղացումներն իրականացնելու: Մենք հենց սուսանողական անտարանից պետք է դատարարակենք աշնպիտի մասնագետներ, որոնք, ինչպես ընկեր Ստալինն է ասում, պետք է փշրեն դիտության այն հնացած արագիցիաներն ու նորմաները, որոնք արդելակում են նրա առաջխաղացմանը: Մի՞թե մենք կարող ենք անտարրերությամբ անցնել այնպիսի հետաքրքիր մաքի կողքից, ինչպիսին Հրայրի նախադիծն է:

ՆԱՐԻՆՅԱՆ.— Իհարկե ոչ (վնոականորեն): Ես ստանձնում եմ Իսահակյանի դիպլոմային նախադի դեկլարությունը և իմ տեսակետը կպաշտպանեմ ամբիոնի նիստում:

ԾԱՌՈՒԿՅԱՆ.— Շտապում ենք, կռկեղաներ, անտարակույս շտապում ենք:

ԱԹԱՆԵՍՅԱՆ.— (Թերևհեզմամբ) Եթե պրոֆեսոր Նարինյանի պես պատվարժան դիտնականը հանձն է տնում այդ ապա մեզ մնում է միայն հաջողություն բարեմաղթել նրան, իսկ ես ձեռքերս լվանում եմ:

ԱԶԱՏՅԱՆ.— Դա պատիվ չի բերում ձեզ... Ինչպես չեք ուղում հասկանալ, որ մեր նոր տեխնիկայի ապագան հենց երիտասարդությանն է պատկանում: Հրայր Իսահակյանն ու նրա եւան խիզախները ի վերջո պետք է նվաճեն Հայաստանի շատ հանքավայրերի դարավոր ընդերքը, ուր պղինձը նրանց է սպասում... Այժմ, երբ պղնձի արդյունաբերությունը բացառիկ կարեւոր նշանակություն ունի մեր երկրի համար, երբ Հայաստանում հայրենասիրական պայքար է ծավալված ավելի շատ պղնձահանք ստանալու համար, ձեռքերը լվանալ այդ շնորհակալ դործից, կրկնում եմ, պատիվ չի բերում սովետական դիտնականին (զնում է):

ՆԱՐԻՆՅԱՆ.— Դա կարող է պատիվ բերել միայն նրան, ով դուրի է նորի գղացումից... ցտեսություն (զնում է):

ԾԱՌՈՒԿՅԱՆ.— Ինչպե՞ս... Այո, այո, ցտեսություն: (Պառու-

գա): Լավ չէ, լավ չէ, մեր մեջ պետք է լինի միասնություն,
անտարակույս միասնություն:

ԱԹԱՆԵՍՅԱՆ.— (Հեգնորեն) Ի՞նչ միասնություն կարող է լի-
նել նորարարի և հնամուլի միջև, որը դուրկ է նորի զգացու-
մից:

ԾԱՌՈՒԿՅԱՆ.— Դե լավ, Արսեն Գեորգևիչ, մի հուզվեք:

ԱԹԱՆԵՍՅԱՆ.— (Թեթև հուզմունքով) Ես, որ ամենայն ու-
շադրությամբ հետևում եմ բոլոր լեզուներով հրատարակվող
տեխնիկական գրականությանը, աչքաթող չեմ անում ոչ մի նոր
աշխատություն ու հոգված, որ լույս է տեսնում նույնիսկ կար-
միք գծից դուրս, ես, որ տեխնիկական նորություններով հագեց-
նում եմ իմ դասախոսությունները և հանկարծ... դժուրկ եմ նորի
զգացումից... ի դեպ, դուք գիտե՞ք եթերային յուղերով պղնձա-
հանքը հարստացնելու նորագույն եղանակը:

ԾԱՌՈՒԿՅԱՆ.— Միանգամայն անգամ:

ԱԹԱՆԵՍՅԱՆ.— (Յաճր) Այդ եղանակը հայտնադրված է
Ամերիկայում և անմիջապես յուրացված «Վեստ Կոսթս» կոմպա-
նիայի կողմից, որը հսկայական շահույթ է ստանում: Ո՞վ գիտի
ինստիտուտում այդ մասին: Ոչ ոք:

ԾԱՌՈՒԿՅԱՆ.— Արսեն Գեորգևիչ, ձեր բռնած գիրքը հրայր
Բոահակյանի նախադրի նկատմամբ դուցե և ճիշտ է, այո, այո,
բայց միթե մեզ պատիվ է բերում անընդհատ հոլովել Ամերի-
կա, Ամերիկա... Եվ ինչո՞ւ անպայման Ամերիկա, այլ ոչ Լեհաս-
տան, Չեխոսլովակիա, կամ մի այլ դեմոկրատական երկիր... Ոչ,
ոչ, ոչ, անտարակույս պատիվ չի բերում... Բայց ես կարծես
ուշանում եմ... ցտեսություն (գնում է: Աքանեսյանը մնում է
մտքերի մեջ խորասուզված, գալիս է Ռուբենը):

ՌՈՒԲԵՆ.— Արսեն Գեորգևիչ:

ԱԹԱՆԵՍՅԱՆ.— (Յնգվելով) Այո, ի՞նչ կա:

ՌՈՒԲԵՆ.— Արսեն Գեորգևիչ, ես կարոտ եմ ձեր օգնու-
թյանը:

ԱԹԱՆԵՍՅԱՆ.— Ի՞մ օգնությանը:

ՌՈՒԲԵՆ.— Ես այլևս չեմ կարող անվերջ որոնումների մեջ
մնալ: Բոլոր ընկերներս ընտրել են դիպլոմային թեմաներ, իսկ
ես...

ԱԹԱՆԵՍՅԱՆ.— Բայց միթե քիչ թեմաներ կան:

ՌՌԻԲԵՆ.— Ես չեմ գտնում հետաքրքիր, ինձ բավարարող
թեմա:

ԱԹԱՆԵՍՅԱՆ.— Ապա ի՞նչ է ձեզ հարկավոր:

ՌՌԻԲԵՆ.— Մի մեծ, ուշագրավ միտք, որով քչերն են դրադ-
վել:

ԱԹԱՆԵՍՅԱՆ.— Ահա թե ինչ:

ՌՌԻԲԵՆ.— Ես ուզում եմ մի այնպիսի նշանակալից նախա-
դիժ կազմել, որը կառանձնացնի ինձ մյուսներից:

ԱԹԱՆԵՍՅԱՆ.— Դուք իսկական փառասեր եք:

ՌՌԻԲԵՆ.— Մի՞թե:

ԱԹԱՆԵՍՅԱՆ.— Այդ վատ չէ... Բայց հիշեցեք, որ անառիկ
լեռան կատարին միշտ հասնում է նա, ով ոչ թե խելագարի պես
ցատկում է անդունդների վրայով, այլ գերադասում է վստահ
քայլել դեպի նույն կատարը տանող ծանոթ կածաններով:

ՌՌԻԲԵՆ.— Բայց նա արդեն չի դառնա բնության նվա-
ճող:

ԱԹԱՆԵՍՅԱՆ.— Բնությունը նվաճելուց առաջ անհրաժեշտ
է, որ դուք սովորեք զսպել բուռն կրքերը... Ա՛յ, հենց դա է ձեր
ընկերոջ դժբախտությունը:

ՌՌԻԲԵՆ.— Բայց Հրայրի իդեան...

ԱԹԱՆԵՍՅԱՆ.— Դուք կարիք չունեք երկնքից աստղեր ցած
բերել... այդպես... իդեալ, հիշում եք մեր անցած օրվա խոսակ-
ցությունը մի նոր հայտնադրածության մասին:

ՌՌԻԲԵՆ.— Պղնձահանքի հարստացման նորագույն եղանա-
կի՞ մասին:

ԱԹԱՆԵՍՅԱՆ.— Այո, այո, և հիմա իմ մեջ մի միտք ծնա-
ղեց... ինչո՞ւ չվերցնենք այդ մեթոդը որպես զիպլոմային թեմա:

ՌՌԻԲԵՆ.— Դիպլոմային թեմա՞... Բայց ես զրեթե ոչինչ չը-
գիտեմ այդ մասին:

ԱԹԱՆԵՍՅԱՆ.— Կիմանաք բարեկամս: Ձե՞ որ դա հենց
այն դանձն է, որ դուք այսքան ժամանակ որոնում էիք...
Ականավոր զիտնականների կողմից արդեն ստուգված մի եղա-
նակ, որը փառքով կալսակի այն ուսանողին, որը կձեռնարկի
նախագծել:

ՌՌԻԲԵՆ.— Փառքով կալսակի՞... Դուք համոզված եք:

ԱԹԱՆԵՍՅԱՆ.— Լիովին: Դա նորագույն տեխնիկայի վերջին

խոսքն է... Ի դեպ, այսօր ես ստացա նոր նշույթեր այդ եղա-
նակի մասին (հանում է Մարանջյանի տված ամսագիրը):

ՌՌԻԲԵՆ.— Նոր նշույթե՞ր, հետաքրքիր է (ուզում է նայել):

ԱԹԱՆԵՍՅԱՆ.— (Պահում է ամսագիրը) Հետո, հետո, հիմա
ժամանակը չէ:

ՌՌԻԲԵՆ.— Իսկ որտե՞ղ է կիրառվում այդ եղանակը:

ԱԹԱՆԵՍՅԱՆ.— Որտե՞ղ... Դա կարող է լինել ամենուրեք:
Դե իհարկե, նախ և առաջ մեղ մօտ, Ասվետական Միության
մեջ... Հը՞, ի՞նչ կասեք:

ՌՌԻԲԵՆ.— Եթե դա այդպիսի ուշադրավ նորություն է...

ԱԹԱՆԵՍՅԱՆ.— Այո, այո... Ես առաջարկում եմ ձեզ, հա-
մոզված լինելով ձեր փայլուն ընդունակությանն ու ողջամտու-
թյանը... Ես նույնիսկ հանձն եմ առնում ձեր դիպլոմային աշ-
խատանքի ղեկավարությունը:

ՌՌԻԲԵՆ.— Շնորհակալություն, Ա՛րսեն Գեորգևիչ, ես հա-
մաձայն եմ նախադեկ այդ թեման, միայն թե շուտ, որքան
կարելի է արագ:

ԱԹԱՆԵՍՅԱՆ.— Հիանալի է: Ես կսպասեմ ձեզ վաղը առա-
վոտյան տասին: Դե, ցտեսություն:

ՌՌԻԲԵՆ.— Ցտեսություն, Արսեն Գեորգևիչ (Արանեսյանը
գնում է, Ռուբենը դանդաղ դիմում է դեպի հանրակացարանը: Գա-
լիս է Մարոն):

ՄԱՐՈ.— Ռուբե՛ն:

ՌՌԻԲԵՆ.— (Ուրախ ետ է դառնում) Մարո՛ն (Նրանք նստում
են): Որքա՞ն դեղեցիկ ես դու հիմա՝ իրիկնամուտին:

ՄԱՐՈ.— (Կատակով) Միայն իրիկնամուտի՞ն:

ՌՌԻԲԵՆ.— Ես սիրում եմ տեսնել քեզ այսպես... խորհրդա-
վոր:

ՄԱՐՈ.— Խորհրդավոր:

ՌՌԻԲԵՆ.— Այո, Մարո՛ն, ինչո՞ւ ես վերջերս սկսել քիչ սիրել
իմ:

ՄԱՐՈ.— Ես քիչ սիրել չեմ կարող... Կամ սիրում եմ ամբողջ
հոգով, կամ բոլորովին չեմ սիրում:

ՌՌԻԲԵՆ.— Կարծում ես պատասխանեցի՞ր:

ՄԱՐՈ.— Լավ. պարզ ասեմ... Բայց նախ դ՛ու առա, ինչո՞ւ ես
սիրում ինձ տեսնել խորհրդավոր:

ՌՌԻԲԵՆ.— Կիսախաղաղում ես չեմ տեսնում աչքերումդ թաքնված կշտամբանքը, որ վերջերս տանջում է ինձ:

ՄԱՐՈ.— Միթե... Ռուբեն, եթե ես քեզ սիրեի այնպես, ինչպես դու ինձ, դա քեզ կզոհադնէր:

ՌՌԻԲԵՆ.— Կիովին:

ՄԱՐՈ.— Այո... Դու խոտապահանջ չես... Ուրեմն ես քեզ ափելի եմ սիրում:

ՌՌԻԲԵՆ.— Միրելին (ուզում է համբուրել նրան):

ՄԱՐՈ.— (Բարձրանալով տեղից) Ես ավելին եմ պահանջում քեզնից: Ա՛յ, ինչու դու էլ չես վերցնում այնպիսի մի հասարակ թեմա, ինչպես Հրայրը: Չէ՞ որ երկուսդ էլ ինստիտուտի առաջին ուսանողներն եք (Շահենը, Նվարդը և Հրայրը վերադառնում են և նկատելով Ռուբենին ու Մարոյին՝ անաղմուկ մտնում են հանրակացարան):

ՌՌԻԲԵՆ.— Հաճախ ես սկսել Հրայրի մասին խոսել... Եվ վերջապես չեմ հասկանում, ի՞նչ եք բոլորդ խելագարվել այդ ֆանտաստիկ մտքի վրա: Ես արդեն ընտրել եմ մի առավել ուշագրավ նյութ:

ՄԱՐՈ.— (Ուրախացած) Ե՛րբ, ի՞նչ թեմա:

ՌՌԻԲԵՆ.— Հանքահոր՝ պղնձի հարուստացման նորագույն եղանակով:

ՄԱՐՈ.— Նորագույն եղանակով, որտեղից վերցրիր:

ՌՌԻԲԵՆ.— Նյութերը տալիս է Աթանեսյանը:

ՄԱՐՈ.— Դու վստահ ես, որ լավ բան կատարվի:

ՌՌԻԲԵՆ.— Այո:

ՄԱՐՈ.— Նույնքան լավ, որքան Հրայրի մոտ:

ՌՌԻԲԵՆ.— (Ազդված) Հրայրի՞, գուցե և ավելի լավը: Քիչ էլ սպասիր, Մարն, քո Ռուբենի մասին շուտով շատերը կխոսեն:

Պատշգամբում երևում են Շահենը, Հրայրը, Նվարդը՝ մի խումբ ուսանողների հետ: Նրանք նկատել են Ռուբենին և Մարոյին: Նրանց անսպասելի երգը սթափեցնում է սիրահար գույգին):

ՎԱՐԱԳՈՒՅՐ

Պրակտիկանս ուսանողների աշխատանքային սենյակը Շամլուղի հանձնարարական վարչությունում: Ձախ դուռը տանում է դեպի պրակտիկանսների հանձնարարական: Կենտրոնում մեծ պատուհան, որտեղից երևում են Լոռու վեհաժողովի սարերը: Ռուբենը դիվանի վրա նստում է: Շահենը պարապում է: Առավոտ է: Լսվում է հեռախոսի զանգ: Շահենը խորատուգլիվ կարգում է: Նորից զանգ: Ռուբենը բռնում է գալիս տեղում: Շահենը սրափվում է:

ՇԱՀԵՆ.— Ձեռք էլ թողնում մարդ պարապի (վերցնում է լրատվողը): Լսում եմ: Շահենը լսում է... այո, ես եմ... Հրայր Բաղդասարյանի փորձը... Այո, անպայման կլինի (տեսնելով Ռուբենին անհանգստանում է): Ներկայից, մի բռնի (վերցնում է պատից «կախած քուրքը ու գցում գլխին): Այո (գալիս են Արտավազը Ալիմյանն ու Մաքսիկ Ամին. նրանք զարմացած նայում են Շահենին): Դուք փորձին անպայման կգաք, չէ... Շատ լավ... Ինչպե՞ս... Այո, այո, ամեն ինչ պատրաստ կլինի... Ո՞վ... Պրոֆեսոր Նարինյանը... Այո, այո, գալիս է... անհամբեր սպասում ենք նրան... Շատ բարի. ցանկություն (կախում է լրատվողը):

ԱԼԻՄՅԱՆ.— Շահեն, էդ դժուր է... Տեսնե՞նք, խեղճ Մաքսիկ ամուսնի վախճանը: Էդ ում հետ էիր խոսում:

ՇԱՀԵՆ.— Ձեր հանքերի գլխավոր ինժեների հետ: Այսօր պետք է բոլորը Հրայրի փորձին դառնան:

ԱԼԻՄՅԱՆ.— Հա, մենք էլ ենք էդ փորձին սպասում:

ՄԱՅԱԿ ԱՄԻ.— Էդ ո՞վ է էդտեղ թեք ընկել:

ՇԱՀԵՆ.— Ռուբենն է (մոտենալով դիվանին): Ռուբեն:

ԱԼԻՄՅԱՆ.— Ձե, չե, թող քնի. դե որ գիշերը տուն չի եկել էհա չերախոժների հետ պիտի քնած լինի:

ՄԱՅԱԿ ԱՄԻ.— (Մի փաթեթ դնելով սեղանին) Տեսու գաթա է, կարոտած կլինի տղեն, վեր կենա կուտի, տառն է դրկել գեղից:

ՇԱՀԵՆ.— Ախր այսօր Ռուբենի համար էլ մեծ օր է, Արտավազի քեռի: Աթանեսյանը Երևանից հատկապես եկել է, որ նրա հախազի հաշվումները նայի... Ամբողջ գիշերն աշխատել է:

ԱԼԻՄՅԱՆ.— Ապրի, ապրի: Ապերս էլ ամբողջ գիշեր չի քնել, Դոռո հա թոռ... բերեցի, որ տեսնի, սիրտը հանգստանա:

ՇԱՀԵՆ.— Դե դուք զբաղվեցե՛ք Ռուբենի գծադրերով, ես գնամ Հրայրին առեմ, որ փորձին նոր հյուրեր են գալու (գնում է):

ԱԼԻՄՅԱՆ.— (Դիտելով Ռուբենի գծագրերը) Մի տես ի՞նչ չե՞ր-
այոժ է:

ՄԱՅԱԿ ԱՄԻ.— Ի՞նչ ասիր:

ԱԼԻՄՅԱՆ.— Ասում եմ՝ մի արի թուխդ շնորհքը տես:

ՄԱՅԱԿ ԱՄԻ.— Հա, Ռուբենիս հունամբը (նայում է գծագրին).
Արտավազդ ջան, դու խելոք տղա ես, հայտնի ստախանով... մի
հասկացրու, ասիւր էդ ի՞նչ է անում տղես, թե չէ ես ծերացել եմ,
բան չեմ հասկանում:

ԱԼԻՄՅԱՆ.— Պղնձի հանքահոր է, միայն թե էն տեսակ, որ
ես ու դու չենք տեսել, նոր հանքահոր: Հայաստանում Ռուբենը
պետք է առաջինը սարքի: Ա՛յ, տեսնում ես, հանքաքարը էստե-
ղից դալիս, լցվում է էս մեծ թաշտերի մեջ, էստեղ էլ պղինձն
են մաքրում:

ՄԱՅԱԿ ԱՄԻ.— Բա էս ի՞նչ է:

ԱԼԻՄՅԱՆ.— Էս էլ հանքահորի բացվածքներն են... մաքրը-
ված պղինձը լցվում է վազոնետների մեջ, դուրս դալիս գետնի
տակից ու, հայդա՛, գնում գործարան:

ՄԱՅԱԿ ԱՄԻ.— Բու. ուրեմն էդ բոլորը Ռուբենն է հնարել:
Դե ասա ի՞ր մուրազին հասավ, էլի... Ախր միշտ ասում էր՝ ապի՛
ջան, ես տի մեծ մարդ դառնամ, հայանի գիտնական:

ԱԼԻՄՅԱՆ.— Էդ բոլորը ճիշտ է, ապի՛ր, մենակ թե Ռուբենը
շատ է ընկնում անունի ետեից:

ՄԱՅԱԿ ԱՄԻ.— Մի վախենա՛, գրդի՛, Ռուբենը խելոք տղա
է, մեր անունը գետնովը չի տա:

ԱԼԻՄՅԱՆ.— Ո՞նց թե գետնովը տա... Մեր գերդաստանը,
ապեր, միշտ կովել է էս սարերի համար:

ՄԱՅԱԿ ԱՄԻ.— Ռեուդուցիայի ժամանակ ախպերներդ ա-
րյուն են թափել էս պղնձի համար... էս կովին էլ երկու ապան:
Թոռներս գնացին ֆրոնտ ու էլ ետ չեկան:

ԱԼԻՄՅԱՆ.— Ճիշտ է, մեղ մնացել է մենակ Ռուբենը, մեր
հույսն ու պարծանքը (Ռուբենը արթնանում է քնից ու լսում հե-
տագա խոսակցությունը):

ՄԱՅԱԿ ԱՄԻ.— Թող, թող մի տղեն ռասումը վերջացնի, տես
թե ի՞նչ հարսանիք պիտի անենք, խելական Լոռվա հարսանիք:

ԱԼԻՄՅԱՆ.— Հա, լավ աղջիկ է Մարոն:

ՄԱՅԱԿ ԱՄԻ.— Մարոն... էդ ո՞ր մեկն է:

ԱԼԻՄՅԱՆ.— Էն սիրուն աղջիկը, որ անցյալ օրը մեր տունն էր եկել:

ՄԱՅԱԿ ԱՄԻ.— Ուրեմն էդ մեր հմրսն է... Կա՛մ աղջիկ է: Էն օրն էս իմացա, թե նա էն տղի հետ է եկել:

ԱԼԻՄՅԱՆ.— Ո՞ր տղի:

ՄԱՅԱԿ ԱՄԻ.— Դե. էն, անունն ինչ ա... Հրայրի:

ԱԼԻՄՅԱՆ.— (Միծաղելով) Է՞ ապե՛ր, նրանք լավ ընկերներ են:

ՄԱՅԱԿ ԱՄԻ.— Ձէ, դե ես բան չունեմ ասելու... Ռուբենն ու Հրայրը ոնց որ ախպեր տղերք լինեն:

ԱԼԻՄՅԱՆ.— Էն էլ ոնց ախպեր: Հինգ տարի է իգիթի պես իրար կողքից վազում են ու մինն էլ չի թողնում, որ մյուսն առաջ անցնի... Ռուբենիս գործերը ասես լավ են, տեսնենք Հրայրի փորձն այսօր ոնց պիտի անցնի:

ՌՈՒԲԵՆ.— (Ձևացնելով իբր նոր է արթնանում) Հայրի՛կ:

ՄԱՅԱԿ ԱՄԻ.— Վա՛յ, Ռուբեն ջան, դարթնացրինք քեզ:

ԱԼԻՄՅԱՆ.— Էս ի՞նչ գործի ես, սրդի, ընկերներդ իրար են անցել, մեծ պատրաստության մեջ են, իսկ դու քնել ես:

ՌՈՒԲԵՆ.— Ի՞նչ պատրաստություն:

ԱԼԻՄՅԱՆ.— Ո՞նց թե... Հրայրի փորձը:

ՌՈՒԲԵՆ.— Հա...

ՄԱՅԱԿ ԱՄԻ.— Դե քո գործերը լավ են ու լավ:

ՌՈՒԲԵՆ.— Ո՞ր գործերը, պապի՛:

ՄԱՅԱԿ ԱՄԻ.— Դե էս չերտյոժները, էլի:

ՌՈՒԲԵՆ.— Հա...

ԱԼԻՄՅԱՆ.— Կա՛մ է ստացվում, չէ՞:

ՌՈՒԲԵՆ.— Իմ հաշվումները լավ է, տեսնենք թե ի՞նչ կասի պրոֆեսորը (Մտնում է Արանեսյանը):

ԱԹԱՆԵՍՅԱՆ.— Ա՛, ազնիվ Ալիմյանների՝ հանդերձ ընտանյոք... Շատ հաճելի է... Շնորհավորում եմ, ընկեր Ալիմյան (Գրքապանից հանելով քերքը): «Պղնձի ֆրոնտում» թերթի այսօրվա համարը ամբողջովին ձեզ է նվիրված:

ՌՈՒԲԵՆ.— Ո՞ւր է, պրոֆեսո՛ր (Վերցնում է քերքը... Ալիմյանին): Բա ի՞նչու ես լռում, հայրի՛կ:

ՄԱՅԱԿ ԱՄԻ.— Դե էդ հո նորությունն չի՞ նրա համար, որդի (Արանեսյանին գաբա առաջարկելով): Անուշ արեք, ընկեր պրոֆեսոր:

ԱԹԱՆԵՍՅԱՆ.— Շնորհակալություն (չի վերցնում):

ՌՌԻԲԵՆ.— (Կարդում է՝ «Անվանի հանքափոր Արտավազդ Ալիմյանն սկսեց աշխատել 1953 թվի հաշվին»...) Հիանալի է... (Շրջում է թերթը) Օհո, Հրայրի նկարը. «Հանդուգն մտահղացում»: Հետաքրքիր է, ո՞վ է գրում... «Ալիմյան»... Դ՞ու՞ն էս դրել, հայրիկ:

ԱԼԻՄՅԱՆ.— Դե որ գիտնականներդ չեք գրում, մենք էլ մեր խոսքը պիտի ասենք:

ԱԹԱՆԵՍՅԱՆ.— (Թեթև հեգնանքով) Իհարկե, ձեր հեղինակավոր կարծիքը չափազանց գնահատելի է:

ԱԼԻՄՅԱՆ.— Ընկեր պրոֆեսոր, Հրայրի մտածածը իրոք հանդուգն միտք է, չէ՞:

ԱԹԱՆԵՍՅԱՆ.— Լեռը երկնում է, իսկ թե ի՞նչ կ'ընի, չգիտեմ:

ԱԼԻՄՅԱՆ.— Մեր Լուսիա լեռները միշտ էլ պղինձ են ծնում:

ԱԹԱՆԵՍՅԱՆ.— Հուսանք: (Ռուբենին) Վերջացրի՞ք հաշիվումները:

ՌՌԻԲԵՆ.— Այո, Աբսեն Գեորգելի:

ԱԹԱՆԵՍՅԱՆ.— Հետաքրքիր է (նայում է տետրին, լսվում է շշակի ձայնը):

ԱԼԻՄՅԱՆ.— Դե, մենք գնացինք, չխանդարենք ձեզ: Ցտեսություն, ընկեր Աթանեսյան:

ԱԹԱՆԵՍՅԱՆ.— Ցտեսություն:

ՄԱՅԱԿ ԱՄԻ.— Է՛, Ռուբեն ջան, կղաս գեղը, տասուղ կարոտու առնի... Ցտեսություն, ընկեր պրոֆեսոր:

ԱԼԻՄՅԱՆ.— (Ռուբենին) Ռուբեն ջան, որ ուղածիս պես դիպումդ պաշտպանես, մի լավ նվեր կստանաս:

ՌՌԻԲԵՆ.— Կաշխատեմ արդարացինել հույսերդ, հայրիկ (Ալիմյանն ու Մացակ Ամին գնում են):

ԱԹԱՆԵՍՅԱՆ.— (Դիտում է գծագիրը) Այդպես... Ճիշտ է... հիանալի է ստացվում, Ալիմյան:

ՌՌԻԲԵՆ.— Այո:

ԱԹԱՆԵՍՅԱՆ.— Անկասկած, ապա տվեք հաշվումների տետրը (նայելով տետրը): Այստեղ ևս ճիշտ է... Շատ լավ է: Հիմա արդեն ձեզ կարելի է շնորհավորել: Ամենադժվարին տեղից դուրս եկաք: Վերջապես ստացվում է իմ ցանկացած թիվը:

ՌՌԻԲԵՆ.— Այո, ստացվում է 180 տոննա... բայց...

ԱԹԱՆԵՍՅԱՆ.— Ի՞նչ բայ:

ՌՌԻԲԵՆ.— Ինձ մտահոգում է մի հարց: Եթե բային յուզերի այս խառնուրդը, որ ես վերցրել եմ, առաջացնում է ակտիվ դադ, իսկ չէ՞ որ դա կարող է...

ԱԹԱՆԵՍՅԱՆ.— Դատարի բան է... Ի՞նչ կասկած կարող է լինել, երբ այս թեման հաստատված է ամբիոնի կողմից:

ՌՌԻԲԵՆ.— Այնուամենայնիվ ինձ թվում է, որ ակտիվ դադը կարող է վտանգավոր լինել...

ԱԹԱՆԵՍՅԱՆ.— Թողեք, դա արդեն ձեր մասնագիտության շրջանակից դուրս է: Թող դրանով դրադվեն քիմիկոսները:

ՌՌԻԲԵՆ.— Իսկ եթե փոխարինեմ էթիլենով:

ԱԹԱՆԵՍՅԱՆ.— Ոչ, ոչ, չարժե, դրանով կվտանգեք ամեն ինչ: Հիշեցեք, որ այս նախագծի անկյունաքարը հսկայական շահն է և էֆեկտիվությունը: Ձեր նախագիծը առաջինը կլինի ինտերատում և դուք հասած կլինեք ձեր նպատակին:

ՌՌԻԲԵՆ.— (Ուրախացած) Արսեն Գեորգևիչ:

ԱԹԱՆԵՍՅԱՆ.— Այո, այո, դուք արդեն վստահ գնում եք դեպի այն հայտնությունը, որի մասին երազում էիք դարձանք:

ՌՌԻԲԵՆ.— (Զգացված) Որքան երախտապարտ եմ ձեզ, Արսեն Գեորգևիչ:

ԱԹԱՆԵՍՅԱՆ.— Թողնենք այդ, Ալիմյան, ես ձեզնից պակաս չեմ շահագրգռված այս նախագծի հանդուժմամբ (պորտֆելից հանում է քղբեր): Հիմա կարող եք սկսել վերամբարձ սարքավորման հաշվումը... Ահա ձեզ նոր նյութեր (տալիս է):

ՌՌԻԲԵՆ.— (Վերցնում է քղբերը) Դարձյալ ձեռագիր նյութեր... Արսեն Գեորգևիչ, միթե այս մեթոդի մասին տպված գործեր չկան:

ԱԹԱՆԵՍՅԱՆ.— Դա կարևոր չէ, ես ընտրում եմ ամենաէական մասերը, որոնք ձեզ անհրաժեշտ են:

ՌՌԻԲԵՆ.— Բավականին լուրջ հաշվումներ են:

ԱԹԱՆԵՍՅԱՆ.— Սովորական ինտեղրալ հաշվումներ, որոնց մեջ դուք այնքան վարժ եք... Իսկ եթե կդժվարանաք...

ՌՌԻԲԵՆ.— Այդ դեպքում կղիմեմ Հայկազ Ավետովիչին:

ԱԹԱՆԵՍՅԱՆ.— (Անհանգստացած) Ոչ, ոչ, հարկավոր չէ: Ես չեմ սիրում, երբ միջամտում են իմ գործերին: Եվ հետո, խորհուրդ եմ տալիս լավ պահել ձեր հաշվումների տետրը, հակառակ

դեպքում դուք կկորցնեք ձեր նախադրի առաջնությունը... Դե
անցնենք առաջ (դրսից լսվում է «Աղջի անասաված» երգը, քիչ
հեռու լուսամուտից սենյակ է ցատկում Շահենը):

ՇԱՀԵՆ.— (Շփոթված) Վա՛յ. ներեցեք, ընկեր Աթանեսյան, ես
չգիտեի, որ դուք այստեղ եք:

ԱԹԱՆԵՍՅԱՆ.— (Հեգնանքով) Խնդրեմ, երիտասարդ, ես ձեր
օղակին երթեկեղություններին ծանոթ եմ արդեն հինգ տարի
(Ռուբենին) Ծանոթացեք նոր նյութերին, երեկոյան կշարունա-
կենք (զնում է դեպի դուռը):

ՌՌԻԲԵՆ.— Շատ բարի:

ՇԱՀԵՆ.— Ընկեր Աթանեսյան, կարելի է ձեզ մի բան դրա-
դեցնել:

ԱԹԱՆԵՍՅԱՆ.— Խնդրեմ:

ՇԱՀԵՆ.— Ռայկոմի ղեկավարությունը՝ քարտուղարի հետ՝
քիչ հեռու կլինի այստեղ, Հրայրի փորձը դիտելու:

ԱԹԱՆԵՍՅԱՆ.— Շատ ուրախ եմ, բայց ինչո՞ւ եք այդ ինձ
ասում:

ՇԱՀԵՆ.— Ինչպես, չէ՞ որ դա մեր ինստիտուտի պատիվն է,
ապա մեր դասախոսներից մի պետք է ներկա լինի:

ԱԹԱՆԵՍՅԱՆ.— Որքան ինձ հայտնի է, ձեր արտադրական
պրակտիկայի ղեկավար Նարինյանն այսօր պետք է վերադառնա:

ՌՌԻԲԵՆ.— Այո, Հայկադ Ավետովիչը հեռադրել է, որ փոր-
ձին անպայման կհաջանի:

ՇԱՀԵՆ.— Բայց նա ուշանում է, իսկ փորձը հետաձգել չի
կարելի, թիվումն արդեն լցված է:

ԱԹԱՆԵՍՅԱՆ.— Ցավում եմ, բայց ոչինչով օգնել չեմ կարող:

ՇԱՀԵՆ.— Հապա ինչպե՞ս անենք:

ԱԹԱՆԵՍՅԱՆ.— Ես միայն պատահմամբ եմ այստեղ: Իմ
միօրյա այցելությունն այլ նպատակ ունի: Բացի դրանից՝ դա-
սախոսներն ունեն որոշակի էթիկա... Հրայր Իսահակյանն ունի
իր ղեկավարը և անհարմար է, որ ես միջամտեմ մեր բաղմա-
վաստակ պրոֆեսոր Նարինյանի գործերին... Եվ հետո, ինչպես
գիտեք, ես ունեմ իմ հաստատ համոզմունքը այդ ֆանտաստիկ
իդեայի մասին և չեմ կամենում ոչ մի մասնակցություն ունե-
նալ: Առայժմ (զնում է):

ՇԱՀԵՆ.— Ես էլ քո սիրած պրոֆեսորը... Դարվիներ եթե նրան

տեսած լինե՞ր՝ կասեր, որ մարդն առաջացել է ոչ թե մարդանը-
ման կապիկից, այլ կապչոննի ձկնից:

ՌՌԻԲԵՆ.— (Հանդիմանալով) Շահեն:

ՇԱՀԵՆ.— Թող է՛, դու էլ դեռ պաշտպանում ես նրան:

ՌՌԻԲԵՆ.— Ես քեզ խնդրում եմ հարգանքով խոսել նրա
մասին, չէ՞ որ նա տկանավոր դիտնական է:

ՇԱՀԵՆ.— Նուշուֆարն էլ գեղեցիկ ծագիկ է, բայց ա՛նհոտ...
Մի խոսքով լավ էք դաել իրար:

ՌՌԻԲԵՆ.— Հիմա էլ թի՛նձ կտար:

ՇԱՀԵՆ.— (Մոտենում է սեղանին և դարակից հանում գիրքը)
Ձեռն էլ թողնում, որ մարդ պարապի (կարդում է):

ՌՌԻԲԵՆ.— Կողմն էլ չա՛վատա, թե ճիշտ ես ասում: (Մոտե-
նում է ու կարդում գրքի վերնագիրը) Օ-հո, դու խկապես ոեֆե-
րատ ես պատրաստում:

ՇԱՀԵՆ.— Ասում եմ, մի խանգարի:

ՌՌԻԲԵՆ.— Դե լավ, լավ, կարդա՛... Շահեն (Շահենը լուռ է.
Մարոյին չէ՞ս տեսել (Շահենը գլխով դրական նշան է անում): Ո՞ր-
տեղ (Շահենը շարունակելով կարդալ՝ մատով ցույց է տալիս): Էդ
հիշք ես ցույց տալիս:

ՇԱՀԵՆ.— Ինչ ա՛նհասկացողն ես. ասում եմ՝ հանքահորը:

ՌՌԻԲԵՆ.— Ո՞ր:

ՇԱՀԵՆ.— Փորձնական:

ՌՌԻԲԵՆ.— Հրայրի՞ մոտ (Շահենը գլխով դրական նշան է
անում: Գալիս է Մարոն):

ՇԱՀԵՆ.— (Մեկուսի) Խաղաղ ժամանակաշրջանն ավարտվեց:

ՄԱՐՈ.— Հայրիկից ո՛չ մի տեղեկութ՜յուն:

ՌՌԻԲԵՆ.— Դեռ ոչ:

ՄԱՐՈ.— Ոչինչ չեմ հասկանում (Շահենին): Այդ հիշք:

ՇԱՀԵՆ.— Ձի լինում մի տեղ հանգիստ նստել-պարապել:

ՄԱՐՈ.— (Տեսնելով գիրքը) Հա, հասկանում եմ... Դե, ե՞րբ
ես գեղուց՜լու:

ՇԱՀԵՆ.— Տեսնենք, դեռ նոր եմ սկսել:

ՄԱՐՈ.— Դե, տես, հենց առաջիկա դիտական կոնֆերանսում:

ՇԱՀԵՆ.— Есть, товарищ комсорг. Разрешите идти?

ՄԱՐՈ.— Կարող ես գնալ:

ՇԱՀԵՆ.— (Ռուբենի մոտով անցնելիս, ցույց տալով Մարոյին՝
երգում է):

«Աման, էրեցիր սիրտս քո սիրով,
Ոտս կապեցիր թել-թել մազերով,
Էլ չեմ դիմանա կիսախցնեմ զոտով»

(զնում է):

ՄԱՐՈ.— (Յույց տալով գծագիրը) Տես, արդեն սկսել եմ էս-
քիզը:

ՌՌԻԲԵՆ.— Կալ է:

ՄԱՐՈ.— Մանրամասնությունները կմշակեմ տեղում:

ՌՌԻԲԵՆ.— Բայց կարծես քո և Նվարդի նախագծերը նման
են ստացվում: •

ՄԱՐՈ.— Նման են միայն այնքան, որ երկուսս էլ նախա-
գծում ենք թեք հանքախորշեր: Նվարդը այլ կերպ է լուծել:

ՌՌԻԲԵՆ.— (Անտարբեր) Գուցի:

ՄԱՐՈ.— Աթանեսյանը եկավ:

ՌՌԻԲԵՆ.— Եկավ:

ՄԱՐՈ.— Խոսեցի՞ր, է՞նչ ասաց:

ՌՌԻԲԵՆ.— Գոհ մնաց իմ հաշվումներից:

ՄԱՐՈ.— (Ուրախացած) Ուրեմն ամեն ինչ հաջող է... Դե,
դո՛ւնե այդ առիթով գնանք հանքահոր, բավական է որքան թը-
վերի վրա ճգնեցիր:

ՌՌԻԲԵՆ.— Հիմա տրամադրված չեմ, մի ուրիշ անգամ (ըս-
կսում է գծել):

ՄԱՐՈ.— Դա արդեն խայտառակություն է, Ռուբեն: Ամբողջ
ամսվա ընթացքում միայն մեկ անգամ ես եղել հանքահորում...
Չեմ հասկանում, թե ինչո՞ւ ես եկել այստեղ:

ՌՌԻԲԵՆ.— Չգիտեմ, ինձ ընդհանրապես ձանձրացրել է այս
արտադրական պրակտիկան:

ՄԱՐՈ.— Ափսոս, իսկ ինձ համար անչափ հետաքրքիր է:

ՌՌԻԲԵՆ.— (Բազմանշանակ) Տեսնե՞լ եմ:

ՄԱՐՈ.— Ի՞նչը:

ՌՌԻԲԵՆ.— Ուզում եմ ասել, որ քո դիպլոմային թեման
կապված է այստեղի պղնձահանքերի հետ, դրա համար էլ երևի
քեզ հետաքրքիր է:

ՄԱՐՈ.— Իսկ քո՞նք:

ՌՌԻԲԵՆ.— Իսկ իմ նախագծին հաղիվ թե օդնի պղնձի ար-
տադրության այստեղի սովորական եղանակը, որին ծանոթ եմ
դասագրքերից:

ՄԱՐՈ.— Դարձյալ թվեր ու դասագիրք... Դիչ է մնում սերդ
էլ լողարիթմական քանոնով հաշվես... Ինչպե՞ս կարելի է չտես-
նել հանքահորը, ուր եռում է խեղդող կյանքը... Այ չրայրը...

ՌՈՒԲԵՆ.— չրայրը, ի՞նչ:

ՄԱՐՈ.— Այրվում է կրակի պես, սիրում է հանքագործների
կյանքը: Ես անկեղծ ցավում եմ, Ռուբեն, որ չրայրի անձնու-
րաց աշխատանքը քեզ չի ոգևորում:

ՌՈՒԲԵՆ.— Ինձ ոգևորում են սեպ չախաղծերը, ինչո՞ւ
զմայլվել ուրիշի գիտական պատրանքներով:

ՄԱՐՈ.— Պատրանքներով... Դու դարձյալ Աթանեսյանի հը-
նամաշ երգն ես կրկնում:

ՌՈՒԲԵՆ.— Ինձ թվում է՝ Արսեն Գեորգեիչն այնքան նըշա-
նավոր մասնագետ է, որ անպատվաբեր չէ նրա հեղինակավոր
կարծիքի հետ հաշվի նստել. իսկ նա ասում է՝ եթե չրայրի ի-
դեան այդքան կենսական նշանակություն ունենար, ապա մի՞թե
դրանով չեին զբաղվի արևմուտքի խոշորագույն գիտնականները:

ՄԱՐՈ.— Արևմուտքի համար չեն մեր հանդուգն մտանը-
դացումները, դրանք միայն մեզ համար կարող են իրականանալ:

ՌՈՒԲԵՆ.— Բայց չրայրը դեռ գիտնական չէ:

ՄԱՐՈ.— Նա տողորված է վեհ դադարից (սխառվա): Ռու-
բեն, սիրելիս, ես ուզում եմ այնպես ապրենք, որ մեր կյանքի
մայրամուտին, վերհիշելով այս տարիները, երբեք ամոթի ըզ-
րացումը չհամակի մեզ՝ թեկուզ մեկ անկատար երազանքի հա-
մար: Եվ եթե թանկ է քեզ մեր սերը, ապա դու պետք է այդ-
պիսին լինես (Ռուբենը ազդված դուրս է գնում և հանդիպում չր-
այրին):

ՀՐԱՅՐ.— Այդ ուր, Ռուբեն:

ՌՈՒԲԵՆ.— Ծխախոտ դնելու (գնում է):

ՀՐԱՅՐ.— (Զարմացած նայելով Ռուբենի ետևից) Ի՞նչ է պա-
տահեր:

ՄԱՐՈ.— Զգիտեմ: (Փոխելով խոսակցությունը) Արդեն պատ-
րաստ ես:

ՀՐԱՅՐ.— Կարծեմ... Թթվումն արդեն լցված է, մնացել է
ծածկել վերջին բացվածքի պատերը, այն էլ Արմանուշն ուղեց
ինքն անել:

ՄԱՐՈ.— (Խորամանկորեն) Եվ դու իհարկե սիրով ընդառա-
ջեցիր նրան:

ՀՐԱՅՐ.— Դժվար է մերժել նրան... Բայց ի՞նչ եղավ Հայկազ
Ավետովիչը, մի՞թե առանց նրան պիտի փորձարկենք:

ՄԱՐՈ.— Ինձ թվում է հայրիկը կհասնի, նա այնպես սպա-
սում էր այս օրվան:

ՀՐԱՅՐ.— Դու խոսիր հեռախոսով, մի՞նչ այդ ես կախարասու-
վեմ (գնում է կից սենյակը):

ՄԱՐՈ.— (Հեռախոսով) Խնդրեմ միացնեք կայարան... Այ՛, կայարանն է... Ասացեք խնդրեմ, Երևանի գնացքը... ինչպե՞ս...
կես ժամ առաջ (կախում է լսափողը): Հրայր, հայրիկը գալիս է:

ՀՐԱՅՐ.— (Կից սենյակից) Գալի՞ս է, ուրեմն կհասնի... Հիմա
արդեն հանդիստ եմ:

ՄԱՐՈ.— (Մոտենում է պատուհանին) Ի՞նչ գեղեցիկ է (ար-
տասանում է).

«Էն Հոսու ձորն է, ուր հանդիպակաց
ժայռերը խորունկ նոթերը կիտած,
Դեմ ու դեմ կանգնած համառ ու անթարթ,
Հայացքով իրար նայում են հանդարտ»:

(Հրայրը վերադառնում է):

ՀՐԱՅՐ.— Անմահ Թումանյանը լավ է երգել Հոսին... Ա՛յ,
Մարո, եթե ես բանաստեղծ լինեի, ապա անհուն բերկրանքով
կգովերգեի այս լեռների մեջ աշխատող մարդկանց:

ՄԱՐՈ.— Հուսով եմ, որ քո փոխարեն նախադիծդ կխոսի:

ՀՐԱՅՐ.— Տեսնենք, Մարո, ես շատ կուզեի այդ:

ՄԱՐՈ.— Հրայր, իսկ փառքը քեզ չի՞ հրապուրում:

ՀՐԱՅՐ.— Փառքը... ինչո՞ւ չէ, բայց ես չեմ կարող գերի
դառնալ նրան: Ճշմարիտն ասած, ինձ թվում է, եթե անձնալի-
րարար աշխատենք, ապա փառքն ինքն իրեն կգա, չէ՞ որ նա
հիմա մեր անբաժան ուղեկիցն է դարձել:

ՄԱՐՈ.— Որքան գեղեցիկ երազել գիտես դու, հրայր (ցածր):
Եվ ինչպես այդ պակասում է...

ՀՐԱՅՐ.— Պետք է սովորեցնել... Չէ՞ որ դու կարող ես այդ
անել:

ՄԱՐՈ.— Ես շատ կուզեի:

ՀՐԱՅՐ.— Ուրեմն փորձիր... Դա քեզ կհաջողվի:

ՄԱՐՈ.— Դու համոզված ես:

ՀՐԱՅՐ.— (Նստելով լուսամուտի գոգին) Անպայման Զէ որ խկական սերն ամեն ինչ կարող է անել: Նա լուսավորում է մարդուն այնպես... ա՛յ, այնպես, ինչպես հիմա վառ արևի շողերը քեզ... Որքան սաղում է քեզ այդ:

ՄԱՐՈ.— (Կատակով) Ձեմ հասկանում, մեկին դուր եմ դալիս իրիկնամուտին, մյուսին՝ վառ արևի շողերում:

ՀՐԱՅՐ.— Դու պետք է միշտ դուր դաս նրան, ով ուժգին է սիրում քեզ... խկական սիրով:

(Ներս է մտնում Արմանուշը, նրա գալուստը մտերիմ գրույցով տարված խոսակիցների համար մնում է աննկատելի: Արմանուշը տեսնելով նրանց՝ ազդվում է):

ՀՐԱՅՐ.— Արմանուշ:

ԱՐՄԱՆՈՒՇ.— (Թաքցնելով հուզմունքը) Ես եկա ձեզի հայտնելու, որ չորրորդ բացվածքն էլ պատրաստ է:

ՀՐԱՅՐ.— Շնորհակալ եմ, Արմանուշ:

ՄԱՐՈ.— (Հրայրին) Ես տեսնում եմ, որ ավելի բարի սիրտ, քան Արմանուշինն է, հաղիվ թե քեզ հաջողվեր գտնել:

ՀՐԱՅՐ.— Ճիշտ է, ես երբեք չեմ մոռանա նրա ջերմ վերաբերմունքը իմ այս գործին:

ԱՐՄԱՆՈՒՇ.— Հող չէ... Դուք ամենքդ էալ ջերմությամբ շրջապատած եք ինձի. իմ ըրածը շատ պղտիկ բան մ'է... Եվ հեռու, ինձի այնպես կթվա, որ Մարոյի հուզմունքը ավելի շատ պիտի ըլլա:

ՄԱՐՈ.— Ինչո՞ւ:

ԱՐՄԱՆՈՒՇ.— (Մարոյին) Զէ որ դուն կհուզվիս այս երկու ճողու համար մեկին:

ՄԱՐՈ.— (Ծիծաղելով) Դու այդպե՞ս ես կարծում:

ՀՐԱՅՐ.— Դե, ես գնացի... խնդրում եմ չուշանաք (Գնում է: Դրսից լսվում է սրինգի ձայն: Արմանուշը մտազբաղ լսում է):

ԱՐՄԱՆՈՒՇ.— Երանի՜ ձեզի... դալ՞ու է արդյոք այն օրը, երբ էս ալ պիտի աշխատիմ դիպլոմին վրա:

ՄԱՐՈ.— Արմանուշ, այնքան քաղցր են ուսանողական տարիները, որ մի շտապիր նրանց վրայից թռչել: Գիտե՞ս ինչ հաճելի զգացմունք է այդ... Դու առաջին անգամ կյանքում կը հասկանաս, թե ինչ է մտերմությունը:

- ԱՐՄԱՆՈՒՇ.— Իսկ դու հավատում ես մտերմությանը... մը-
տերմություն առանց սիրո:
- ՄԱՐՈ.— Առանց սիրո... Ոչ:
- ԱՐՄԱՆՈՒՇ.— Ուրեմն քանի՞ հոգու կարելի է մեկին սիրել:
- ՄԱՐՈ.— Բոլոր լավ մարդկանց:
- ԱՐՄԱՆՈՒՇ.— Բայց լավ մարդիկ շատ շատ կան մեզ մոտ:
- ՄԱՐՈ.— Ուրեմն բոլորին էլ պետք է սիրել:
- ԱՐՄԱՆՈՒՇ.— Մակայն հրանցից մեկը պիտի ըլլա սրտին
մեջ, այնպես չէ:
- ՄԱՐՈ.— Անպայման:
- ԱՐՄԱՆՈՒՇ.— Հապա ինչպե՞ս ընտրել, որո՞ւն:
- ՄԱՐՈ.— Նրան, ով պատրաստ է քեզ հետ միասին ամեն ինչ
անել այս կյանքի համար:
- ԱՐՄԱՆՈՒՇ.— Ինձի հետ:
- ՄԱՐՈ.— Իհարկե, չէ՞ որ դու էլ պետք է մեզ հետ աշխատես:
- ԱՐՄԱՆՈՒՇ.— Որքան կիսափաղելի ես ալ ձեզի պես օգտակար
ըլլալ դորժին:
- ՄԱՐՈ.— Իսկ դրա համար հարկավոր է շատ աշխատել, դդալ
մեր կյանքի ողջ հրապույրը, սիրել այդ կյանքը:
- ԱՐՄԱՆՈՒՇ.— Գիտեմ, դուք ամենքդ ալ այդ կերպեք:
- ՄԱՐՈ.— Ճիշտ է... իսկ դու չե՞ս երազում, Արմանու՛շ:
- ԱՐՄԱՆՈՒՇ.— Իմ վաղեմի մեկ երազս իրականացավ, այժմ
հայրենիքիս մեջ եմ:
- ՄԱՐՈ.— Իսկ մյ՞նչը:
- ԱՐՄԱՆՈՒՇ.— Մյ՞նչը... (Մտազբառ): Չեմ գիտեր, իբրավ
(շշակի ձայն): Դե երթանք, ժամն է:
- ՄԱՐՈ.— Մի բռալե... իսկույն կդամ (զնում է կից սենյակը):
- ԱՐՄԱՆՈՒՇ.— (Մոտենում է Ռուբենի գծագրերին ու նայում:
Հետաքրքրված է): Կարծես սա հանքահորը ես տեսած պիտի ըլ-
լամ... (ուշադիր զննում է): Ի՜նչ հմանություն... Բայց ուսկի՞ց
ես տեսած պիտի ըլլա այդ (զալիս է Մարոն):
- ՄԱՐՈ.— Ես պատրաստ եմ... Այդ ի՞նչ ես այդպես հայում:
- ԱՐՄԱՆՈՒՇ.— Մարո, ուսկի՞ց է վերցված Ռուբենի սա
միտքը:
- ՄԱՐՈ.— Ո՞ր միտքը:
- ԱՐՄԱՆՈՒՇ.— Սա հախաղծին:

ՄԱՐՈՒ. — Կապն է, չէ՞:

ԱՐՄԱՆՈՒՇ. — Ձեմ դիտեր, բայց կարծես թե ինձի ծանոթ
պիտի ըլլա:

ՄԱՐՈՒ. — Շփոթում ես, Արմանուշ, ինչպե՞ս կարող էիր գու
այդ մասին իմանալ, երբ դա բոլորովին նոր բան է:

ԱՐՄԱՆՈՒՇ. — Նո՞ր... Թերեւս սխալվում եմ (գալիս է Շա
հենը):

ՇԱՀԵՆ. — Ուղում եմ պատվական մոմենտը նկարահանել...
Պատկերացնում եք, փորձնական սարքավորման թողարկումը
Շամլուղում... Չախից՝ ստալինյան մրցանակի ապագա լաուրե
ատ Հրայր Իսահակյանը, աջից՝ նրա մտերիմ ընկերները, իսկ
վերջին պլանի վրա լեւները մթնեցնում է պրոֆեսոր Աթանես
յանի ուրվագիծը: Դե աղջիկներ, դարդարվեցեք մայիսյան ծա
ղիկներով, հիմա ապարատը կրերեմ (զնում է կից սենյակը):

ԱՐՄԱՆՈՒՇ. — Զարդարվե՛լ:

ՄԱՐՈՒ. — Դու դեռ չես վարժվել մեր Շահենի կատակներին:
Դե գնա՛նք, թե չէ նա մեզ կուշացնի (Մարոն ու Արմանուշը
զնում են, գալիս է Շահենը՝ լուսանկարչական ապարատը ձեռ
քին):

ՇԱՀԵՆ. — հապա՛, ստուգե՛նք (ապարատը մոտեցնում է աչքե
րին, գալիս է նվարդը. երան հանկարծ տեսնելով, Շահենը ցնց
վում է): Վա՛հ ա՛յ քեզ տեսիլք:

ՆՎԱՐԴ. — Դե, սպասում եմ:

ՇԱՀԵՆ. — Ի՞նչ... Ա՛, հաճույքով:

ՆՎԱՐԴ. — Ուրա՞խ դեմքով, թե՞ լուրջ:

ՇԱՀԵՆ. — Իհարկե ուրախ:

ՆՎԱՐԴ. — Ինչո՞ւ իհարկե:

ՇԱՀԵՆ. — Որովհետեւ ինձ ես տեսնում:

ՆՎԱՐԴ. — Որ էդպիսի է, կտխրեմ:

ՇԱՀԵՆ. — Ինչո՞ւ:

ՆՎԱՐԴ. — Իսկ ի՞նչ ունեմ ուրախանալու:

ՇԱՀԵՆ. — Ո՞ւղում ես ասեմ (մեկուսի): Ձե՛, չեմ կարող:

ՆՎԱՐԴ. — Դե:

ՇԱՀԵՆ. — Կալ. Հրայրի աշխատանքի համար ուրախացիր:

ՆՎԱՐԴ. — Իսկ ես ուղում եմ քո աշխատանքը տեսնել:

ՇԱՀԵՆ. — Մի օր էլ մեր տանը հարուստիք կլինի:

ՆՎԱՐԴ.— Ե՞րբ:

ՇԱՀԵՆ.— Շուտով:

ՆՎԱՐԴ.— Ճշմարի՞տ:

ՇԱՀԵՆ.— Մի՞թե ես քեզ կարող եմ խաբել:

ՆՎԱՐԴ.— Ինչ իմանամ (նստում է):

ՇԱՀԵՆ.— (Մոտենալով նվարդին) Նվարդ... Նվարդ, ես քեզ ուզում եմ... Ես ուզում եմ քեզ... Մի լավ նկարահանել (ֆուտ-
-ապարատն ուղղում է նվարդին ու սկսում է արագ-արագ նկա-
րել): Այդպես... Հիմա պրոֆիլ... Նորից անփաս... Հիմա էլ ձախ...

ՆՎԱՐԴ.— (Կեղծ ջղայնացած) Հեռո՛ւ:

ՇԱՀԵՆ.— Իսկ հիմա ժպտո՞ւ, ժպտո՞ւ քո ուրախ ու դերսի
ժպիտով, այնպես, ինչպես կժպտայիր, երբ քո ասպետը հան-
կարծ քեզ սեր խոստովաներ (բռնում է նվարդի ձեռքը):

ՆՎԱՐԴ.— (Կատակով) Բայց ես նախ պետք է լսեմ այդ աս-
պետի խոստովանությունը:

ՇԱՀԵՆ.— Ինչպես (նայելով նվարդի քեի ժամացույցին): Օ՛,
Նվարդ, ուշացանք (նվարդի հետ վազում է, լավում է հեռախոսի
զանգը): Նվարդ, դու վաղիր, ես խելույն կհասնեմ (վերցնում է
լսափողը): Այ՛, լսում եմ... ո՛ւմ հետ... Երևանի՞, լավ, լավ սպա-
սում եմ... (մեկուսի) ինչ անժամանակ դանդ (դեպի դուռ):
Նվարդ, երևանից է (վերցնում է լսափողը): Այ՛, լսում եմ, այո,
այո, Շահեն Սաչատուրովիչ Սարոյանը լսում է... Ո՞վ է խո-
սում... Ո՞ր դիրեկտորը... Ա՛ խոստիտուա՞ր, բարե ձեզ, բարե
ձեզ ընկեր Բուռնադյան... Ոչ, ոչ, ի՞նչ եք ասում, ինչպե՞ս կա-
րող եմ ես ձեզ մոռանալ. դուք այնքան բարի դանդեցիք իմ
թոշակի հարցում... Ինչպե՞ս... Փորձը... Այո, այո, հենց հիմա...
Ո՞վ չի լսում, ալ՛, ալ՛... կարեցին (վազում է դեպի դուռ,
նորից զանգ: Դառնում է ու վերցնում լսափողը): Այ՛, լսում եմ,
ուղղակի կարվեց... Ես կարծեցի վերջացրիք... Ո՞վ է ուզում
խոսել... Ծառուկյանը... Այ քեզ փորձանք (դեպի դուռ): Նվարդ,
Ծառուկյանն է, անտարակույս Ծառուկյանն է... դու դնա, ես
խելույն կգամ... (հեռախոսով): Այո, այո ես եմ, ընկեր Ծառուկ-
յան... Շնորհակալություն, լավ եմ... Ինչպե՞ս... ծաղիկները...
Ա՛, այն ծաղիկները, որ խնդրել էիք ձեր կոլեկցիայի համար...
իհարկե հավաքել եմ... Բոլոր սարերից, ձորերից ու լանջերից...
Չորացրել եմ... Ոչ, ոչ, հանդիսա եղեք, մի փութ... Զարժե, չար-

ժե... Անպայման կրեբեմ... Ո՞վ է ուղղում խոսել, ընկեր Աղատ-
յանը... Բարե ձեզ, ընկեր Աղատյան... պրոֆեսոր Նարինյանը...
Դեռ ոչ... սպասում ենք... էլ ում խնդրենք... պրոֆեսոր Աթա-
նեսյանի՞ն... Անհույս բան է, կտրականապես մերժում է... Ձեր
անունից խնդրեմ, որ ներկա լինի... Հալ, լալ, կփորձեմ, ցուե-
սություն (կախում է լսափողը): Աթանեսյան... Էդ էր պակաս,
քայախաթթվին խնդրել (վազում է դեպի դուռը, հանկարծ Աթա-
նեսյանին տեսնելով՝ սառած կանգնում է):

ԱԹԱՆԵՍՅԱՆ.— Կարող եք չշտապել, երիտասարդ:

ՇԱՀԵՆ.— Ինչպե՞ս:

ԱԹԱՆԵՍՅԱՆ.— Փորձը տապալվեց, ձեր ընկերը վիրավոր-
ված է:

ՇԱՀԵՆ.— Ի՞նչ, վիրավորված (վազում է դուրս, Աթանեսյանը
դահլաղ մոտենում է պատուհանին, ապա գնում է Ռուբենի գծագրերի
մոտ. գալիս է վիրակապված հրայրը, որին բերում են Նվարդը,
Արմանուշը և Շահենը):

ԱԹԱՆԵՍՅԱՆ.— Յավալի իրողություն, դեռ լավ է, որ այդ-
պես վերջացավ (Հրայրին): Դուք արդեն համողվեցի՞ք, այնպես
չէ՞:

ՀՐԱՅՐ.— (Զսպելով ցավը) Ինչի՞ն:

ԱԹԱՆԵՍՅԱՆ.— Որ քանի ուշ չէ, պետք է թողնել այդ անի-
մատ խաղը:

ՀՐԱՅՐ.— Թողնել:

ԱԹԱՆԵՍՅԱՆ.— Ստիպված եք:

ՀՐԱՅՐ.— Դուք առաջարկում եք ինձ թողնել այն, ինչ ար-
դեն մի ու արյուն է դարձել ինձ համար, ինչ որ ես երազել եմ:

ԱԹԱՆԵՍՅԱՆ.— Թողեք երազանքը, իրականությունը ձեր
այսօրվա պետն է:

ՀՐԱՅՐ.— Ոչինչ, այրվածքները կանցնեն: Իսկ այս փորձը...

ՇԱՀԵՆ.— Իսկ փորձը պետք է կրկնել:

ՀՐԱՅՐ.— Պետք է որ ստացվեր. բայց ինչո՞ւ չստացվեց,
պրոֆեսոր, խնդրում եմ բացատրեք:

ԱԹԱՆԵՍՅԱՆ.— Դեռ շարունակում եք մտածել այդ մասին:

ՀՐԱՅՐ.— Միշտ:

ԱԹԱՆԵՍՅԱՆ.— Ինձ դարձացնում է ձեր անհիմն լավատե-
սությունը:

ԱՐՄԱՆՈՒՇ.— Անհրժն, իսկ ինձի աշնակա կթվա, որ Հրայրի աշխատանքը շատ հետաքրքիր է:

ԱԹԱՆԵՍՅԱՆ.— Օրիորդ Մարտնշյան, ինձ թվում է, որ ձեզ համար դեռ վաղաժամ է համարձակ եղբակացություններ անել:

ՀՐԱՅՐ.— Բայց միթե հետաքրքիր չէ ելք դանել:

ԱԹԱՆԵՍՅԱՆ.— Նույնիսկ անհնար է:

ՀՐԱՅՐ.— Անհնար... Ոչ, ես չեմ ուղղում հաշտվել այդ մտքի հետ, ելք պետք է դանել:

ՇԱՀԵՆ.— Ոչինչ, Հրայր, մի բան կմտածենք:

ԱԹԱՆԵՍՅԱՆ.— Օհ, անսպասելի հայտնադործություն, շատ ուրախ եմ ձեզ համար, Մարտնշյան:

ՇԱՀԵՆ.— Ավելի լավ է Հրայրի աշխատանքի համար ուրախանաք, պրոֆեսոր (գալիս է նարինյանը մոտենում և գրկում Հրայրին):

ՆԱՐԻՆՅԱՆ.— Այո, տեսնում եմ այրվածքները քեզ ավելի քիչ են ցավ պատճառում, քան փորձի անհաջողությունը:

ՀՐԱՅՐ.— Բայց ես աշնակա համոզված էի, պրոֆեսոր:

ՆԱՐԻՆՅԱՆ.— Մի վհատվի, սիրելիս, այսպիսի փորձություններ դիտության մեջ անխուսափելի են... Իսկ հիմա դեռ հանդրատացիր, վաղվանից կսկսենք նոր փորձեր:

ՀՐԱՅՐ.— (Ուրախացած) Նոր փորձեր:

ՆԱՐԻՆՅԱՆ.— Անսպասելի: Դե դեռ... Հրայր, իսկ ուր են հաշվումները:

ՄԱՐՈ.— Ինձ մոտ է, հայրիկ (տալիս է հաշվումների տետրը):

ՆԱՐԻՆՅԱՆ.— (Ուսանողներին) Դուք էլ գնացեք, բարեկամներս (ուսանողները գնում են):

ԱԹԱՆԵՍՅԱՆ.— Հայկադ Ավետովիչ, եկեք պարզ խոսենք, ինչպես հատուկ է ջենտլմեններին... Ինչու եք խաղում դուք ձեր հեղինակության հետ... Ո՞ւմ են պետք այս անախորժ դեպքերը:

ՆԱՐԻՆՅԱՆ.— (Գրպանից հանելով ծխախոտը) Ծխախոտ չեք կամենում (նայում է տետրը):

ԱԹԱՆԵՍՅԱՆ.— (Վերցնելով մի գլանակ) Շնորհակալություն... Դուք դժվարանում եք պատասխանել:

ՆԱՐԻՆՅԱՆ.— Ոչ, ես մտածում եմ պատասխանի բարեզուտ առ ընտրել:

ԱԹԱՆԵՍՅԱՆ.— Մի կաշկանդեք ձեզ, կարող եք պարզ խոսել:

ՆԱՐԻՆՅԱՆ.— Գիտե՞ք ինչ, գիտնականը հանուն ճշմարտության կարող է վտանգել իր հեղինակությունը, նույնիսկ կյանքը: Սովորաբար զբաղւից վախենում են միայն երկշտաները, իսկ հետապետ մարդիկ զբա մեջ տեսնում են գիտությունն առաջ մղելու պայմաններից մեկը: Ահա թե ինչ պետք է գիտենաւ և բարձրագույն գաղտնի դատախոսը... Իսկ դուք այդ չեք զգում:

ԱԹԱՆԵՍՅԱՆ.— Ինչպե՞ս:

ՆԱՐԻՆՅԱՆ.— Դուք շատ քիչ բան եք անում, որպէսզի ինտախտուարը առաջ շարժվի:

ԱԹԱՆԵՍՅԱՆ.— Ուրեմն ո՞վ եմ ես:

ՆԱՐԻՆՅԱՆ.— Կրակմարիչ, այո, այո, ОГНЕУШИТЕЛЬ. դուք փորձում եք մարել այն անշեջ հուրը, որ բոցավառվում է ուսանողների սրտում:

ԱԹԱՆԵՍՅԱՆ.— Ամենայն հուր չպետք է տարածվի, զբաղւից հրդեհ է առաջանում... Եվ ինչպէս տեսնում եք, ձեր ուսանողներից ոմանք կարող են տուժել:

ՆԱՐԻՆՅԱՆ.— Թող այդպէս լինի, բայց չէ՞ որ նա այդ անում է հայրենիքին ծառայելու համար:

ԱԹԱՆԵՍՅԱՆ.— Խնդրում եմ շտաբների ուսանողությանը հայրենասիրության կեղծ հասկացությունը:

ՆԱՐԻՆՅԱՆ.— Հետաքրքիր է, իսկ ինչպէս եք դուք հասկանում իսկական հայրենասիրությունը (հեզնաքով): Կյանքի երեւոյթութիւնների անկիրք ընկալում և ուսումնական ծրագրի կետերով դրոշմապատկած ինժեներների մասնագիտական թողարկում, այնպէս չէ... Ոչ, չի ստացվի, չի ստացվի:

ԱԹԱՆԵՍՅԱՆ.— Ես տեսնում եմ, որ դուք բոլորովին եք և ձեր խոսքերը վերադրում եմ միայն ձեր գյուրադրդիւ խառնրված քին: Սակայն հիշեցնում եմ, որ դիրեկտիւ օրգանների կողմից մինչև օրս ոչ մի գիտողություն չի արվել ինձ դատաւանդման մասին:

ՆԱՐԻՆՅԱՆ.— Կանեն, եթե այդպէս շարունակվի... Հասկացե՛ք վերջապէս, որ այսօրվա շղիաակցված սխալը վաղը կարող է հանցադորձություն դառնալ:

ԱԹԱՆԵՍՅԱՆ.— Սխալ... Եվ դուք դեռ խոսում եք իմ ինչ-որ չեղյալ սխալների մասին, այն տխուր դեպքից հետո, ինչ կա-

տարվեց ձեր գիտլոմնիկի հետ... Չէ՞ որ դա կատարյալ պարտություն էր:

ՆԱՐԻՆՅԱՆ.— Իդուր եք չարախնդում, պրոֆեսոր. չրայք Իսահակյանի հետ պատահած այսօրվա դեպքը սխալ չէ, այլ սոսկ անհաջողություն, որ միշտ կարող է առաջանալ յուրաքանչյուր նոր մտահղացման դեպքում:

ԱԹԱՆԵՍՅԱՆ.— Բայց այդ սոսկ անհաջողությունը կարող է դարձյալ կրկնվել:

ՆԱՐԻՆՅԱՆ.— Դա ինձ չի վհատեցնում: Այո, անհաջող փորձեր կարող են լինել և առաջիկայում, բայց դադափարը, չէ՞ որ դադափարը կենսական է մեզ համար... Նայ ի վերջո պետք է հաղթանակի:

ԱԹԱՆԵՍՅԱՆ.— Չգիտեմ... Եվ հետո ինձ թվում է, թե կենսական է միայն այն, ինչ որ ունի է և շահավետ, իսկ ձեր Իսահակյանի (հեզնանքով) գիտական աշխատանքը, բայց նյութական վնասից, ոչ մի շահ չի բերում մեզ:

ՆԱՐԻՆՅԱՆ.— Դուք չեք ուզում տեսնել այն մեծ շահը, որ բերելու է ձեզ Իսահակյանի և նրա հման խիղախների դործը: Ինչպես երևում է, մենք տարբեր հասկացողություններ ունենք շահութաբերության մասին:

ԱԹԱՆԵՍՅԱՆ.— Դուք իդուր եք փորձում ինձ շփոթեցնել: Շահութաբերությունը մի իմաստ ունի միայն, որն այժմ խիստ ախտալ պրորվեմ է համաշխարհային տեխնիկայի համար:

ՆԱՐԻՆՅԱՆ.— Համաշխարհային տեխնիկան ... Ես չեմ ուզում լսել այդ հնամաշ բառերը, որ վաղուց մեռած է մեզ համար:

ԱԹԱՆԵՍՅԱՆ.— Ինչո՞ւ, կան հարցեր, որ ընդհանուր են բոլոր երկրների համար: Միթե նույն շահութաբերության համար չի՞ պայքարում այժմ մեր պետությունն այնպես, ինչպես, ասենք, Ամերիկան:

ՆԱՐԻՆՅԱՆ.— Ամերիկան... Ահա թե որտեղ է հասնում սահմանափակությունը: Ձեր հասկացած շահութաբերությունը ոչ թե շահութաբերություն է, այլ շահամոլություն, որից դուարի հոտ է փչում:

ԱԹԱՆԵՍՅԱՆ.— Օ՛հ, դուք արդեն անցնում եք քաղաքականությանը, որը կարծեմ մեր գիտական բանավեճի ոլորտից դուրս է:

ՆԱՐԻՆՅԱՆ.— Ոչ, մենք ապուխտիկ զիտություն չունենք, ևս
ամենուրեք քաղաքականություն ևս տեսնում:

ԱԹԱՆԵՍՅԱՆ.— Դուք խոսում եք այնպես, ինչպես կարող է
խոսել միայն դոցենտ Ազատյանը:

ՆԱՐԻՆՅԱՆ.— Ա՛, ևս հասկանում եմ ձեր ակնարկի խմաստը:
Այո, ևս սրտանց ցավում եմ, որ մեծ պարտիայի շարքերում
չեմ, սակայն ինձ երբեք անպարտիական չեմ համարել և դրա
համար էլ գտնում եմ, որ իմ ուսանողը պետք է տքնի, սխալվի
ու բազում փորձությունների ենթարկվի հանուն ճշմարիտ դա-
ղափարի: Դա միայն կհարստացնի նրան և կդարձնի իսկական
քաղաքացի:

ԱԹԱՆԵՍՅԱՆ.— (Հեզմանքով) Ինձ հիացնում է ձեր պատա-
նեկական լավատեսությունը:

ՆԱՐԻՆՅԱՆ.— Իսկ ինձ դայրույթ է պատճառում ձեր մոայլ
հուսառատությունը: Հիմա ես ավելի եմ համոզվում, որ ձեր կոն-
սերվատիզմը դաղափարադրելության արդասիք է: Նվազ կանեք մի
փոքր անհանդուրժանաք ձեր զիպլոմնիկների վիճակով: Ինձ թվում
է, թե նրանք չեն կարող հաղթահարել զիտության մեջ, եթե
դասախարակվեն ձեր պահպանողական հայացքներով, եթե նորի
սղացումը խորթ մնա նրանց (գնում է կից սենյակը):

Վ Ա Ր Ա Գ Ո Ի Յ Ր

ԵՐԿՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Երրորդ պատկեր

Հյուսիսային կողմից՝ պրոմեթեոս Նարինյանի բնակարանում: Չախից դուռը ծանում է դեպի միջանցք, աջից՝ բաց պատշգամբը: Դիմացը սեղանատունն է, որ մասամբ ծածկված է վարագույրով: Ամբողջ գործողության բնագիծը սեղանատնից լսվում են երգ, նվագ և ուրախ բացազանչություններ: Չախից ասիականները ծանում են դեպի Նարինյանի առանձնասենյակը: Երեկո է: Մարոյի ծննդյան չարեղարժի առթիվ հավաքված ուսանող-ուսանողուհիները պարում են: Լսվում է զանգի ձայն: Սիրան Միխայլովնան գնում է նոխասենյակ և վերադառնում Ծառուկյանի հետ:

ՍԻՐԱՆ ՄԻԽ.— Ա՛, Արդար Պետրովիչ, համեցեք, համեցեք, շատ ուրախ եմ:

ԾԱՌՈՒԿՅԱՆ.— Թանկազին Սիրան Միխայլովնա, շնորհավորում եմ ձեր ծննդյան տոնը (համբուրում է նրա ձեռքը): Ինձնից ոչինչ չեք թաքցնի, Հայկազ Ավետովիչն ասաց, որ դուք այսօր 23 տարեկան եք (շփոթվում է): Այսինքն, ինչպես 23, ես կարծես դարձյալ շփոթեցի:

ՍԻՐԱՆ ՄԻԽ.— (Միծաղելով) Կարծես (մոտենում է Մարոն): Ահա թե ում պետք է շնորհավորել:

ԾԱՌՈՒԿՅԱՆ.— (Մարոյին) Այո, այո, անտարակույս այդ տարիքն ավելի ձեզ է վայելում, շնորհավորում եմ, Մարո, շնորհավորում... Իսկ ուր է Հայկազ Ավետովիչը:

ՍԻՐԱՆ ՄԻԽ.— Ակադեմիայում, երևի հիմա կղա, ներեցեք ինձ (գնում է):

ԾԱՌՈՒԿՅԱՆ.— Այո, այո, այսօր այնտեղ նոր ակադեմիկոսների ընտրությունն է. ինչպես մասայա:

ՄԱՐՈ.— Արդար Պետրովիչ, դիտեք, Արմանուշը մի խումբ հայրենադարձների հետ ընդունվել է մեր ինստիտուտը:

ԾԱՌՈՒԿՅԱՆ.— Ներեցեք, այդ ո՞ր Արմանուշն է:

ՄԱՐՈ.— Չե՞ք հիշում... Պրոֆեսոր Մարանջյանի ազգականը (ցույց տալով պարող Արմանուշին): Ահա:

ԾԱՌՈՒԿՅԱՆ.— Մարանջյան (տեսնելով Արմանուշին): Ինչպե՞ս

չէ, անտարակույս հիշում եմ... Շնորհավորում եմ, շնորհավորում եմ, որ ընդունվել եք մեր ինստիտուտը:

ԱՐՄԱՆՈՒՇ.— Շնորհակալություն (շարունակում է պարել):

ՄԱՐՈ.— Ուզում եք ծանոթացնեմ նաև մյուսներին հետ:

ԾԱՌՈՒԿՅԱՆ.— Ոչ, կծանոթանամ բոլորին հետ (նկատելով մտազբաղ Հրայրին): Իսկ դուք ինչո՞ւ չեք պարում, երիտասարդ:

ՀՐԱՅՐ.— Ես հանդստանում եմ:

ԾԱՌՈՒԿՅԱՆ.— Հանդստանում եք... Տարօրինակ է ձեզնից այդպիսի խոսք լսել (նայելով պարող զույգերին): Կամ բան է երիտասարդությունը (նեղանում է):

ՄԱՐՈ.— (Հրայրին) Տեսնում ես, բոլորը նկատում են. ասա՛, խնդրում եմ, ի՞նչ է պատահել:

ՀՐԱՅՐ.— Ոչինչ, Մարո, թողնենք:

ՄԱՐՈ.— Ես չեմ ուզում, որ այսօր դու տխրես:

ՀՐԱՅՐ.— Ես տխուր չեմ (սկսվում է մի նոր պար):

ՄԱՐՈ.— Դե եկ սլաքենք (Ռուբենը մոտենում է Հրայրին ու Մարոյին):

ՌՈՒԲԵՆ.— (Մարոյին) Խնդրում եմ:

ՄԱՐՈ.— Մյուս պարին, Ռուբեն (սկսում է պարել Հրայրի հետ):

ԱՌԱՋԻՆ ՈՒՍ.— (Ռուբենին) Հերթի կանգնեցեք, քաղաքացի (լսվում է զանգի ձայն, ներս են մտնում Շահենը և նվարդը մեծ ծաղկեփնջով):

ԾԱՌՈՒԿՅԱՆ.— (Նայելով Շահենի կողմը) Այս ինչ շրջիկ ծաղկեփնջ է... Միանգամայն տարօրինակ է:

ՄԱՐՈ.— Նթե կողքը կանգնած է նվարդը, ապա պարդ է, թե ով է այդ ծաղկեփնջը:

ԱՌԱՋԻՆ ՈՒՍԱՆՈՂ.— Իհարկե Շահենն է:

ԵՐԿՐՈՐԴ ՈՒՍԱՆՈՂ.— Էլ ո՞վ կարող է լինել:

ՌՈՒԲԵՆ.— Նախ թույլ տվեք շնորհավորել Շահենին այսօրվա հաջող զեկույցման համար (երգում են):

ՇԱՀԵՆ.— (Երգից հետո) Թույլ տվեք շնորհավորել մեր սիրելի անվանակոչունուն: Ուշադրություն: Խոսք ունի ինքնուս բանաստեղծ Շահեն Խաչենց Սարենցը (կարդում է իր բանաստեղծությունը):

Նախերգ.

Այս պոեմը այսօր, օ՛,

Ձոնում եմ քեզ, իմ Մարո:

Միջներգ.

Մտրո սիրուն, խնդարեր
Ուսանողական իմ ընկեր,
Ինչքան ենք մենք սովորել,
Ելել, պարել խնդացել,
Ու կես ժամ էլ չենք տխրել:

Վերջներգ.

Փոքր էր Մարոն, դուրեկան.
Դարձավ 23 տարեկան:

ՄԱՐՈ.— Կեցցեն, Շահեն, էլի ամենաշնորհավր դու ես (Շահենի գրպանից ընկնում է մի գիրք, ուսանողները վերցնում են այն և տալիս Մարոյին):

ՇԱՀԵՆ.— (Շփոթված) Դա նվեր չէ... Դա մասնավոր սեփականութուն է:

ՄԱՐՈ.— (Վերցնում է գիրքը ու կարդում) Ստեփան, «Տրակտատ սիրո մասին», հատվածներ: Գոհ եմ ինքդ մի բան սովորել ես այստեղից:

ՌՈՒԲԵՆ.— Դժվար թե Ստեփան էլ նրան օղնի (Շահենին): Սիրահարված, սիրո հատված:

ՇԱՀԵՆ.— (Սիրան Միխայլովնային) Թույլ տվեք մեզ պարել, թանկադիր՝ Սիրան Միխայլովնա, քանի որ համաձայն ընտրության հախազած պլանների, մենք դեռ երիտասարդ ենք:

ՄԻՐԱՆ ՄԻԽ.— Եթե միայն դուք ինձ և Արդար Պետրովիչին հույնապես երիտասարդ համարեք:

ՇԱՀԵՆ.— Հաճույքով, պլանների գերակատարումը միշտ էլ ողջունելի է (դեպի տղաները): Ողջունելի՞ է, տղաներ:

ՏՂԱՆԵՐ.— Ողջունելի է:

ՇԱՀԵՆ.— (Դեպի տղեկները) Ողջունելի՞ է, տղեկներ:

ԱՂՋԻԿՆԵՐ.— Ողջունելի է (նրա է մտնում պրոֆեսոր նախնյանը):

ՇԱՀԵՆ.— Դե՛, ուրեմն ողջունեցեք Հայկազ Ավետովիչին:

ՆԱՐԻՆՅԱՆ.— Բարի երեկո, բարեկամներ:

ՉԱՅՆԵՐ.— Ա՛, Հայկա՛զ Ավետովիչ:

— Բարի երեկո, պրոֆեսոր:

— Բարե ձեզ, ընկե՛ր նորինյան:

ՆԱՐԻՆՅԱՆ.— Իսկ որտե՞ղ է Արմանուշը, կարծես չեմ տես-
նում:

ԱՐՄԱՆՈՒՇ.— Այստեղ եմ:

ՆԱՐԻՆՅԱՆ.— Հապա՛, մոտ ե՛կ, աղջի՛կս (Արմանուշը մոտե-
նում է): Մի լավ լուր պետք է հայտնեմ քեզ, աղվորիկ լուր:
Քիչ առաջ ինստիտուտի անունից ես շնորհավորական հեռագիր
ուղարկեցի ձեր հորը՝ Ուրալ:

ԱՐՄԱՆՈՒՇ.— Ինչո՞ւ:

ՆԱՐԻՆՅԱՆ.— Այսօր, հենց հիմա, մեր սիրելի պրոֆեսոր
Մարտիրոս Մարանջյանն ընտրվեց Հայաստանի Գիտությունների
Ակադեմիայի Թղթակից-անդամ (ուսանողները ջերմորեն շնորհա-
վորում են Արմանուշին):

ԱՐՄԱՆՈՒՇ.— (Ձգացված) Դուք չափազանց բերկրալի լուր
մը հաղորդեցիք: Որքան երջանիկ պիտի ըլլա հայրս, երբ իմա-
նա... Ե՞րբ վերջապես եղբայրս ալ կձգե Ամերիկան, կվերադառ-
նա հայրենիք և կկանգնե կողքիս, իբրե իր հաբադաս երկրի հը-
պարտ քաղաքացի:

ՆԱՐԻՆՅԱՆ.— Հպարտ... Լավ խոսք ասացիր, աղջի՛կս: Ճիշտ
է, մենք պետք է անսահման հպարտ լինենք (դառնալով ուսա-
նողներին): Նույնիսկ ձեր կեցվածքից պետք է հպարտություն
զգացվի (Ռուբենին): Հապա՛, ուղիղ կանգնիր (Ռուբենն ուղղվում
է): Այդպես (մյուսներին): Դուք էլ (բոլորն ուղղվում են):

ԱԶԱՏՅԱՆ.— (Ներս մտնելով) Այդպես (Շահենը ուսանողներին
շարք է կանգնեցնում): Այս ի՞նչ է, այս շարասյունը իմ դալու-
սաթի՞վ եք կաղմակերպել:

ՆԱՐԻՆՅԱՆ.— Թերևս այդպես:

ՇԱՀԵՆ.— Ձգա՛ստ, հավաստ՛ր (մոտենալով Ազատյանին): Հյու-
րերի շարասյունը կաղմ ու պատրաստ սպասում է Ձեր հրա-
մանին, ընկե՛ր Ազատյան:

ԱԶԱՏՅԱՆ.— Բարե ձեզ, ընկերներ՛:

ՔՈԼՈՐԸ.— Ողջություն ենք ցանկանում, ընկե՛ր Ազատյան:

ՆԱՐԻՆՅԱՆ.— Արա՛մ, ներսեսովիչ, ինչպես տեսնում եմ,
դինվորական որոշ սովորություններ դեռ չեք մոռացել:

ԱԶԱՏՅԱՆ.— Այդ սովորությունները երբեք չպետք է մո-
ռանալ, դրանք մի օր կարող են մեզ պետք դալ (դառնալով

ուսանողներին): Աղա՛տ... (Մարոյին): Շնորհավորում եմ, Մարո (տալիս է մի գիրք):

ՄԱՐՈ.— (Կարդում է խորագիրը) „Советская поэзия“. Ի՞նչ լավ է :

ԱԶԱՏՅԱՆ.— Այստեղ շատ գեղեցիկ տողեր կան հովիւրված ճիշտ այն հսկարտությանը, որի մասին խոսում էր Հայկազ Ավետուկիչը (ուսանողներին): Բայց այս ի՞նչ է, մի՞թե այսպես են գէարճանում (նստում է դաշնամուրի մոտ և նվագում, ուսանողները պարում են):

ՆԱՐԻՆՅԱՆ.— (Պարից հետո) Ռուբե՛ն, հաս՛տ, մի խմբա՛կան երգ:

ՌՌԻԲԵՆ.— Հիմա (ուսանողներն սկսում են ցածր երգել):

ՄԻՐԱՆ ՄԻԽ.— Երեւի մենք ձեզ խանդարում ենք:

ԶԱՅՆԵՐ.— Ոչ, ոչ, ի՞նչ եք ասում:

ՆԱՐԻՆՅԱՆ.— Մի՛ առարկեք, Սիրան Միխայլովնան այս տան դիրձա՛վոր հրամանատարն է:

ՄԻՐԱՆ ՄԻԽ.— Ավելի լավ է զնանք մյուս սենյակը:

ՇԱՌՌԻԿՅԱՆ.— (Ազատյանին) Անտարակույս տարօրինակ է, մեր տանն էլ այդպես է, իմ կինն էլ մեր տան դիրձա՛վոր հրամանատարն է:

ՄԻՐԱՆ ՄԻԽ.— (Նարինյանին) Հայկա՛ղ, ես քո առանձնատե՛նյակում սեղան եմ պատրաստել, այնպես որ դուք ոչնչով չեք ձնջի երիտասարդներին, թող նրանք իրենց աղատ ու անկաշ՛կանդ զգան:

ՆԱՐԻՆՅԱՆ.— (Ազատյանին և Մառուկյանին) Գնանք ինձ մոտ, հետաքրքիր նորություններ ունեմ Ակադեմիայի այսօրվա հիւ՛տից (գնում են: Խումբը երգում է Շահենի դեկավարուրյամբ, երգի վերջում ներս է մտնում Սիրան Միխայլովնան):

ՄԻՐԱՆ ՄԻԽ.— Սիրելիներ՛ս, բաժակները ձեզ են սպասում:

ՇԱՀԵՆ.— Հանդիսավոր երթ գեսլի սեղանը. պուրնեղ (ուսանողները պարելով անցնում են սեղանատուն, մնում են Շահենը և նվարդը): Ուրեմն Արմանուշն ի՞նքն ասաց:

ՆՎԱՐԴ.— Սո՛ւս, ո՛չ մի խոսք:

ՇԱՀԵՆ.— Ի՞նչ ես ասում, ես համբ կլիներմ ինչպես Ապոլլոնի արձանի պատճենը թանգարանում:

ՆՎԱՐԴ.— Դե, ուրեմն լսիր, նա՛ որբում է նրա՛ն:

ՇԱՀԵՆ.— Ընչ, նրան պետք է օգնել. բայց սպասիր, նախ
ո՛ւմ պետք է օգնել:

ՆՎԱՐԴ.— Սիրելի՛ իմ Ապոլլոն, լավ կլիներ, եթե ամեն մեկը
նախ և առաջ իրեն օգնել:

ՇԱՀԵՆ.— Իրե՞ն, ոչ, ինչ ես ասում: Նախ պետք է ընկերո-
ջըն օգնել: Ուրեմն դույզ համար առաջին՝ Ռուբեն-Մարո, դույզ
համար երկրորդ՝ Հրայր-Արմանուշ, դույզ համար երրորդ... Հե-
տաքրքի՛ր է, ինչ է ասում այդ մասին Ստենդալը (վերցնում է
գիրքը և կարդում). «Գոյություն ունի չորս տեսակ սեր: Առա-
ջինը՝ սեր-կիրքն է, փոքրթուղալիան միանձնուհու սերը»:

ՆՎԱՐԴ.— Ի՞նչ հիմարություն, շա՛տ պետք է Մարոյին՝
օրինակ վերցնել ինչ որ փոքրթուղալիան միանձնուհուց:

ՇԱՀԵՆ.— Սպասի՛ր, սպասի՛ր, դեռ երեք տեսակ էլ կա (կար-
դում է). «Երրորդը՝ սեր-հրապուրանքն է, որ տիրապետում էր
Փարիզում 1760-ական թվականներին»:

ՆՎԱՐԴ.— Իսկ այդտեղ ոչի՞նչ չի ասում 1948 թվի մասին:

ՇԱՀԵՆ.— Ու՛ր ես շատապում, դեռ 188 տարի էլ կա:

ՆՎԱՐԴ.— (Վերցնում է գիրքը և պատահական մի էջ բացելով՝
կարդում է). «Սիրո մեջ ամենադժվարը առաջին քայլն է»: Շատ
լավ է ասված: Ահա թե քեզ ինչ պետք է հասկանալ:

ՇԱՀԵՆ.— Հիմա ես (բացում է գիրքը և կարդում). «Որքան
խելագարի պես է սիրում մարդ, այնքան մեծ ճիգ պետք է նա
գործադրի իր վրա, որպեսզի համարձակվի» ... Որպեսզի համար-
ձակվի...

ՆՎԱՐԴ.— Ի՞նչ:

ՇԱՀԵՆ.— Ոչ, ոչ, մենք նյութից շեղվում ենք, պետք է նը-
րանց օգնել:

ՄԻՐԱՆ ՄԻԽ.— (Ներս գալով) Ահա թե որտեղ եք դուք: Շա-
հե՛ն, Նվա՛րդ, ձեզ սպասում են (բաժակը ձեռքին գալիս է Ռու-
բենը ուսանողների հետ, Շահենին առաջարկում է բաժակը՝ երգե-
լով):

ՌՈՒԲԵՆ.— Մեր թամադան Շահե՛նն է, Շահե՛նն է:

ՇԱՀԵՆ.— (Ի վերջո ընդունելով) Շահենը համաձայն է (ուսա-
նողները նորից անցնում են հյուրասենյակ, որտեղից շուտով լրս-
վում են ուրախ բացագանչություններ: Քիչ հետո գալիս է մտա-
զբաղ Հրայրը):

ՀՐԱՅՐ.— Ուրախ են բոլորը, լավ է բոլորի համար, իսկ ես
խնչո՞ւ չեմ կարողանում ինձ գտնել... Այդ փորձը, այդ փորձը
(մտնում է Ռուբենը):

ՌՈՒԲԵՆ.— Հրա՛յր, խնչո՞ւ առանձնացար:

ՀՐԱՅՐ.— Թո՛ղ ինձ, Ռուբե՛ն:

ՌՈՒԲԵՆ.— Ի՞նչ է պատահել:

ՀՐԱՅՐ.— Ոչինչ:

ՌՈՒԲԵՆ.— Դե լավ, մի՛ ծածկիր... Խնչո՞ւ կախուլին կտներ՝
էփած էլ կու ճանչնամ քեզ... Չլինի դարձյալ նախադիպ մա-
սին ես մտածում:

ՀՐԱՅՐ.— Այո, ծանր է ինձ համար:

ՌՈՒԲԵՆ.— (Անտաքբեր) Ոչինչ, շատ մի՛ մտածիր, վերջը
կստացվի:

ՀՐԱՅՐ.— Դու այդ անկե՞ղծ ես մտնում:

ՌՈՒԲԵՆ.— Անկե՞ղծ... Դե եթե այդպես է, ես անկեղծ կխո-
սեմ: Ինչ էլ որ լինի, Հրա՛յր, ես սիրում եմ քեզ և պատրաստ
եմ ամեն ինչով օգնել. դրա համար էլ անկեղծ կլինեմ: Դու գի-
տես, որ ես միշտ էլ թերահավատ եմ եղել քո այդ նախադի-
նկամամբ, ես հիմա էլ չեմ հավատում դրան: Որպես բարե-
կամ ուզում եմ ճշմարտությունն ասել երեսիդ: Չի ստացվի,
մազի՛ստեր դի՛քսիտ, ցնորամտություն է այդ... Չի ստացվի, կա-
սեր, պրոֆեսոր Աթանեսյանը: Ես մի՛նչև հիմա էլ չեմ հասկա-
նում, մի՞թե քեզ չի մտահոգում քո ապագան, որ դո՛հաքերել
ես մի պատահական նախադիպ: Հապա մի՛ շուրջդ նայիր, տես
ի՞նչ լավ են ընթանում բոլորի դորձերը, իսկ դու, դու կորցրել
ես հավատդ քո նկամամբ:

ՀՐԱՅՐ.— Հավատա ...Ոչ, հավատա չեմ կորցրել:

ՌՈՒԲԵՆ.— Ուրեմն պետք է շարունակես աշխատե՛լ:

ՀՐԱՅՐ.— Տեսնենք, թեքե՞ս ժամանակավորապես հետաձգեմ:

ՌՈՒԲԵՆ.— Ժամանակավորապե՞ս, ուրեմն դեռ լիովին չե՞ս
հրաժարվել քո նախադիպ:

ՀՐԱՅՐ.— Ո՛չ:

ՌՈՒԲԵՆ.— Հրա՛յր, սիրելի՛ս, լսիր մտերիմ ընկերոջդ ձայ-
նը, որը չի ուզում քո պաշտպանության տապալումը տեսնել:

ՀՐԱՅՐ.— Տապալումը:

ՌՈՒԲԵՆ.— Դու հիմա շլացած ես քո նախադժով և դրա հա-
մար էլ չես կարողանում ստոնարյուն կերպով դատել:

ՀՐԱՅՐ.— Դիցուք ես շլացած եմ... Ապա Նարինյանը, Աղատ-
յանը... Նրանց էլ չես հավատում:

ՌՈՒԲԵՆ.— Ինձ թվում է, թե Աղատյանը տարված է քո աշ-
խատանքի գաղափարական կողմով միայն... Դա իհարկե կարե-
վոր է, բայց տեխնիկական նախադժի որոշող չափանիշը չէ...
Ինչ վերաբերում է Նարինյանին, ապա նա չափից ավելի լա-
վատես գիտնական է, մանավանդ քո նախադժի հարցում:

ՀՐԱՅՐ.— Ռուբեն, քանի որ դու ինձ հետ անկեղծ խոսե-
ցիր, ապա ես էլ ուզում եմ քեզ անկեղծորեն ասել, որ այն-
քան էլ չեմ հավատում այդ մադիստին, թեև նա քո միակ հե-
ղինակությունն է:

ՌՈՒԲԵՆ.— Ինչո՞ւ, միթե Աթանեսյանը մյուսներից պակաս
է սիրում գիտությունը:

ՀՐԱՅՐ.— Դիտես ինչ, Ռուբեն, սիրելի կարելի է յուրօրինակ
ձևով... Ա՛յ, կան խելադարի պես ծովասեր մարդիկ: Նրանցից շա-
տերը անհավասար մարտի են բռնվում ծովի խոտմահույղ տա-
րերքի հետ և ի վերջո հաղթում... Ոմանք էլ սիրում են ծովը
հեռվից, սիրում են արևի տակ սլառկած անկիրք զննել ջրի
հանդարտ ալիքները... Ինձ թվում է, թե Աթանեսյանը հենց
այդպես է սիրում գիտությունը:

ՌՈՒԲԵՆ.— Սպասի՛ր, Հրայր, դու ինչ-որ բան ես անար-
կում:

ՀՐԱՅՐ.— (Բարձրանալով տեղից) Ես շատ բան կուզեի քեզ
ասել, բայց այսօրվա սոնական տրամադրության մեջ հաղիվ թե
դու կարողանաս ինձ հասկանալ... Գնանք Մարոյի մոտ, Ռու-
բեն (այդ ժամանակ դուրս է գալիս աչքերը կապած Շահենը, ա-
պա ամբողջ խուփք: Շահենն աշխատում է բռնել մեկն ու մեկին և
բռնում է շփոթված Հրայրին: Ուրախ բացագանչություններ):

ՀՐԱՅՐ.— Այս ի՞նչ բան է, ես ոչինչ չեմ հասկանում:

ՁԱՅՆԵՐ.— Ոչինչ, հիմա կրացատրենք:

— Կհասկանաս:

— Կապեցի՞ք աչքերը:

ՇԱՀԵՆ.— Հասարակ բան է, իսկույն կհասկանաս: Այսպես՝

կապում ենք քո գեղեցիկ աչքերը (կապում է): Այսպես պատեց-
նում ենք քեզ (պատեցնում են Հրայրին): Իսկ հիմա, թե շնորհք
ունենա, բռնիք ամենալավիկին և լավ իմացիր, վարձդ մի համ-
բույր է (սկսում է խաղը, խումբը փախչում է Հրայրից: Մյուսնե-
րի համար աննկատելի, նվարդը Արմանուշին հրում է դեպի Հր-
այրը. ուրախ բացագանչություններ):

ՄԱՐՈ.— Դե', սպասում ենք:

ՇԱՀԵՆ.— Ցույց տուր շնորհքդ:

ԱՌԱՋԻՆ ՈՒՍԱՆՈՂ.— Միայն մի համբույր:

ԵՐԿՐՈՐԴ ՈՒՍԱՆՈՂ.— Դե շնոտ, խաղը մի' ստուցներ:

ՀՐԱՅՐ.— Դե լավ, թողեք:

ՇԱՀԵՆ.— Տեսնում ես այս դույզն ինձ պես ամոթխած է,
դե գնացիր, մարշ թամազայի հակից (խումբը գնում է: Հրայրն
ու արմանուշը ճայում են իրար):

ԱՐՄԱՆՈՒՇ.— Գնանք, Հրա՛յր (ուզում է գնալ):

ՀՐԱՅՐ.— Մի բռակ, Արմանուշ... (Արմանուշը կանգնում է):
Ես վաղուց սպասում էի այս պահին (սեղանատնից լավում է
Ալ. Սպենդիարյանի «Այ վարդ երգը):

ԱՐՄԱՆՈՒՇ.— Վաղուց:

ՀՐԱՅՐ.— Ես ուզում էի խոսել քեզ հետ... Դու եղել ես իմ
լավ բարեկամը, թե ուրախության ժամին և թե փորձության
պահին... Ես այդ երբեք չեմ մոռանա... Հիշում ես Լոռում,
ծանր փորձից հետո:

ԱՐՄԱՆՈՒՇ.— Ինչո՞ւ ես այդ մտաբերում:

ՀՐԱՅՐ.— Չեմ կարող չհիշել:

ԱՐՄԱՆՈՒՇ.— Թող այդ, Հրա՛յր, ես արել եմ միայն այն,
ինչ կանեին քո մյուս ընկերները: Նրանք նույնպես չեին հե-
ռանա քո մոտից: Ես արդեն այդ սորվեցա: Չէ՞ որ այստեղ բո-
լորն էլ օգնում են միմյանց... Նվ եթե հիմա էլ...

ՀՐԱՅՐ.— Հիմա... Հիմա այլևս պետք չէ:

ԱՐՄԱՆՈՒՇ.— Ուրեմն հուսանք, որ ամեն ինչ լավ է:

ՀՐԱՅՐ.— Ոչ, Արմանուշ:

ԱՐՄԱՆՈՒՇ.— Ինչպե՞ս, ապա քո երազանքները:

ՀՐԱՅՐ.— Ես շարունակում եմ երազել:

ԱՐՄԱՆՈՒՇ.— Այդ լավ է: Այս դարնանը, երբ առաջին ան-
գամ քեզի հանդիպեցա, այն ժամանակ արդեն ամեն ինչ հուս-

կըցա: Դուն առաջին հայացքից հրապուրեցիր ինձ քո խիզախ
մտքերով, երազանքներով... Եվ ես քեզ ուրիշ տեսակ չէի ուզեր
տեսնել:

ՀՐԱՅՐ.— Ես միշտ այդպիսին կմնամ իմ ընկերներին հա-
մար, իսկ դու... դու իմ մտերիմ ընկերն ես: Ավելի մտերիմ,
քան...

ԱՐՄԱՆՈՒՇ.— Որքան կիսավաղեի - լսել այդ (մտնում է
Մարոն):

ՀՐԱՅՐ.— (Զգացված) Արմանու՛ւշ...

ՄԱՐՈ.— Ներեցե՛ք, որ ընդհատեցի ձեզ, մի բոլե, Հրա՛յր:

ՀՐԱՅՐ.— Ների՛ր, Արմանու՛ւշ (Մարոյի հետ առանձնանում է
ձախ անկյունը, դուրս է գալիս Ռուբենը):

ՌՈՒԲԵՆ.— Արմանու՛շ, սուր է այն ամսադիրը, որ խոստա-
ցար, բերե՞լ ես:

ԱՐՄԱՆՈՒՇ.— Հիմա կտամ (գնում են):

ՄԱՐՈ.— (Հրայրին) Այդ ի՞նչ եմ լսում, ճի՞շտ է ասում Ռու-
բենը:

ՀՐԱՅՐ.— Այո:

ՄԱՐՈ.— Դու հասկանո՞ւմ ես, թե ի՞նչ ես անում, հայրիկը
տեղ չի գտնում բարկությունից:

ՀՐԱՅՐ.— Արդեն իմացա՞մ:

ՄԱՐՈ.— Նա քեզ է սպասում (Հրայրը գնում է դեպի Նա-
րինյանի առանձնասենյակը): Հավ մտածիր, Հրա՛յր:

ՀՐԱՅՐ.— Ես արդեն որոշել եմ:

ՄԱՐՈ.— Հրա՛յր, ես քեզ խնդրում եմ՝ հրաժարվիր այս ո-
րոշումից:

ՀՐԱՅՐ.— Ձեմ խոստանում (գնում են Նարինյանի առանձ-
նասենյակը):

ՌՈՒԲԵՆ.— (Ներս է գալիս ձեռքին մի ամսագիր. հուզված է)
Նժժյնն է, Նժժյնն է... Ճի՞շտ հուշն եղանակը... Ուրեմն ճիշտ է
հիշատել Արմանուշը... Ուրեմն դուր չէին իմ կասկածները: Մի՞-
թե ես խաբված եմ... Որտե՞ղ է նա:

ՄԱՐՈ.— (Ներս գալով) Ո՞վ, Ռուբեն:

ՌՈՒԲԵՆ.— Աթանեսյանը:

ՄԱՐՈ.— Ինչպե՞ս, չէ՞ որ նա Մոսկվայումն է:

ՌՌԻԲԵՆ.— Ա՛, ինչպե՛ս մոռացա:

ՄԱՐՈ.— Իսկ ի՞նչ է պատահել, Ռուբեն՝

ՌՌԻԲԵՆ.— Ո՛չինչ:

ՄԱՐՈ.— Այդ ի՞նչ է ձեռքիդ:

ՌՌԻԲԵՆ.— (Շտապ փաթաթելով ամսագիրը) Թերթ է... այ՛սինքն՝ ամսագիր:

ՄԱՐՈ.— Ապա ինչու՞ ես թաքցնում ինձնից:

ՌՌԻԲԵՆ.— (Շփոթված) Ե՛ս... թաքցնում... Ոչ:

ՄԱՐՈ.— Դու ինձ հետ անկեղծ չես, Ռուբեն, մի՞թե ես քո բարեկամը չեմ:

ՌՌԻԲԵՆ.— Բարեկամներ դու շատ ունես:

ՄԱՐՈ.— Այո, և ես չեմ ուզում նրանցից հրաժարվել:

ՌՌԻԲԵՆ.— Այդ դեպքում դույե հրաժարվես ինձնից:

ՄԱՐՈ.— Ուշքի՛ եկ, Ռուբեն, ինչե՛ր ես խոսում, դու քեզ բո՛լորովին կորցրել ես:

ՌՌԻԲԵՆ.— (Նայելով ամսագրին) Ես վախենում եմ, որ քեզ կորցնեմ... Բարի դիշեր (մտնում է Սիրան Միխայլովնան):

ՄԻՐԱՆ ՄԻԽ.— Այդ ո՛ւր, Ռուբեն:

ՌՌԻԲԵՆ.— Ներեցեք, Սիրան Միխայլովնա, ես մի փոքր վատ դդացի, ուզում եմ դնալ տուն:

ՄԻՐԱՆ ՄԻԽ.— Տո՛ւն... Ի՞նչ ես ասում, ո՛չ մի դեպքում ես քեզ չեմ թողնի:

ՌՌԻԲԵՆ.— Բայց անհրաժեշտ է:

ՄԻՐԱՆ ՄԻԽ.— Ինչպե՛ս լսեցիր, Ռուբեն, հրամանատարն այ՛սօր ես եմ, թարմանալու համար կարգադրում եմ անցնել պատըշտամբ, մինչ այդ ես Մարոյի հետ շամպայնի համար սեղան կպատրաստեմ (Ռուբենը դուրս է գալիս պատշգամբը): Եկ՛, օգնի՛ր ինձ, Մարո՛... Չլինի՞ դու վիրավորեցիր Ռուբենին:

ՄԱՐՈ.— Ոչ, մայրիկ:

ՄԻՐԱՆ ՄԻԽ.— Հապա ինչու՞ է նա այդպիսի տրամադրու՜թյամբ:

ՄԱՐՈ.— Չգիտեմ, ես էլ ուզում էի խմանալ, բայց ոչինչ չասաց:

ՄԻՐԱՆ ՄԻԽ.— Ոչինչ, աղջիկս, կանցնի, մի՛ տրամիր (անց-

նում են մյուս սենյակը: Առանձնասենյակից հուզված դուրս է գալիս նարինյանը, նրա ետևից Հրայրը, Ազատյանն ու Մառուկյանը):

ՆԱՐԻՆՅԱՆ.— Ոչ, ոչ, չեմ ուզում լսել... Ամոթ ու նախատինք ինստիտուտի, քո և իմ հասցեին:

ՀՐԱՅՐ.— Հայկազ՝ Ավետույիչ, բայց...

ՆԱՐԻՆՅԱՆ.— Այդ ի՞նչ թերահավատություն է:

ՀՐԱՅՐ.— Ես թերահավատ չեմ... Ես կշարունակեմ աշխատանքը, բայց հիմա պետք է վերջացնեմ ինստիտուտը, թե ոչ: Մնում է մեկ ամիս ժամանակ, ես հո չեմ կարող ծիծաղի առարկա դառնալ:

ՆԱՐԻՆՅԱՆ.— Ծիծաղի՞... Ոչ, դու պետք է պարծանքի առարկա դառնաս... Ապա մտաբերիր մեր մեծ գիտնականների անցած դժվարին ուղին... Լոմոնոսով, Լորաշևսկի, Ժուկովսկի, Միչուրին, Պավլով... Ինչպիսի՞ փառավոր էջեր են դրել նրանք հայրենական գիտության պատմության մեջ... Հիշիր թեկուզ Լոմոնոսովին, որ միայն իր անդրդվելի կամքի ու վճռականությամբ շնորհիվ գյուղական աննշան պատանուց հասավ ուսանական կարկառուն մտքի կատարելությանը... Իսկ Մենդելևի համար կարծում ես հեշտ էր հայտնագործել ածխի ստորերկրյա գաղիֆիկացման եղանակը, որին մեծ ուշադրություն դարձրեց Լենինը և որպիսի միտքը դրված է քո աշխատանքի հիմքում... Հասցապատաստվոր խիղախ գիտնական Սեդովը, որը արկտիկան նվաճելու տենչով համակված, հաղթահարելով բազմաթիվ փորձությունները՝ թողնում է իր կործանվող նավը և ոտքով դնում երկու հազար կիլոմետր սառցապատ ճանապարհներով միայն նրա համար, որպեսզի ուսանական գիտության փառքի դրոշմը րևեո՞ւ ծայրագույն հյուսիսում:

ԱԶԱՏՅԱՆ.— Այո, ուսում մեծ գիտնականների տիտանական կերպարները չեն կարող չոգեշնչել մեր երիտասարդությանը... Հրայրը կշարունակի աշխատել... Նա պետք է աշխատի... Վաղվանից և եթ պետք է նոր փորձեր սկսել Շամլուղում... (Ներս է մտնում Սիրան Միխայլովնան, բերելով շամպայնով լեցուն գավաթները, նրա ետևից մտնում են ուսանողները):

ԾԱՌՈՒԿՅԱՆ.— Այս ի՞նչ է, նորի՞ց եք սկսում:

ՍԻՐԱՆ ՄԻՔ.— Կարծեմ այդպես է կարգը:

ՇԱՀԵՆ.— Ընկերներ, թամաղան դեռ իր արտակարգ լիազոր-
թույթյունները վայր չի դրել... Ոչ ոք չպետք է հրաժարվի (վեր-
ցրնելով գավարը): Բարեկամներս, հինգ տարի շարունակ մեր
կյանքի ամենալավ օրերը ապրել ենք միասին... Եվ այսօր սիրտս
շատ բան է ուղղում ասել: Ես ուղղում եմ անարատ գինու այս
զավաթով վերադառնալ առաջին կենացին... Չգարմանաք, եթե
ինձնից սկսեմ... Հնդամյա ուսմանս ընթացքում ես կարծել եմ,
որ երկու չառանալը արդեն լավալիան է ուսանողին, իսկ քըրտ-
նաջան աշխատանքը ինտիլիտուտից հետո կղա: Մարքսիզմի
կլասիկների հոյակապ աշխատությունները, որ այնպես սիրով
մասնակցում էր մեզ ընկեր Սդատյանը, ես կարողում էի հասկենալ,
թերթում ու անցնում, չթափանցելով նրանց մեծ գաղափար-
ների անսպաս հարստության մեջ... Եվ հանկարծ մի օր Մարոն
ինձ հանձնարարում է ողջ ինտիլիտուտի առջև խոսել Անդրկով-
կասի բանվորական ռեուլուցիոն շարժման մասին:

ԱԶԱՏՅԱՆ.— Մենք այդ լավ ենք հիշում:

ՇԱՀԵՆ.— Ապա պատկերացրեք ինքներդ: 22-ամյա մի բո-
ցաշունչ երիտասարդ որանից 47 տարի առաջ դնում է Բաթում՝
ռեուլուցիոն շարժումն այնտեղ գլխավորելու: Արհամարհելով բազ-
մաթիվ փորձություններ՝ նա արիարար նեւթում է ռեուլուցիոն
պայքարի մեջ և քաղաքական հզոր ցույցի դուրս բերում
հինգ հազարից ավելի բանվոր՝ դառնալով նրանց պայքարի
խորհրդանիշը... Եվ ես մտածեցի, եթե այդպիսի բացառիկ դեժ-
վար պայմաններում երիտասարդ Սաալինը կարողացավ զբաղել
բազմահազար մարդկանց կամքն ու բանականությունը, ապա ես
այդ նույնը պետք է անեմ թեկուդ մի մարդու՝ ինքս ինձ հետ:

ՆԱՐԻՆՅԱՆ.— Ապրես, Շահեն:

ՇԱՀԵՆ.— (Մարոյին) Դու օգնեցիր դանել Շահենին, Մարո:
Եվ եթե վաղը մենք բաժանվենք, ապա մեր անծայրածիր երկրի
նր անկյունումն էլ լինեմ, ինձ կտաքացնի քո անկեղծ մտերմու-
թյան անմար ջերմությունը... Գո կենացը Մարո ջան:

ԱԶԱՏՅԱՆ.— Կամ կենաց էր:

ԾԱՌՈՒԿՅԱՆ.— Հիանալի էր: Անտարակույս հիանալի (ուրախ
բացագանչություներ, խմում են Մարոյի կենացը):

ՀՐԱՅՐ.— Ահա և ավարտվեց երեկոն:

ՇԱՀԵՆ.— Թերևս մեր վերջին ուսանողական երեկոն:

ՆՎԱՐԴ.— Էլի մի քանի այսպիսի երեկո և մենք կավար-
տենք մեր ուսանողական կյանքը:

ԾԱՌՈՒԿՅԱՆ.— Գեղեցիկ և անկրկնելի կյանքը:

ՀՐԱՅՐ.— Եվ այս ժամերը անջնջելի կմնան մեր հիշողու-
թյան մեջ.

ՆՎԱՐԴ.— Կմտնենք նոր կյանք և մեր առաջ կբացվի...

ՄԱՐՈ.— Հանդիմանք լույսերը, այդն է բացվում (հանգցնում
են լույսերը, գեղեցիկ այգաբաց):

ՇԱՀԵՆ.— Ե՞րբ անցավ ժամանակը:

ՍԻՐԱՆ ՄԻԽ.— Ահա թե ի՞նչ է նշանակում երջանիկ լինել:

ՄԱՐՈ.— (Արասանում է).

«Արշալույսն է բացվում մեր մեծ հայրենիքին,

Մինչդեռ Արևմուտքում դեռ խավարն է տիրում.

Արևի տակ շքեղ Երևանն է կրկին

Լցվում կյանքի ու ծով ու խնդությամբ բուրում»:

ԱԶԱՏՅԱՆ.— (Շարունակում է).

Օ՛ երանի նրան, ով իր կյանքը դալար,

Նվեր կտա այս վեհ արեղակի երթին,

Նվեր կտա երկրի դարձոնքին այս անմար,

Հանուն ապագայի, հանուն մեր մեծ բախտի:

ԱՐՄԱՆՈՒՇ.— Ի՞նչ սքանչելի է:

(Բոլորի հայացքն ուղղված է լուսամուտի կողմը):

ՀՐԱՅՐ.— Արմանուշ, ի՞նչքա՞ն դու առաջին անգամ ես արշա-
լույս տեսնում:

ԱՐՄԱՆՈՒՇ.— Հայրենի հողի վրա՝ առաջին անգամ... Հիմա
ես հասկանում եմ, թե ի՞նչու իմ հայացքը միշտ ուղղված էր
դեպի արևելք:

ՌՈՒԲԵՆ.— (Հուզված) Արամ՝ Ներսեսովիչ...

ԱԶԱՏՅԱՆ.— Ի՞նչ է:

ՌՈՒԲԵՆ.— Ես ուղղում եմ իմ անալ, կարող է դասախոսը ու-
սանողի հայացքն ուղղել դեպի...

ԱԶԱՏՅԱՆ.— Դեպի արևմուտք, ուղղում ես ասել:

ԾԱՌՈՒԿՅԱՆ.— Այո, այո, անտարակույս կարող է: Ես ճա-
նաչում եմ մի դասախոսի, որի հայացքը կարծես շարունակ
ուղղված է դեպի արևմուտք (սկսում են երգել Նովիկովի «Երիտա-
սարդուրյան հիմներ»):

ՆԱՐԻՆՅԱՆ. — Իսկ ես ճանաչում էի մեկին, որը երազում էր այս արշալույսը: Ռադմաճախատումն էր... Նա վիրավորվեց դիշերը... Վերքը մահացու էր, բայց նա դիմանում էր... Ապրելու մի դարձանալի տենչ կար նրա մեջ... Մահու և կյանքի օրհասական դժոխքատումն էր երազում էր այս արշալույսը տեսնել:

ՄԱՐՈ.— Եվ այդպես էլ չհասավ, հայրիկ:

ՆԱՐԻՆՅԱՆ.— Ոչ աղջիկս... Նա հիմա դիտում է այդ արշալույսը (ցույց տալով պատուհանի մոտ կանգնած Ազատյանին):

ՀՐԱՅՐ.— Ընկեր Ազատյանը:

ՄԱՐՈ.— Արամ Ներսիսովի՞չը:

ՆԱՐԻՆՅԱՆ.— Այո, նա տենչում էր ապրել, տենչում էր նորից լինել ձեզ հետ, իր հանդուգն ու խիզախ բարեկամների հետ:

ԱԶԱՏՅԱՆ.— Եվ միայն հավատալ հաղթեց մահին, անդրդվելի հավատալ դեպի սովետական մարդը, որը չդիտե նահանջել և պատրաստ է թեկուղ կյանքի դնով հասնել իր նպատակին (երգն ուժեղանում է, երգում են բոլորը):

ՎԱՐԱԳՈՒՅՐ

ԵՐՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

ԶՈՐՐՈՐԴ ՊԱՏԿԵՐ

Ինստիտուտի ուսանողական հանրակացարանի սենյակներից մեկը, ուր բնակվում են Հրայրը, Ռուբենը և Շահենը: Մթնշաղ է, Շահենը քնած է:

ՀՐԱՅՐ.— (Մոտենալով Շահենի մահնակալին) Շահեն, Շահեն...
այ թե քնեց, հա (նրան արթնացնելու համար Հրայրը ձգում է սեղանի ժամացույցի լծակը, որը զանգ է տալիս. Շահենը տեղից վեր է բռնում, Հրայրը սրբիչը ձեռքին, ծիծաղելով վազում է դուրս):

ՇԱՀԵՆ.— (Մահնակալի վրա) Օ՜ֆ (շուռ է տալիս ժամացույցը և դնում բարձի տակ): Ինժեներ էլ դառաք, որանից չպրծանք (լսելով ուղիղ բարձրախոսի երգի ձայնը): Սա ի՞նչ է լսել առաջում վաղ (մոայլ դեմքով սկսում է լիցքը): Երգով էլ յուր կզնանք (գալիս է Հրայրը):

ՀՐԱՅՐ.— (Զարմացած) Այս ի՞նչ ես անում:

ՇԱՀԵՆ.— Կարծում եմ պարզ է:

ՀՐԱՅՐ.— Պարզ է միայն այն, որ դու դժվել ես:

ՇԱՀԵՆ.— Կենսուրախ և առողջ երիտասարդներն օրն սկսում են մարմնամարդու թյամբ:

ՀՐԱՅՐ.— Իսկ անկարգ մարդիկ օրը վերջացնում են դրանով:

ՇԱՀԵՆ.— (Կանգ է առնում) Վերջացնում... Ինչո՞ւ, ժամը քանիսն է (նայում է ժամացույցին, ապա մոտենում է պատուհանին): Բա ես կարծում էի առավոտ է... է, խելք չի մնացել: Ահա թե ի՞նչ է նշանակում գիշեր-ցերեկ պարապել:

ՀՐԱՅՐ.— Շահեն, ավատու է եղանակը, դոնե արի պարենք:

ՇԱՀԵՆ.— Ուրախությամբ, եթե միայն դրանից խելքդ տեղը կգա (պարում են, գալիս է նվարդը):

ՆՎԱՐԴ.— Այս ի՞նչ հիտաքանչ տեսարան է:

ՀՐԱՅՐ.— Հիմա արդեն ես ավելորդ եմ (Շահենին պատեցնելով գցում է նվարդի գիրկը, որը մեքենայորեն սկսում է պարել):

ՆՎԱՐԴ.— Սպասեցեք, այս ի՞նչ առիթով եք պարում:

ՇԱՀԵՆ.— Մի՞թե պարդ չէ... Մեր երեկվա հաջող պաշտպանության (անջատում է ռադիոն):

ՀՐԱՅՐ.— (Շահենին) Ա՛յ թե լավ պրծար Աթանեսյանի ձեռքից:

ՇԱՀԵՆ.— Իսկապես, լավ է, որ այստեղ չէր, թե չէ էլի մի կրյուչոկ կգցեր: Յերեկը հանդիպեցի... Սառցարանից դուրս եկած ձեռքը մեկնեց և ասաց. «Շնորհավորում եմ, Սարգսյան, ասում են հաջող է անցել, ցավում եմ, որ ներկա չեմ եղել»... Հետո հանկարծ շուռ եկավ հարյուր ութսուն աստիճանով ու հեռացավ:

ՆՎԱՐԴ.— Հիմա նրա ամբողջ ուշքն ու միտքը Ռուբենի վաղվա պաշտպանությունն է:

ՀՐԱՅՐ.— Իսկապես որ, Ռուբենն էլ շատ է հուզված (պատրաստվում է գնալ):

ՆՎԱՐԴ.— Այդ ո՞ւր ես գնում:

ՀՐԱՅՐ.— Գծադիրը պետք է տանեմ Նարինյանի մոտ:

ՆՎԱՐԴ.— Մի՞թե Հայկազ Ավետովիչը դեռ չի ստորագրել:

ՀՐԱՅՐ.— Այս նախադիժն ստորագրելն, ինչպես տեսնում ես, այնքան էլ հեշտ չէ:

ՇԱՀԵՆ.— Ոչինչ, իմ սիրելի ընկեր, դրա փոխարեն վաղն այս ժամանակ դու էլ կասես՝ «վերջ տառապանաց»:

ՆՎԱՐԴ.— Ա՛յ թե համառ տղա ես, Հրանյր, վերջը քո ասածն արի:

ՀՐԱՅՐ.— Տեսնենք, վաղն ամեն ինչ պարզ կլինի... Դե գնացի (գնում է):

ՇԱՀԵՆ.— (Մտորումների մեջ) Ի՞նչ հետաքրքիր է:

ՆՎԱՐԴ.— Ի՞նչը:

ՇԱՀԵՆ.— Մեր կանքը... Սիրտդ այնքան լան է զգում, այնքան շատ լան ես ուզում ասել, բայց չեմ գտնում:

ՆՎԱՐԴ.— Լսվա՞ր, Շահեն... Ես էլ նույնն եմ մտածում... Ա՛յ հիմա դալիս էի քեզ մոտ և երազում... Այնքան լավ բաներ էի ուզում քեզ ասել:

ՇԱՀԵՆ.— Դու կարո՞ղ ես ինձ լավ բան ասել (ցույց տալով լուսամուտը): Նայիր, նույնիսկ լուսինը զարմանքից դուրս եկավ:

ՆՎԱՐԴ.— Ես այսօր այնպես երջանիկ եմ:

ՇԱՀԵՆ.— Երջանիկ... Բայց դու ինձ հետ ես:

ՆՎԱՐԴ.— Հենց դրա համար եմ երջանիկ:

ՇԱՀԵՆ.— Նվարդ:

ՆՎԱՐԴ.— Ի՞նչ է, Շահեն:

ՇԱՀԵՆ.— Առա, ճիշտ լսեցի:

ՆՎԱՐԴ.— Դե իհարկե:

ՇԱՀԵՆ.— (Մեկուսի) Հիմա ես ի՞նչ պետք է ասեմ:

ՆՎԱՐԴ.— Ինչ ես քեզ ու քեզ խոսում:

ՇԱՀԵՆ.— Ես ասացի, քեզ սիրում եմ:

ՆՎԱՐԴ.— Ասացի՞ր... այդ ե՞րբ:

ՇԱՀԵՆ.— Ա՛յ, հիմա եմ ասում (գրկում է և տանում դեպի պատուհանը):

ՆՎԱՐԴ.— Թող, Շահեն, կարող եմ դալ:

ՇԱՀԵՆ.— Թող ոչ ոք չգա... Ոչ ոքի չեմ ուզում տեսնել... Ա՛յ, հայիր, տեսնում ես այն աստղը, որ ընկավ... Ես կտանեմ քեզ նրա տեղը... Իմ հավերժական աստղը կլինես ողջ կյանքում:

ՆՎԱՐԴ.— Շահեն, թող:

ՇԱՀԵՆ.— Չեմ կարող, ձեռքերս կապվել են:

ՆՎԱՐԴ.— Խնդրում եմ, թող:

ՇԱՀԵՆ.— Միայն մի խոսք՝ սիրում եմ:

ՆՎԱՐԴ.— (Ցածր) Միրում եմ... (բարձր): Միրում եմ:

ՇԱՀԵՆ.— (Համբուրում է նվարդին) Ա՛յ, Նվարդ... Ի՞նչու ոչ ոք չի դալիս: Ինչո՞ւ տղաները չեն մտնում: Ես ուզում եմ բռնորդ լսեն, որ ես սիրում եմ... Իմ բոլոր ընկերները... Ես ուզում եմ ողջ աշխարհին հայտնել իմ սերը...

ՆՎԱՐԴ.— Իմ սերը, իմ սերը, թող, խելագար... Հետաքրքիր է, ինչո՞ւ բացատրել այս ուշացած խոստովանությունը:

ՇԱՀԵՆ.— Ինչո՞ւ... Ասում են՝ եղել է մի նվարդ թաղուհի, թե իշխանուհի, հաստատ չեմ հիշում... Նա անդթարար մերժել է Շահեն ատաջինի սերը, իսկ երբ հայտնվել է Շահեն երկրորդը, թաղուհին թե իշխանուհին, էլի հաստատ չգիտեմ, հենց ատաջին հայացքից սիրել է նրան:

ՆՎԱՐԴ.— (Միծաղելով) Եվ նա չսխալվեց... Դու հիմա շատ ես լիտիվել, Շահեն, և ես համատում եմ, որ աղնիվ երազանքներդ կիրականացնես:

ՇԱՀԵՆ.— Անպայման... Ես հուշնիսկ որոշել եմ ընդունվել
ասպիրանտուրա:

ՆՎԱՐԴ.— Դու գիտնակո՞ն:

ՇԱՀԵՆ.— Այո, բայց գիտե՞ս ինչպիսի... Ինժեներ-գիտնա-
կան... Այլ խոսքով՝ ասպիրանտուրա՝ առանց արտադրությունից
կտրվելու:

ՆՎԱՐԴ.— Օ՛հ, հիմա արդեն ես պետք է ղգուշանամ, որպեսզի
քեզնից ետ չմնամ (ցածր): Իսկ այն աստղի մասին, լավ ասացիր:

ՇԱՀԵՆ.— Եկ գնանք պարտեզ:

ՆՎԱՐԴ.— Մեր սիրած աստղերի տակ:

ՇԱՀԵՆ.— Գնանք հիմա ուր որ ուղու՞մ ես, չէ՞ որ (Արտասա-
նում է):

«Ես ու դու էլ շղթայված ենք իրարու
կարոտավառ երազում ենք միշտ իրար,
Միշտ իրար հետ, բայց միշտ բաժան ու հեռու
Աստղերի պես կ'հարազատ, կ'օտար»:

ՆՎԱՐԴ.— Օտար:

ՇԱՀԵՆ.— Ոչ, ոչ, միշտ հարազատ ու հարազատ... Գե, վա-
հան Տերյանը որտեղի՞ց կարող էր իմանալ մեր մասին... Նվարդ,
դու գնա, ես կիթառս վերցնեմ դամ (Նվարդը գնում է):

ՄԱՐՈ.— (Դրսից) Ռուբեն... (մտնում է ներս): Ռուբեն (տես-
նելով որ սենյակում ոչ ոք չկա, հանում է մի լուսանկար, դնում է
Ռուբենի բարձի տակ և դուրս է գնում. հետաքրքրված Շահենը, որ
Մարոյի ձայնը լսելով թաքնվել էր, վերցնում է լուսանկարը):

ՇԱՀԵՆ.— (Կարդում է մակագրությունը) «Իմ սիրելի բարե-
կամին՝ վաղվա հաջող պաշտպանության առթիվ»: Վա՛յ, ուրեմն
հաջովե՞լ եմ (դրսից ոտնաձայն լսելով, շփոթվում է և լուսանկարը
դնում է Հրայրի գլխարկի վրա: Գալիս է Ռուբենը, սաստիկ մտազ-
բաղ է):

ՌՈՒԲԵՆ.— Ձի՞ եկել:

ՇԱՀԵՆ.— Ինչպե՞ս չէ, եկավ:

ՌՈՒԲԵՆ.— Եկա՞մ... հապա մեր գնաց:

ՇԱՀԵՆ.— Այնտեղ, աղջիկների սենյակը:

ՌՈՒԲԵՆ.— Աղջիկների սենյակի՞ն... Ի՞նչ զործ ունի այնտեղ:

ՇԱՀԵՆ.— Ուղու՞մ ես միշտ քեզ հետ լինի՞... Ընկերուհիների
մոտ գնաց:

ՌՈՒԲԵՆ.— Ես կատակի տրամադրություն չունիմ: Ասան, ո՞ւր գնաց Աթանեսյանը:

ՇԱՀԵՆ.— Ի՞նչ Աթանեսյան... ես քեզ ասում եմ նա եկավ:

ՌՈՒԲԵՆ.— Ո՞վ:

ՇԱՀԵՆ.— Կարդին շշմել ես... Նա... Մարոն:

ՌՈՒԲԵՆ.— Մարոն:

ՇԱՀԵՆ.— Հարցնում էր ո՞ւր է իմ սիրելի Ռուբենը:

ՌՈՒԲԵՆ.— Բավական է, Շահեն:

ՇԱՀԵՆ.— Ուղղում ես երգվեմ:

ՌՈՒԲԵՆ.— Իսկ ինչո՞ւ էր հարցնում, հետաքրքիր է... Ասում ես աղջիկների մոտ դնաց (ուզում է գնալ, բայց կանգնում է):

Պետք չէ (դրսից լսվում է նվարդի ձայնը): Շահեն:

ՇԱՀԵՆ.— Եկան, եկան... (Ռուբենին) Քիչ մնաց ձեր խառը հաշիվների պատճառով անձնական քախտ մոռանայի (վազում է դուրս):

ՌՈՒԲԵՆ.— (Մտնելով է պահարանին, բացում է և հանում գծագիրը, նայում է, ապա չկարողանալով կենտրոնանալ՝ դնում է սեղանի վրա) Չեմ կարողանում ոչինչ անել... Բայց ինչո՞ւ է նա ինձ հարցրել, հետաքրքիր է (տեսնում է Մարոյի նկարը): Մարոյի նկարը... Մա էլ Հրայրի գլխարկը... (կարդում է մակագրությունը): «Իմ սիրելի բարեկամին՝ վաղվա հաջող պաշտպանության առթիվ (դուռը ծեծում են): Մտեք (զալիս է Մարոն):

ՄԱՐՈ.— Բարի երեկո, Ռուբեն:

ՌՈՒԲԵՆ.— Բարի երեկո:

ՄԱՐՈ.— Այդ ի՞նչ ես անում:

ՌՈՒԲԵՆ.— Պարապում եմ:

ՄԱՐՈ.— Վաղն առաջ դո՞ւ ես պաշտպանելու, թե՞ Հրայրը:

ՌՈՒԲԵՆ.— Իհարկե Հրայրը:

ՄԱՐՈ.— Ինչո՞ւ իհարկե:

ՌՈՒԲԵՆ.— Որովհետեւ առաջնությունը նրան է պատկանում:

ՄԱՐՈ.— Դու մի ժամանակ այդպես հեշտությամբ չէիր դիմում առաջնությունը:

ՌՈՒԲԵՆ.— Դուցի:

ՄԱՐՈ.— Հավատացած եմ, որ վաղն ամեն ինչ լավ կանցնի:

ՌՈՒԲԵՆ.— Հաղիվ թե օգնեն քո բարի մաղթանքները:

ՄԱՐՈ.— Ես քեզ չեմ հասկանում, Ռուբեն:

ՌՌԻԲԵՆ.— Ես շատ բան կուզեի ասել, բայց հիմա անկարող եմ:

ՄԱՐՈ.— Ես անկեղծորեն ուզում եմ որեւէ բանով օգնած լինել քեզ:

ՌՌԻԲԵՆ.— Եթե դա այնքան հեշտ լիներ:

ՄԱՐՈ.— Միթե դու ինձ դրա համար ես կանչել, որ ոչինչ չասես:

ՌՌԻԲԵՆ.— Կանչել... Քեզ:

ՄԱՐՈ.— Շահենն ասաց, որ դու ուզում ես ինձ տեսնել:

ՌՌԻԲԵՆ.— Շահենը... Այո, այո, (դուր ծեծում են): Մտեք (գալիս է Արանեսյանը):

ԱԹԱՆԵՍՅԱՆ.— Բարեւ ձեզ:

ՄԱՐՈ.— Բարեւ ձեզ:

ՌՌԻԲԵՆ.— Բարի դալուստ, Արսե'ն Գեորգեւիչ:

ԱԹԱՆԵՍՅԱՆ.— Հ'ը, ինչպե՞ս են դործերդ, Ալիմյան:

ՌՌԻԲԵՆ.— Գծադրերը պատրաստ են:

ԱԹԱՆԵՍՅԱՆ.— (Մարոյին) Ներեցեք, ես ձեզ շնորհավորեցի... Շատ ուրախ եմ, որ դերազանց եք ստացել, ասենք այդպես էլ սպասում էի ձեզանից, շնորհավորում եմ:

ՄԱՐՈ.— Շնորհակալություն, պրոֆեսոր:

ԱԹԱՆԵՍՅԱՆ.— Կա՞մ է, լա՛վ... Ուրեմն ձեր կուրսից քանի հոգի են մնացել:

ՄԱՐՈ.— Ինը, լավն էլ երկուսը կապաշտպանեն:

ԱԹԱՆԵՍՅԱՆ.— Ալիմյանը և ո՞վ:

ՄԱՐՈ.— Հրայր Խահակյանը:

ԱԹԱՆԵՍՅԱՆ.— Ա՛, Հրայր Խահակյանը... Բայց նրա հախաղժի նկատմամբ մի սկզբունքային հարց է ծագել:

ՄԱՐՈ.— Դարձյա՞լ... Ի՞նչ հարց:

ԱԹԱՆԵՍՅԱՆ.— Կասկած կա, որ նրա հախաղժը նախ վերջին կիրառելի չէ մեր պղնձարդյունաբերության համար և երկրորդը՝ դժվար թե այն շահավետ լինի:

ՄԱՐՈ.— Բայց չէ՞ որ Հրայրի նոր փորձերը հաջող են անցել Շամլուղում:

ԱԹԱՆԵՍՅԱՆ.— Բանն էլ հենց այդ է, որ Շամլուղում... Շամլուղում և ոչ թե Ուրալում կամ մի այլ տեղ: Խահակյանի իդեան դուրս ճիշտ է, այն էլ միայն պղնձի տվյալ բաղադրու-

Թյան համար... Ի դեպ, տեսնենք ի՞նչ կասի Մոսկովայի ներկայացուցիչը:

ՄԱՐՈ.— Ի՞նչ ներկայացուցիչ:

ԱԹԱՆԵՍՅԱՆ.— Ինտիմուսի դործերով ինձ հետ եկել է Բարձրագույն դպրոցների միջնադասի ղեկավարի ներկայացուցիչ պրոֆեսոր Ռուսյանցևը: Նա ցանկություն հայտնեց ծանոթանալ Հրայր Իսահակյանի նախադժին (Ռուբենին): Դուք ի՞նչու եք այդպես մտահոգված:

ՄԱՐՈ.— Ներեցեք, ես ձեզ չեմ խանգարի (զնում է):

ԱԹԱՆԵՍՅԱՆ.— (Նայելով գծագրերին) Հիանալի է, հիանալի:

ՌՈՒԲԵՆ.— Արսեն Գեորգևիչ, ես ձեզ սպասել եմ քսան հինգ չիշեր ու ցերեկ:

ԱԹԱՆԵՍՅԱՆ.— Մի՞թե անակնկալ դժվարություններ են առաջացել:

ՌՈՒԲԵՆ.— Ավելին:

ԱԹԱՆԵՍՅԱՆ.— Ի՞նչ:

ՌՈՒԲԵՆ.— Արսեն Գեորգևիչ, դուք հիշո՞ւմ եք մեր առաջին զբոսը, դարձանը, այս պուրակում, երբ դուք ինձ տվիք... ոչ ավելի ճիշտ, ես ձեզանից վերցրի այս նախադժի թեման:

ԱԹԱՆԵՍՅԱՆ.— Իհարկե, բայց ինչո՞ւ եք հիմա այդ մտաբերում:

ՌՈՒԲԵՆ.— Որտեղի՞ց է վերցված իմ նախադժի իդեան:

ԱԹԱՆԵՍՅԱՆ.— (Քիչ շփոթվելով) Որտեղի՞ց... Տարօրինակ է, դուք պաշտպանությունից հետո կտայիք այդ հարցը:

ՌՈՒԲԵՆ.— Ինձ հիմա է հետաքրքրում:

ԱԹԱՆԵՍՅԱՆ.— Ձեզ չի՞ զբաղում այս թեման:

ՌՈՒԲԵՆ.— Դա այլ հարց է, հիմա ես ուզում եմ իմանալ, որտեղի՞ց է վերցված:

ԱԹԱՆԵՍՅԱՆ.— Ա՜հ, ինչպես մոռացա ձեզ ասել, որ Մոսկովայում սովետական խոշոր գիտնականների մի խումբ գլխավոր վերջացնում է պղնձահանքի հարստացման այս եղանակով նախադիծը:

ՌՈՒԲԵՆ.— Այս նո՞ւյն եղանակով:

ԱԹԱՆԵՍՅԱՆ.— (Շփոթված) Սկզբունքը նույնն է:

ՌՈՒԲԵՆ.— Եվ ես նախադժում եմ այդ նույն սկզբունքով:

ԱԹԱՆԵՍՅԱՆ.— Պարզ է:

ՌՌԻԲԵՆ.— Ներեցեք (Պահարանից հանում է մի ամսագիր):
Իսկ սա ի՞նչ է:

ԱԹԱՆԵՍՅԱՆ.— (Շփոթված կարդում է) «Տեքնիքս լայֆ»,
որտեղից է այս ամերիկյան ամսագիրը:

ՌՌԻԲԵՆ.— Ուրեմն ճիշտ է:

ԱԹԱՆԵՍՅԱՆ.— (Տիրապետելով իրեն) Ի՞նչը:

ՌՌԻԲԵՆ.— Որ ես նախագծում եմ ամերիկյան սարքավորում... Ճիշտ է դա:

ԱԹԱՆԵՍՅԱՆ.— (Քմծիծաղով) Որքան դյուրարորոք եք դուք
երիտասարդ. և դա ձեզ այդպես հուզեց... (բացելով ամսագիրը):
Ապա նայեցեք այստեղ, տեսեք այս հոդվածը, որ նվիրված է
մեր՝ սովետական տեխնիկային: Մի՞թե դուք չեք տեսնում, որ
հիմա ողջ աշխարհն աղահորեն կլանում է այն բոլորը, ինչ
ստեղծվում է մեզ մոտ... Հետաքրքիր, շատ հետաքրքիր ժամա-
նակներ ենք ապրում, Ալիմյա՛ն: Շուտով ողջ աշխարհը կդրդա-
մեր գիտնականների հայտնադրած թյուներից: Ուրեմն թող
թույլատրելի լինի մեզ պարոնայք կապիտալիստներից վերցնել
թեկուզ այն սակավաթիվ նորությունները, որ դեռևս ընդունակ
են նրանք տալ:

ՌՌԻԲԵՆ.— Բայց ինչո՞ւ դուք չգերադասեցիք մեր տեխնի-
կան, չէ՞ որ պղինձը հարստացնելու այս եղանակով, ինչպես
ասում եք, սկսել են դրադվել մեր գիտնականները:

ԱԹԱՆԵՍՅԱՆ.— Այո, սկսել են... Միայն սկսել են: Մենք
դեռևս չգիտենք արդյունքները, չգիտենք, փառքով կոստավի այդ
թե ոչ: Իսկ փառքը կարծեմ ձեզ մտահոգում է, այնպես չէ՞:

ՌՌԻԲԵՆ.— (Ցնցված) Փա՞ռքը:

ԱԹԱՆԵՍՅԱՆ.— Այո, փառքը... Եվ մի՞թե ես կարող էի նախ-
ընտրել ինչ որ չստուգված ու վաղահաս մի եղանակ, երբ այդ
ամենայն ճշտությամբ մշակել է մի այնպիսի ծանրակշիռ ընկե-
րություն, ինչպիսին «Վեստ կոալես» կոմպանիան է:

ՌՌԻԲԵՆ.— Իսկ դուք համոզված եք, որ այս եղանակի ամ-
երիկյան լուծումը պետք է ավելի լավը լինի:

ԱԹԱՆԵՍՅԱՆ.— Բավական է շարունակ հոլովել Ամերիկան, Ամե-
րիկա՛: Ձի կարելի բոլոր դեպքերում վախենալ այդ անունից: Ձե՞
որ այդ այն երկիրն է, որը ժամանակին տեխնիկայի օրրան է եղել:

ՌՌԻԲԵՆ.— Այո, եղել է, բայց վաղուց իր տեղը գիշել է մեր երկրին:

ԱԹԱՆԵՍՅԱՆ.— (Մոտենալով Ռուբենին) Դուք խելահաս երիտասարդ եք, Ալիմյան, դուք միշտ հիացրել եք ինձ ձեր սառը բանականությամբ... պետք է հասկանաք, որ մեր երկրում այժմ սլաքար է մղվում օտարամոլության, այսպես կոչված ստորաքարշության դեմ... Եվ դժբախտաբար կան թեթևամիտ մարդիկ, որոնք ընկնում են ծայրահեղության մեջ, փորձելով բացասել արևմտյան, մասնավորապես ամերիկյան գիտության նվաճումները... Կա՞ն այդպիսիներ:

ՌՌԻԲԵՆ.— Դիցուք:

ԱԹԱՆԵՍՅԱՆ.— Ես հասկանում եմ, երբ ասում են արմատական տարրերություն կա սովետական և արևմտյան հումանիտար գիտությունների մեջ... Հասկանում եմ նաև այն, երբ ասում են, թե տարրերություն կա մեր և նրանց բնագիտության, բժշկության մեջ... Բայց տեխնիկան, տեխնիկական գիտությունը չէ՞ որ միասնական է, սատանան տանի:

ՌՌԻԲԵՆ.— Մի՞թե... Հապա ի՞նչու մենք՝ ես և դուք կարծես դավադիրներ զերում պետք է լինենք:

ԱԹԱՆԵՍՅԱՆ.— Հասկացեք վերջապես, որ եթե ես ձեզ ըսկըզրից ասեի ճշմարտությունը, ապա այդ գերիդեական մարդիկ ձեր շուրջը կստեղծեին վատառողջ մթնոլորտ և այս նշանավոր նախագիծը ձեզ հետ միասին կտապալվեր:

ՌՌԻԲԵՆ.— Իսկ որքա՞ն կարելի է լռել:

ԱԹԱՆԵՍՅԱՆ.— Հիմա արդեն շատ քիչ... Ընդամենը մեկ գիշեր, որից հետո նախագիծը ինքը կխուսի իր մասին... Ի դեպ, եթե այս նախագիծը ձեր սրտով չէ, ապա կարող եք հրաժարվել:

ՌՌԻԲԵՆ.— Հրաժարվե՞լ... Հիմա՞:

ԱԹԱՆԵՍՅԱՆ.— Վճռեցեք, կամ հրաժարվում եք, կամ ապացուցում բոլորին, որ Ռուբեն Ալիմյանին խորթ է ազգային սահմանափակությունը, որ նրա նախագիծը տեխնիկական նորամուծություն կլինի մեզ համար... Այո, այո... Եվ այդպե՞ս:

ՌՌԻԲԵՆ.— Պետք է մտածել:

ԱԹԱՆԵՍՅԱՆ.— Լավ, ես մեկ էլ կնայեմ ձեր հաշվումները և

կլերադարձնեմ կես ժամից... Եվ եթե առարկություն չլինի, ես
կստորագրեմ նախադիժը... Համաձայն եք:

ՌՌԻԲԵՆ.— Լավ (Արանեսյանը գնում է և դռան մեջ ընդհար-
վում Հրայրին):

ՀՐԱՅՐ.— Ներեցեք, սլոթեոս'ը.

ԱԹԱՆԵՍՅԱՆ.— Խնդրեմ, երիտասարդ (դուրս է գնում):

ՀՐԱՅՐ.— Հը՞, ի՞նչ ասաց:

ՌՌԻԲԵՆ.— Առանձին ոչինչ:

ՀՐԱՅՐ.— Ստորագրե՞ց:

ՌՌԻԲԵՆ.— Ոչ:

ՀՐԱՅՐ.— Ինչո՞ւ... Չլինի՞ լուրջ սխալ հայտնաբերեց:

ՌՌԻԲԵՆ.— Ոչ, նրա կարծիքով ամեն ինչ ճիշտ է:

ՀՐԱՅՐ.— Հապա էլ ինչո՞ւ չստորագրեց... Ոչինչ չեմ հասկա-
նում... Ինչո՞ւ պարզ չես խոսում, Ռուբեն:

ՌՌԻԲԵՆ.— Թող ինձ Հրա՛յր (գծագրերը դնում է պահարանը
և փակում այն):

ՀՐԱՅՐ.— Բավական է, որքան ակնարկներով խոսեցիր: Մի՞թե
այդպիսի լուրջ բան է կատարվել քեզ հետ:

ՌՌԻԲԵՆ.— Գուցե և այդպես:

ՀՐԱՅՐ.— Էլ ինչո՞ւ ես լռում, ինչո՞ւ ես մինչև հիմա մեղհից
թաքցնում քո գծագրերը:

ՌՌԻԲԵՆ.— Առայժմ այդպես է հարկավոր:

ՀՐԱՅՐ.— Այդպե՞ս է հարկավոր... Նշանակում է չկա առաջ-
վա մտերմությունը... (Ռուբենը ապրումների մեջ է): Ռուբեն,
բավական է քեզ այդպես չարչարես և ոչ միայն քեզ, այլև մեզ...
Մարոյին:

ՌՌԻԲԵՆ.— Մարոյի՞ն:

ՀՐԱՅՐ.— Դու քո ապրումները թաքցնում ես նրանից, տես,
թե դա նրան ինչպես է վշտացնում: Չէ՞ որ քո ամենամտերիմ
ընկերը պետք է լինի կյանքում (փնտրում է ինչ որ բան):

ՌՌԻԲԵՆ.— Սա՞ ես փնտրում, ա՛ն (տալիս է Մարոյի նկարը):

ՀՐԱՅՐ.— Ի՞նչ է սա:

ՌՌԻԲԵՆ.— Այդպիսի նվերը պետք է լավ պահել:

ՀՐԱՅՐ.— Նվե՞րը:

ՌՌԻԲԵՆ.— Հիմա էլ դու անկեղծ չես, Հրա՛յր: Մի՞թե կար-

ծում ես ինձ վրա կազդի այն, որ Մարոն նվիրում է քեզ իր
նկարը և հաջողութուն բարեմաղթում:

ՀՐԱՅՐ.— Սա ի՞նչ է նվիրել:

ՌՌԻԲԵՆ.— Այո:

ՀՐԱՅՐ.— Հետո ի՞նչ, շատ ուրախ եմ, չէ՞ որ քեզ վրա չի
ազդում:

ՌՌԻԲԵՆ.— Ձի ազդում, բայց Մարոն լավ աղջիկ է, նրա
լուսանկարը պետք է լավ պահել:

ՀՐԱՅՐ.— Այո, Մարոն հիանալի աղջիկ է և նրա նկարն էլ,
Շահենն ասում է, պետք է իր տեղը դնել (նկարը դնում է Ռու-
բենի բարձի տակ: Դուր ծեծում են): Մտե՛ք (գալիս է Ազատյա-
նը):

ԱԶԱՏՅԱՆ.— (Ուրախ) Բարի երեկո, բարեկամներ:

ՀՐԱՅՐ.— Բարե ձեզ:

ՌՌԻԲԵՆ.— Բարի երեկո, Արա՛մ ներսեսովիչ:

ԱԶԱՏՅԱՆ.— Լավ է որ երկուսիդ էլ տեսա... Ես այնպես
վարժվել եմ ձեզ միասին տեսնել, որ չեմ պատկերացնում, թե
ի՞նչպես պետք է բաժանվեք միմյանցից... Ծանր է լինելու,
այնպես չէ՞:

ՀՐԱՅՐ.— Այո:

ԱԶԱՏՅԱՆ.— (Ռուբենին) Իսկ դու ինչո՞ւ ես այդպես լենսկո
նման խոսված կանգնել:

ՌՌԻԲԵՆ.— Լենսկո՞ւ:

ԱԶԱՏՅԱՆ.— Կարծես հիմա պետք է երգես... «Что день гря-
дущий мне готовит...»

ՌՌԻԲԵՆ.— Իսկապես, Արա՛մ ներսեսովիչ, ի՞նչ է ոպասում
մեզ վաղը:

ԱԶԱՏՅԱՆ.— Իրոք որ նշանակալից օր է վաղը ինստիտուտի
կյանքում: Ռուբեն Ալիմյան և Հրայր Իսահակյան... Երկու մը-
տեղիմ ընկերներ, որոնք հինգ տարի շարունակ ազնվաբար
մրցակցել են միմյանց հետ... Երկուսն էլ իրենց նախադժեբում
ներդրել են իրենց նվիրական իղձերը, այն ամենը, ինչ-որ սը-
նել է նրանց կյանքը: Մի՞թե այս բոլորից հետո վաղվա օրը
կարող է չժպտալ նրանց:

ՀՐԱՅՐ.— Ես միշտ հավատացել եմ դրան, Արա՛մ ներսեսո-
վիչ, բայց տեսնում եք դարձյալ...

ԱԶԱՏՅԱՆ.— Ես բոլորը գիտեմ, Հրայր: Ժամը քանիսին է կանչել քեզ պրոֆեսոր Ռուժյանցիք:

ՀՐԱՅՐ.— Իննին:

ԱԶԱՏՅԱՆ.— (Նայելով ժամացույցին) Դեռ ժամանակ կա: Մենք միասին կդնանք, ես էլ նրան պետք է տեսնեմ:

ՀՐԱՅՐ.— Շատ բարի: Ես ձեզ գուրոք կսպասեմ, Արամ ներսեավիշ (գնում է):

ԱԶԱՏՅԱՆ.— Լավն է Հրայրը, այնպես չէ... Ուղղակի հիասթափ եմ, թե որքան հավատ ու համառություն կա այդ տղայի մեջ: Եվ գիտեմ նրան ինչն է այդպես թեալորում:

ՌՈՒԲԵՆ.— Ի՞նչը:

ԱԶԱՏՅԱՆ.— Սերը:

ՌՈՒԲԵՆ.— Սերը:

ԱԶԱՏՅԱՆ.— Այո, անզուսպ սերը դեպի մարդը... տեխնիկական անվիճելի առավելություններից բացի Հրայրի մտահղացումն օժտված է մի անզնահատելի արժանիքով՝ հումանիզմով, անսահման հողատարությամբ մարդու նկատմամբ... Չէ որ նա ուզում է գյուրացնել հանքափորի ֆիզիկական ծանր աշխատանքը, բարձրացնել նրա տեխնիկական դիտելիքները, որը վերացնում է մտավոր և ֆիզիկական աշխատանքների տարբերությունը:

ՌՈՒԲԵՆ.— Որն, ինչպես գիտենք, կամուսնիդմին անցնելու հիմնական պայմաններից մեկն է:

ԱԶԱՏՅԱՆ.— Այո... Ուրեմն միայն մեր հասարակարգը կարող էր ծնել մի այդպիսի հանդուգն մտահղացում... (Ռուբենն ապրումների մեջ է): Ինչո՞ւ այդպես մտահոգվեցիր:

ՌՈՒԲԵՆ.— Ոչինչ... Ես ուրախ եմ... Ուրախ եմ Հրայրի համար:

ԱԶԱՏՅԱՆ.— Նաև քեզ համար... Չէ որ քո նախադիժն էլ ուշագրավ է:

ՌՈՒԲԵՆ.— Ինչո՞ւ:

ԱԶԱՏՅԱՆ.— (Շեշտակի նայելով Ռուբենին) Եթե պղնձի հարստացման նորագույն եղանակը կենսական չլիներ մեզ համար, միթե դու կտարվեիր այդ իդեալով... Քեզ իհարկե հայտնի է, որ մեր երկրի ահանավոր գիտնականներն զրադվում են դրանով:

ՌՈՒԲԵՆ.— Այո, զրադվում են:

ԱԶԱՏՅԱՆ.— Նույնիսկ առաջին փորձնական հանքահորն ար-
դեն դորժում է մեղ մոտ:

ՌՌԻԲԵՆ.— Արդեն դորժում է:

ԱԶԱՏՅԱՆ.— Իհարկե:

ՌՌԻԲԵՆ.— Ո՞րտեղ:

ԱԶԱՏՅԱՆ.— Ուրալում:

ՌՌԻԲԵՆ.— Ուրալում:

ԱԶԱՏՅԱՆ.— Այո, և ես համակապես քեզ համար բերել եմ
այդ գծադրերը (տալիս է գծագրերը): Ահա՛:

ՌՌԻԲԵՆ.— (Շտապ նայելով գծագրերին) Սպասեք, այս ինչ-
պե՞ս կարող է պատահել... Մի՞թե Աթանեսյանը...

ԱԶԱՏՅԱՆ.— Աթանեսյանը ի՞նչ:

ՌՌԻԲԵՆ.— Մի՞թե նա չի խմացել այդ:

ԱԶԱՏՅԱՆ.— (Երկդիմի) Հավանաբար չի խմացել:

ՌՌԻԲԵՆ.— Իսկ ինչպե՞ս դուք խմացաք:

ԱԶԱՏՅԱՆ.— Ասում են, ով փնտրում է՝ միշտ գտնում է:

ՌՌԻԲԵՆ.— Երանի՜ թե շուտ տեսնեի:

ԱԶԱՏՅԱՆ.— Իսկ մի՞թե հիմա ուշ է: Չեմ կարծում, թե էա-
կան տարբերություն չենի Ուրալյան այդ հանքահորի և (շեշ-
տով) քո նախագծի միջև... Չէ՞ որ սկզբունքը հույսն է (շեշ-
տակի նայում է Ռուբենին):

ՌՌԻԲԵՆ.— (Ցնցվում է) Նո՛ւյնը:

ԱԶԱՏՅԱՆ.— Իհարկե, մի՞թե մեղ մոտ կարող են լինել տար-
բեր սկզբունքներ: Այլ հարց է, եթե մի այդպիսի միտք հղանար
արտասահմանում, ասենք... Ամերիկայում:

ՌՌԻԲԵՆ.— Ամերիկայում... Իսկ այն ժամանակ ի՞նչ:

ԱԶԱՏՅԱՆ.— Այդ գեպքում կարող էր իրոք խոսք լինել տար-
բեր սկզբունքների մասին:

ՌՌԻԲԵՆ.— Իսկ Ամերիկայում կարո՞ղ էր այդպիսի մի միտք
ծաղկել:

ԱԶԱՏՅԱՆ.— Կարող էր, իհարկե... Բայց ի՞նչ սպասելիք ու-
նենք այն զիտությունից, որը կործանարար ուժ է դարձել, որը
մարդկության բարօրության համար չէ, այլ կողոպտիչ կոմպա-
նիաների ու ֆիրմաների, որից երես են դարձնում առաջադեմ
մարդիկ, Մարտիրոս Մարանջյանի պես աղնիվ մասնագետները...

Մի՞թե լավադույն մտքերի անսպառ շտեմարանը քո հայրենիքը
չէ, ի՞նչու երեսը շրջել դեպի արեւմուտք:

ՌՌԻԲԵՆ.— (Հուզված) Արա՛մ Ներսեսովիչ:

ԱԶԱՏՅԱՆ.— Այո (պաուզա), Ռուբեն, ես վաղուց է հկատում
եմ քո ապրումները, կարծես խիղճդ տանջում է քեզ... Կարծես
մի ծանր ընդհանուրում ես ազատվել... Ուսումնասիրիր այս
գծագրերը, դուցե հենց դրանց մեջ կգտնես քեզ զբաղեցնող
հարցի պատասխանը:

ՌՌԻԲԵՆ.— Արա՛մ Ներսեսովիչ, ես ուղում եմ ձեր հիշողու-
թյան մեջ մնալ որպես աղնիվ մարդ:

ԱԶԱՏՅԱՆ.— Ես այլ կերպ էլ չեի ցանկանա քեզ հիշել: Մի-
շեմ վաղը:

ՌՌԻԲԵՆ.— Մի՞նչե վաղը (Ազատյանը գնում է: Ռուբենը պա-
հարանից հանում է իր նախագիծը և սկսում համեմատել): Միան-
դամայն տարբեր սկզբունքներ: Այո, այո, միանդամայն տար-
բեր (դուռը ծեծում են): Մտե՛ք (գալիս է Աթանեսյանը):

ԱԹԱՆԵՍՅԱՆ.— (Կանգնում է դուռն մոտ) Հաշվումները ճիշտ
են, նախագիծը հիանալի է ստացվել... դե, ստորագրեմ (պաու-
զա, սրտատրոփ սպասում է պատասխանի):

ՌՌԻԲԵՆ.— Ստորագրեցե՛ք:

ԱԹԱՆԵՍՅԱՆ.— Ա՛յ, սա հասկանում եմ... (ստորագրելով նա-
խագիծը): Վաղը ձեզ սպասում է իսկական տրիումֆ... Դե,
մի՞նչե վաղը:

ՌՌԻԲԵՆ.— Գիշեր բարի (Աթանեսյանը գնում է, Ռուբենը նա-
յում է նրա ետևից, ապա մոտենում է լուսամուտին, բացում: Պու-
րակից լսվում է ուսանողների երգի ձայնը. Ռուբենը մի պահ լը-
սում է, ապա նայում գծագրին): Այո, ես կաշտապանեմ... Ես
պետք է պաշտպանեմ:

Վ Ա Ր Ա Գ Ռ Ի Յ Ր

ԶՈՐՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՊԱՏԿԵՐ

(Տեսարան վարազույրի առաջ)

Հրայրն ավարտել է իր դիպլոմային նախագծի պաշտպանությունը, ուսանողները ջերմորեն շնորհավորում են նրան:

ՄԱՐՈ.— Շնորհավորում եմ դիպլոմիդ հաջող պաշտպանությունը:

ՀՐԱՅՐ.— Շնորհակալություն:

ՇԱՀԵՆ.— (ուսանողներին) Ընդունեցեք նորավարտ ինժեներին (ուսանողների նետ դուրս է գալիս Հրայրը): Կեցցեա, Հրայր, նա էլ մեր շարքն անցավ:

ՆՎԱՐԴ.— Այդ ո՞ւմ:

ՇԱՀԵՆ.— Ինժեներներին, էլ ո՞ւմ:

ՆՎԱՐԴ.— Լավ, լավ, մի երևակայիր: Հրայրի պես ինժեներ մեզնից ոչ մեկը չի գտնու:

ՇԱՀԵՆ.— (Ցույց տալով ձեռքի զծագրերը) Այս էլ Ռուբենի զծագրերը:

ՄԱՐՈ.— Բայց ո՞ւր է Ռուբենը:

ՆՎԱՐԴ.— Իսկապես, ո՞ւր է օրվա երկրորդ հերոսը:

ՇԱՀԵՆ.— Ուր էլ լինի, հիմա կգա:

ՄԱՐՈ.— Այսպիսի պաշտպանություն ինստիտուտ դեռ չէր եղել:

ՆՎԱՐԴ.— Գուցե հիմա կլինի:

ՇԱՀԵՆ.— Հիմա՞ Ձէ, ախպեր, ընկերությունը՝ ընկերություն, բայց արդարությունն էլ իր տեղն ունի... Ռուբենը մի քիչ... (նկատելով Մարոյի հայացքը, փոխում է խոսակցությունը): Ես ծրարագիրն էլ լինչ է ծովում...

ՄԱՐՈ.— Ի՞նչ էիր ուզում ասել:

ՇԱՀԵՆ.— Ձէ, ես հենց այնպես... քննադատության կարգով (լավում է երգ): Շատ ուրախ օր է այսօր:

ՆՎԱՐԴ.— Այսօր բոլորն էլ ուրախ են, բացի մեկից:

ՇԱՀԵՆ.— Հա, Ռուսթյանցիք լավ հոտացրեց Աթանեսյանին (գալիս է Արտավազդ Ալիմյանը):

ԱԼԻՄՅԱՆ.— Ռուբենը էստեղ էլ չի:

ՇԱՀԵՆ.— Հիմա կղա, երեւի ծխելու դնաց (Նվարդի հետ դուրս է գնում):

ԱԼԻՄՅԱՆ.— Տեսնենք հիմա Ռուբենս ո՞նց պիտի խոսի:

ՄԱՐՈ.— Լավ կլինի, Արտավազդ քեռի:

ԱԼԻՄՅԱՆ.— Դե որ դու ասում ես, ուրեմն քեզնից լավ ո՞վ պիտի խմանա... Հը՞, հա՛րս ջան, էդ ինչն ու գլուխդ կախեցիր (գալիս է Ռուբենը):

ՄԱՐՈ.— Ռուբեն, գծադրերդ պատրաստ են:

ՌՈՒԲԵՆ.— (Մտացրիվ) Գծադրե՛րը... Շնորհակալ եմ:

ՄԱՐՈ.— Ես հիմա կղամ (գնում է):

ԱԼԻՄՅԱՆ.— (Նայելով Մարոյի ետևից, գլուխը քափամարելով) Ձէ, աչքիս մի տեսակ ես երևում... Չլինի՞ թե...

ՌՈՒԲԵՆ.— Թո՛ղ, հայրիկ, դրա ժամանակը չէ:

ԱԼԻՄՅԱՆ.— Իսկական ժամանակն է... Սրանից լավ օր: Հինդ տարի սպասել եմ էս օրվան, որ տղես չերայոճների մոտ կանդնած՝ իր պրոյեկտը պաշտպանի:

ՌՈՒԲԵՆ.— (Մտազբաղ) Պաշտպանի:

ԱԼԻՄՅԱՆ.— Հա, իմ ամբողջ քրիպաղն է Շամլուդում հետաքրքրվում քեզով: Բոլորը խնդրեցին, որ իրենց անունից շնորհավորեմ քեզ... Ես ու Մադակ ամին էլ մի լավ հովեր ենք պատրաստել... Հը՞, էդ ինչի՞ վրա ես մտածում որդի՛:

ՌՈՒԲԵՆ.— Հայրի՛կ, իմ հախաղժում մի սխալ կա:

ԱԼԻՄՅԱՆ.— (Հուզված) Ի՞նչ... Բո հախաղժ ում:

ՌՈՒԲԵՆ.— Այո, մեծ սխալ... ճակատադրուկա՛ն:

ԱԼԻՄՅԱՆ.— Ո՞վ ասաց... Աթանեսյա՛նը:

ՌՈՒԲԵՆ.— Ոչ, ես եմ ասում:

ԱԼԻՄՅԱՆ.— Դու համոզված ես:

ՌՈՒԲԵՆ.— Այո:

ԱԼԻՄՅԱՆ.— Բա ի՞նչ ես մտադիր անելու... Ո՞ւմ ես ասել դրա մասին:

ՌՈՒԲԵՆ.— Ոչ ոքի:

ԱԼԻՄՅԱՆ.— Դե դեռ, դեռ հայտնիք, քանի ուշ չէ (լավում)

է զանգի ձայն): Կոստ եւ... Գոնե հետաձգիր պաշտպանությունդ:
ՌՌԻԲԵՆ.— Ոչ, հա՛յր, ես այդ չեմ անի:

ԱԼԻՄՅԱՆ.— Որդի՛ս, պետք է ազնիւ լինել... Ամսթ է, մի
խաղա պատվիր հետ:

ՌՌԻԲԵՆ.— Պատվիր՞ս:

ԱԼԻՄՅԱՆ.— Ոչ միայն քո, այլեւ Ալիմյանների, մեր ամբողջ
հանքագործների պատվի հետ:

ՌՌԻԲԵՆ.— Հանգիստ մնա, հայր, ես կպաշտպանեմ այդ պա-
տիւղը (դուրս է գնում, Ալիմյանը գնում է դեպի առաջաբեմը, ուր
հաւաքված են ուսանողները: Բացվում է վարագույրը: Ինստիտու-
տի դահլիճի բեմը, հանձնաժողովի անդամները գրավել են իրենց
տեղերը, բազմուրջան առաջ կանգնած է Ռուբենը):

ՀԱՆԶ. ՆԱԽ.— Սկսում էեք Ռուբեն Ալիմյանի դիպլոմային
աշխատանքի պաշտպանությունը: Խնդրեմ, Ալիմյա՛ն:

ՌՌԻԲԵՆ.— Դուք քիչ ասած լսեցիք Հրայր Իսահակյանի
պաշտպանությունը: Եվ բոլորդ էլ որտանց ողջունեցիք նրան...
Նա իրոք արժանի էր այդ պատվին... Հրայր Իսահակյանի նա-
խադիժը իրապէս հազեցված է մարդասիրությամբ, նրա պաշտ-
պանության ընթացքում ես ամեն մի բանի մեջ տեսնում էի
մարդը, անհուն հոգատարությունը նրա նկատմամբ... Այո, նրա
համար ամենից բարձրը մարդն է...

ԱԹԱՆԵՍՅԱՆ.— Խոսեցեք ձեր նախադիժի մասին:

ՌՌԻԲԵՆ.— Ես խոսում եմ հենց այդ մասին... Այս տարի
գարնանը, երբ Հրայր Իսահակյանն ընտրեց իր նախադիժը, ես
որոշեցի ես չմնայ նրանից... Նախադիժն ընտրելով՝ ես չխորա-
ցաւ էության մեջ... Ես փառք էի որոնում... Ես ձգտեցի բացա-
ռիկության, այսինքն մի այնպիսի նախադիժ ստեղծելուն, որ
ինձ անպայման առանձնացներ մյուսներից... Եվ դրա համար
էի նախադիժի հանքահոր... ամերիկյան սկզբունքով (շարժում
դահլիճում):

ՀԱՆԶ. ՆԱԽ.— Ամերիկյա՞ն... Այդ արդեն նորություն է,
շարունակեցեք:

ՌՌԻԲԵՆ.— Այո, Ամերիկայում աղմուկ հանած՝ պղնձի հա-
րստացման նորագույն եղանակը («Տեքնիքս լայֆ» ամսագիրը
հաճձնում է հանձնաժողովի նախագահին):

ՌՈՒՄՅԱՆՅԵՎ. — Իսկ որտեղից վերցրիք այդ նշանները, Ալիմյան:

ՌՈՒԲԵՆ. — Ես մեղադրում եմ միայն ինձ, ընկեր Ռումյան-
յե, և հաստատ համոզված եմ, որ եթե այդ արատավոր նշանները
տրվեին Հրայր Իսահակյանին, ապա նա անմիջապես կմեքո՞ւր.
զրանք... Ես տարվեցի ամերիկյան այդ սկզբունքով...

ԱԹԱՆԵՍՅԱՆ. — Բայց դուք տարվեցիք լավ գաղափարով:

ՌՈՒԲԵՆ. — Ոչ, ճշմարիտ և լավ գաղափարը հող չի գտնում
այնտեղ: Լավ գաղափարը ծնվում, ապրում ու հաղթանակում է
միայն մեզ մոտ... Չէ՞ որ այդ գաղափարով, անկախ Ամերիկա-
յից, զբաղվել են մեր ղեկավարները, որոնց կառուցած հանքա-
հորը արդեն գործում է Ուրալում:

ԱԹԱՆԵՍՅԱՆ. — Ա՛յ, տեսնում եք, ուրեմն նույնն է և Ուրա-
լում:

ՌՈՒԲԵՆ. — Դուք ինձ դարձյալ չհասկացաք:

ՌՈՒՄՅԱՆՅԵՎ. — (Աքանեսյանին) Դուք այդպես եք կարծում:

ՌՈՒԲԵՆ. — (Մոտենալով գծագրին) Նայեցեք խնդրեմ... Ահա
Ամերիկայից վերցրած սարքավորման էսքիզը... Այստեղ աշխա-
տում են հանքափորները: Պղնձի հարստացման համար վերցնում
են եթերային որոշ յուղերի խառնուրդ, որոնք էժան են նստում
«Վեստ Կոպլե» կոմպանիային: Էֆեկտն այստեղ իբրք որ հաշ-
յական է... բայց կապիտալիստների այդ կոմպանիային միևնույն
է թե այդ յուղերից առաջացած դաղերը փաստում են մարդկանց,
առաջացնում դանդաղ թունավորում... օգտադործել ուրիշ նշա-
ններ ձեռնառել չէ կոմպանիային: Չէ՞ որ մի դոլարով պակաս շահ
կստանա... Բիզնեսը կվտանգվի... Ահա դրա կողքին սովետական
սարքավորումը (ցույց տալով Ուրալյան եղանակի գծագրերը): Այս-
տեղ աշխատանքի սկզբունքը բոլորովին այլ է... Այստեղ սար-
քավորումը և գործադրվող նշանները որոշ չափով թանկ են նըս-
տում մեզ, բայց փոխարենը այդ թանկ նշաններով մենք պահ-
պանում ենք ամենաթանկ կապիտալը՝ մարդկային կյանքը:
Կարծում եմ՝ սկզբունքների տարբերությունը ակնհայտ է... Խնչ-
պես տեսնում եք, իմ նախադրում հաշվի է առնված միայն շահը,
էֆեկտը... Մոռացված է ամենակարևորը՝ մարդը: Այստեղ բան-
վորներն ընկնում են աշխատանքային ծանր պայմանների մեջ...
Իսկ այդ դեպքում արժեք չունի այդպիսի նախադիծը, նրա մեծ

է ֆեկտն ու մնացած բոլոր արժանիքները, որ այդպես հրապուրել
ու շրացրել էին ինձ առաջ... Այժմ պարզ է ինձ համար, որ ու-
րալյան սկզբունքը անեղ մեղադրական ակտ է ամերիկյան սկզբ-
ունքի, հետեւաբար և իմ դեմ, որ կուրորեն հետեւել եմ դրան...
Հիմա ինքներդ դատեցեք, միթէ այս բոլորից հետո ես կարող
եմ պաշտպանել... Բոլոր այն լավ, նվիրական զգացումներից, որ
տվել են ինձ Կոմերիտմիությունը, մեր պարտիան կյանքիս 24
տարիների ընթացքում, արգելում են ինձ այսօր պաշտպանել այս
արատավոր նախադիժը (ուսանողները ծափահարում են):

ՆԱՐԻՆՅԱՆ.— Կեցցէս:

ՌՈՒՄՅԱՆՅԵՎ.— Դե, քանի որ դիպլոմնիկ Ալիմյանը հրա-
ժարվում է իր նախադիժից, ապա գուցե այն պաշտպանի իր դե-
կավարը:

ԱԲԱՆԵՍՅԱՆ.— (Շփոթված) Ե՛ս:

ՆԱՐԻՆՅԱՆ.— (Արանեսյանին) Դե, պաշտպանեցեք:

ԱԲԱՆԵՍՅԱՆ.— Ինչպե՞ս... Ես ձեզ չեմ հասկանում (մտնում
է ինստիտուտի քարտուղարը և մի գրություն տալիս Շարինյանին):

ԱԶԱՏՅԱՆ.— (Արանեսյանին) Կարծում եմ հարցը պարզ է
դրված... Պաշտպանեցեք ձեր աշխատանքը:

ԱԲԱՆԵՍՅԱՆ.— Ներեցեք, ես իմ դիպլոմային աշխատանքը
պաշտպանել եմ որանից քսանյոթ տարի առաջ... Սակայն եթե
որոշ պարզաբանման կարիք է զգացվում, ապա... (մտնում է
գծագրերին): Իհարկե, ինձ անակնկալի բերեց այն ամենը, ինչ
կատարվեց հիմա... Թերևս մենք՝ ես ու Ալիմյանը պետք է ա-
վելի շրջահայաց լինեինք որոշ, այսպես ասած, ոչ տեխնիկական
հարցերում... Ես չեմ վիճում, գուցե և մեր գիտնականների
մշակած ուրալյան վարիանտն ավելի լավ է, մարդասիրական...
Դե, իհարկե, մեր դիտությունն այնքան առաջավոր է, որ ամե-
նեին հարկ չունենք Ամերիկային ընդօրինակելու... Բայց ինձ
թվում է, որ այս մեթոդը (ցույց տալով Բուրենի գծագրերը) որ
մշակված է այնպես սուլիդ կոմպանիայի կողմից, ինչպիսին է
«Վեստ Կոպլե» կոմպանիան, իր գիտա-տեխնիկական լուծումով,
եթե օրինակելի չէ, համենայն դեպս ուշագրավ է...

ՆԱՐԻՆՅԱՆ.— (Պոռկալով) Ինչո՞վ... Ես ձեզ հարցնում եմ,
ինչո՞վ... Գուցե նրանով, որ ձեր գովերգած այդ սուլիդ կոմպանիայի
հանքահորերում իրենց գերեզմանն են դառնում տասնյակ, հար-

յութովոր մարդիկ... Չոհում են կյանքով լի հայրենատենչ աշուպիսի երիտասարդներ, ինչպիսին է պրոֆեսոր Մարանջյանի որդին (դահլիճում շարժում):

ԱԶԱՏՅԱՆ.— Ինչպե՞ս:

ԾԱՌՈՒԿՅԱՆ.— Մարանջյանի որդին:

ՆԱՐԻՆՅԱՆ.— Մեր հարգելի Մարանջյանը հայտնում է, թե չի կարող մասնակցել այսօրվա նիստին, քանի որ տեղեկություն է ստացել, որ «Վեստ Կոպլե» կոմպանիայի հանքահորում մի նոր աղետի հետեանքով, բազմաթիվ մարդկանց հետ սպանվել է ե իր 24-ամյա որդին... Եվ այդ աղետը պատահական չէ կապիտալի աշխարհում, դա նրա տնրածան ուղեկիցն է (Արանեսյանին): Եվ մի թե այս բոլորից հետո դուք դեռ կարող եք պաշտպանել այդ նախազիծը, որի ամեն մի հանքախորշը ներկված է մարդու արյունով... Լսում եք... Լսում եք, որովհետեւ չեք կարող պաշտպանել ցեղային իրավագրելությունը, ինչի դատաւանը, անլուր հալածանքները մարդու դեմ, նոր պատերազմի հրձիգների ջղային զինախաղերը, այսօրվա Ամերիկան, որ քողարկվել է Ադատություն արձանի ետեւում: Ռուբենը խորապես հասկացավ ճշմարտությունը, նա հասկացավ, որ մեզ Ամերիկայից միայն օվկիանոսները չէ, որ բաժանում են: Նա այլ կերպ վարվել չէր կարող, Հայրենիքը այդպես է սովորեցրել նրան: Իսկ ով այդ չի ուզում հասկանալ, նա մեզ հետ լինել չի կարող: Այս երկու գծագրերի դռնեմարտը հանդիսացավ երկու տարբեր աշխարհների, երկու տարբեր սխառնմների բախում, նորի հաղթանակը՝ մեռնող հնի դեմ: Եվ միշտ այդպես կհաղթանակի ամենաառաջավոր, ամենամարդասիրական գիտությունն աշխարհում — Սովետական գիտությունը (ժափահարութուններ):

ՀԱՆԶ. ՆԱԽ.— Հայտարարվում է ընդմիջում, որից հետո հանձնաժողովը կհայտնի իր եզրակացությունը (հանձնաժողովը հեռանում է ձախ դռնով: Ուսանողները շրջապատում են Ռուբենին և շերմորեն շնորհավորում):

ՆՎԱՐԴ.— Շնորհավորում եմ, Ռուբեն:

(Ուսանողները մի պահ լռում են և շեշտակի նայում միայնակ նստած Արանեսյանին, որը նրանց սպանիչ հայացքի տակ՝ տնադմուկ հեռանում է աջ դռնով):

ՄԱՐՈ.— Դա քո խոկական քննությունն էր, Ռուբեն:

ՀՐԱՅՐ.— Իմ սիրելի ընկեր, քո աղնիվ քայլն այնպես հուզեց մեզ, որ բառ չեմ գտնում հիացմունքս արտահայտելու:

ՇԱՀԵՆ.— Սրանից հետո ոչ թուիր, ոչ թվանքը և ոչ էլ ատամային Աթանեսյանը քեզ ոչինչ չեն կարող անել:

ԱԶԱՏՅԱՆ.— Շնորհավորում եմ, Ռուբեն, դու պաշտպանեցիր քո պատիվը, քեզ հետ հաև այն երիտասարդության պատիվը, որ պատիարակված է բոլշևիկյան սղով, դու փայլուն կերպով պաշտպանեցիր քո կյանքի ուղեգիրը (գալիս է Ալիմյանը):

ԱԼԻՄՅԱՆ.— (Հուզված) Ճիշտ է ասված, թե պատիվը երիտասարդ հասակից պետք է պահպանել (Ազատյանին): Շնորհակալություն այդպիսի պատիարակության համար (համբարում է Ռուբենին): Ապրեն, որդիս...

ՎԱՐԱԳՈՒՅՐ

ՎՅՅԵՐՈՐԴ ՊԱՏԿԵՐ

Առաջին պատկերի տեսարանը: Շահենը պատշգամբի հաղաւարտին հասած երգում է. նվաղոր եկտորի հարկից խօսեցնում է համալսարանը, որը կայում է Շահենին:

ՇԱՀԵՆ.— Վա՛յ (բարձրացնելով համալսարանը): Ա՛յ քեզ հոր ընտանեկան մեխանիզացիա:

ՆՎԱՐԴ.— Դեռ շա՞տ պիտի երգես:

ՇԱՀԵՆ.— Ողջ կյանքս:

ՆՎԱՐԴ.— Գոհե պահպանիր հրաշաղեղ ձայնդ ճանապարհի համար, թե չէ տխուր կլինի:

ՇԱՀԵՆ.— Ա՛, խեղապե՛ս, քաջերը դնում են... Դեռ շա՞տ իրեր կան:

ՆՎԱՐԴ.— Այդպիսի հարց կարող է տալ միայն ամուրի երիտասարդը:

ՇԱՀԵՆ.— Սիրելի՛ս, չի կարելի այդքան արագ վերափոխության պահանջել մարդուց... Չէ՞ որ ես դեռ սկսնակ ամուսին եմ:

ՆՎԱՐԴ.— Դե լավ, կսովորես: Ե՛կ վերե, օղնիք ինձ (մտնում է ներս):

ՇԱՀԵՆ.— Իսկույն (գնում է: Պուրակ են մտնում Հրայրն ու Արմանուշը):

ՀՐԱՅՐ.— Հողնեցի՞ր:

ԱՐՄԱՆՈՒՇ.— Ոչ, իսկ դո՞ւն:

ՀՐԱՅՐ.— Օ՛, ես պատրաստ եմ ամբողջ դիշեր այդպես շքեղել քեզ հետ... Ի՞նչի մասին ես խորհում, Արմանու՛շ:

ԱՐՄԱՆՈՒՇ.— Հիմա բոլոր իմ մտերիմները պետք է մեկ-
նեն, ես գրեթե մենակ եմ մնալու:

ՀՐԱՅՐ.— Մենա՞կ... Ոչ, քանի ես կամ, դու այլևս երբեք
մենակ չես մնա:

ԱՐՄԱՆՈՒՇ.— Հրա՛յր:

ՀՐԱՅՐ.— Ես խոսք եմ տալիս (շփոթված և հուզված Արմա-
նուշը փախչում է հանրակացարան: Հրայրը հետևում է նրան:
Գալիս է Մարոն):

ՄԱՐՈ.— Հրացանակիրները պատրաստ են (ներսից լսվում
է). «Պատրաստ են... պատրաստ... պատրաստ ենք» (հանապա-
հի պատրաստուրյամբ գալիս է Ռուբենը):

ՌՈՒԲԵՆ.— Եվ այսպես, բաժանվում ենք, Մարո՛:

ՄԱՐՈ.— (Թախծոտ) Բաժանվում ենք:

ՌՈՒԲԵՆ.— Միայն մի խոսք ասա ինձ, Մարո՛, դու դո՛ւ ես
ինձնից:

ՄԱՐՈ.— Դո՞ւ... ես հպարտանում եմ քեզնով:

ՌՈՒԲԵՆ.— Որքա՞ն էի վախազում լսել այդ քեզնից... Հի-
մա արդեն հանդիստ սրտով կզնամ Ուրալ, հայրենական տեխնիկա-
յի այդ դարբնոցը, որին տենչում եմ ամբողջ հոգով... Եր ու գի-
շեր կաշխատեմ կյանքով լի հանքախորշերում, կտեսնեմ ու կը-
սովորեմ այն ամենը, ինչ որ չէի տեսնում առաջ... Հարուստ
փորձով ու գիտելիքներով զինված կվերադառնամ իմ հարա-
զատ ինտախտուտի հարկի տակ, կպաշտպանեմ մի նոր, բոլո-
րովին նոր նախագիծ... Իսկ այն ժամանակ...

ՄԱՐՈ.— Դու արդեն երազո՞ւմ ես, Ռուբեն՛ն:

ՌՈՒԲԵՆ.— Հիմա ես միշտ պետք է երազեմ... Եվ այլևս
ոչինչ չի կարող շղարշել այս աչքերը... Հիմա իմ առջև բացվել
է մի լուսաշող աշխարհ իր բյուր հրաշալիքներով... Այլևս ոչինչ
չի կարող կոտրել այս սիրտը, որին ջերմացնում է սիրո անմար
կրակը:

ՄԱՐՈ.— Ռուբեն՛ն, սիրելի՛ս, ծանր է բաժանումը, բայց ի՞նչ
արած... վստահ դնա՛ քո ճանապարհով, միևնույն է, մենք կը-
հանդիպենք միմյանց:

ՌՈՒԲԵՆ.— Դու համոզվա՞ծ ես դրան:

ՄԱՐՈ.— Հիշի՛ր, որ ես միշտ հավատում եմ քեզ, ուրեմն
և այդ հանդիպմանը (ավտոմեքենայի ազդանշան):

ՇԱՀԵՆ } Դալի՞ս ե՞նք, դալի՞ս ե՞նք:

ՄԱՐՈ.— Ահա և մեքենան սպասում է մեզ:

ՌՈՒԲԵՆ.— Այո, հիմա հրաժեշտ կտանք խոտիտուտին և հետո էլ՝ միմյանց:

ՄԱՐՈ.— Ես կապասեմ քեզ (հանրակացարանից դուրս են գալիս Հրայրը, Արմանուշը, Շահենը և Նվարդը):

ՆՎԱՐԴ.— Դե, դնացի՞նք:

ՇԱՀԵՆ.— Գնում ե՞նք (նայում է շուրջը): Է, ի՞նչ արած... Մնաս բարե, ուսանողական երջանիկ կյանք:

ՌՈՒԲԵՆ.— (Դեպի հանրակացարանի շենքը) Մնաս բարե և դու, մեր սիրելի օթեան, որ հինգ տարի պատասխարել ևս մեզ քո հարազատ հարկի տակ:

ՀՐԱՅՐ.— (Շահենին) Ինչքան ևս նստել ու երգել այստեղ:

ՄԱՐՈ.— Երգել քո հավերժական սերը:

ՆՎԱՐԴ.— Ինչքան ևս դատկել այս լուսամուտներից (լքվում է ուսանողական երգ):

ՌՈՒԲԵՆ.— Եկեք դնալուց առաջ մենք էլ երգենք մեր սիրած երգը (երգում են):

ՇԱՀԵՆ.— Եկեք դնալուց առաջ երգվենք, իմ աղնիվ բարեկամներ... երգվենք հավերժ երիտասարդ մնալ:

ՀՐԱՅՐ.— Երիտասարդ ու համարձակ:

ՌՈՒԲԵՆ.— Հավերժ երազող:

ՄԱՐՈ.— Միշտ այսպես մտերիմ:

ԱՐՄԱՆՈՒՇ.— Միշտ հարազատ իրար:

ՇԱՀԵՆ.— Եվ թող այս երգը մեր հավերժ բարեկամության երաշխիքը լինի (գալիս են ուսանողներ, ուսանողուհիներ, որոնք հույնպես երգում են):

ՆՎԱՐԴ.— Դե, քնանք, հիմա մեզ սպասում են:

ՀՐԱՅՐ.— Այո, կայարանում մեզ սպասում է ամենածանր հրաժեշտը... մեր սիրելի ուսուցիչները...

ՄԱՐՈ.— Եվ նրանց մեջ է մեր սիրելի ընկեր Աղատյանը... Ինչպես պետք է բաժնվենք նրանցից:

ՆՎԱՐԴ.— Ինչ պետք է ասենք նրանց հրաժեշտի պահին:

ՇԱՀԵՆ.— Ես կասեմ.— շնորհակալություն այն անսահման

հոգատարութեան համար, որ ցուցաբերեցիք դուք մեր նկատմամբ:

ՆՎԱՐԴ.— Քիչ է... Դուք միշտ կմնաք մեր սրտում...

ՄԱՐՈ.— Այդ էլ քիչ է... Ես հուշնիսի չգիտեմ, թե ինչ կարող եմ ասել:

ՀՐԱՅՐ.— Ես կասեի, շնորհակալութեան այն վսեմ դաստիարակութեան համար, որ դուք ավել եք մեզ: Ինչպիսի փորձութեաններ էլ ծառայած լինեն մեր առջև, որքան էլ դժվար լինի կյանքի ճանապարհը, մենք արիարար կհաղթահարենք բոլորը... Դուք այդպես եք մեզ դաստիարակել:

ՌՌԻՖԵՆ.— Իսկ ես կավելացնեի... Մեր սիրելի ուսուցիչներ դուք ձեր անձնական օրինակով սովորեցրիք մեզ սիրել մարդուն, սիրել հայրենիքը, նրա անեղբ հորիզոնները, այս հարազատ երկնակամարը, որի վրա այնքան աստղեր են շողում... մենք դեռ կիջեցնենք դրանք... Չէ՞ որ այս աստղերը մերն են (երգն ուժեղանում է):


ՎԱՐԱԳՈՒՅՐ



Պատ. խմբագիր՝ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Տեխ. խմբագիր՝ Ա. ՕՀԱՆՅԱՆ
Կոնտ. սրբագրիչ՝ Վ. ԴԱԲԵՍՅԱՆ

ՎՖ. 03638: . Պատվեր 225: Տիրաժ 3000
Հանձնված է արտադրության 31—VIII 1949 թ.
Ստորագրված է տպագրության 19—IX-1949 թ.

Հայտնվելու ֆիրմայի վարչության Գրքի տան տպարան
Երևան, Տեբյան 91, 1949 թ.



41 8 2317

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220028234

ԳԻՆԸ 3 Թ.

